

Բ Ա Գ Ի Ն

Հ.Ա. ՏԱԻԻ 1972 ՄԱՐՏ
digitised by A.R.A.R.@

Թ Ի Ի 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ն. ՊԵՇԻԿՓԱՇԼԵԱՆ	Հրաշարուք պատմութիւն Ռուքինեանց
Բ. ԿՌԱՆԵԱՆ	Ալիսիա Կիրակոսեանի հետ
» »	Գէորգ Էմբի հետ
Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ	ՄԷԿ վայրկեան յատնկայս լռութիւն
ՇԱՀՊԱՆ	Ծս սիրացայ
Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ	Կը վարժուիս, Տիկին Գուրնայոս
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Անծանօթիմ
Յ. ԶՈՐԵՑԻ	Հայկական ուղեւորավեց
Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Երկար ու անուան գիշեր
Վ. ԶԱՆՈՅԵԱՆ	Ահարկու աթոռակներ
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Զմեռնային հեփաթ
Ք. ՃԻՆՊԱՇԵԱՆ	Աւերակները
Խ. ԱՅՈՅԵԱՆ	Զուգահեռի առանցքէն
ՆԱԶ Տ. ՍԱՐԳԻՍԵԱՆ	Հեռաձայնը լռեց
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Ամէնօրեայ հայոց պատմութիւն
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	Մեռելաբազի օրագիր
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Շիտակ ճանապարհը
Ս. ՓԱՆՌՍԵԱՆ	«Անմիջական գրականութիւն»
Լ. ՄԿՐՏԶԵԱՆ	«Անմիջական գրականութիւն» ժողովա- ծուի մասին

Վկայութիւններ՝ «Բագին»ի տասնամեակին առիթով

Բազմը

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ճ.Ա. ՅԱՐՆ. ԹԻՒՅ

Կ Ա Ր Ց 1 9 7 9

ՊԵՐՈՒԹ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԱՇԼԵԱՆ

ՀՐԱՇԱԼՈՒՐ ՊՍՏՄՈՒԹԻՒՆ ՈՒՒԲԻՆԵԱՆՑ

ՋՄԱՅԼԵԼԻՆ ՋԱՊԵԼ ԹԱԳՈՒՅԻ,

ՀԱՆՃԱՐԵՂՆ ՀԵԹՈՒՄ ԱՐԲԱՅ

ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆՏՐԱՆԻ



Լեւոն Մեծազործ կատարած էր սքանչելազործութիւններ, թէ՛ ներքին, թէ՛ արտաքին յաղթանակներով:

Եւ իր անունը այնքան տիրացած էր հռչակի, որ օտար երկիրներու մէջ Հայկիրիկեան իր անունով սկսած էր կոչուիլ Լեւոնիա, երկիր Լեւոնի:

Բախտը բաշխած էր իրեն բարձունքներ, որոնցմէ գլխաւորն էր իր թաղաւորանալը:

Սակայն, Բախտը մէկ բան զլացած էր իրեն. բան մը էական, որով միայն կարելի էր շարունակել հարստութիւնը Ռուբինեան: Ժառանգ մը զահու:

Վերջապէս, Բախտը բարեհաճեցաւ մասամբ գոհացնել Լեւոն արքան եւ հայրենասէր աւագանին, ծնունդ տալով աղջիկ զակի մը՝ Ջապէլ զուարթունի, 1216ին, երբ հայր Լեւոն հասած էր հասուն տարիքի, ու կը պատե-րազմէր, տակաւին տառապելով օտարիկ յոգացաւէ:

Ոնդութիւնը խոր եղաւ պայտսին մէջ, քանզի Լեւոն Մեծազործ կ'ու-

նենար դա՛ստատանդ: Անշուշտ այդ բախտառաջ բերկրութիւնը պիտի ըլլար կրկնակի, եթէ ծնածը բլլար արու, մանչ գաւակ մը, կատարեալ կոշուածով դա՛ստատանդի:

Փոքրիկն Չապէլ իշխանուհին հոսմեայ էր, երբ վախճանեցաւ իր թագաւոր Հայրը (1219):

Չապէլի ծնունդով ծիրանեզոյն զուարթութեան լոյս մը ծագած էր թէ՛ պալատին, թէ՛ ոտանին, թէ՛ երկրին մէջ:

Լեւոնանոյշ Չապէլ թէ՛ գեղանի էր, թէ՛ խելանի:

Ուրախ ու Հպարտ էր անշուշտ Լեւոն արքային թագուհի կողակիցը, դիխոյ Սիպիլ, իր աղջնակին մէջ ողջունելով ապագայ բամբիւլը, որուն գրբխիկն վրայ կ'երեւէր բախշ մը ոսկի:

Լեւոն Մեծագործ, երբ տակաւին անժառանգ էր, որոշած էր, որ իրեն յաջորդէ Ռեմոնտ Ռուբէնը: Եւ աւագները երգուեցուցած էր, որ Հաւատարիմ ըլլան Ռուբէնի: Սակայն, երբ Ռուբէնը Հաստասեց Անտիոքի աթոռին վրայ, ու տեսաւ տնոր ապերախութիւնը, սկսաւ վարանիլ, վստահութիւնը վերցած ապիրատի մը վրայէն:

Չապէլի զուարթարար ծնունդէն ետքը, աւուպանին դիմեց թագաւորին, ու Համարձակածայն խնդրեց, որ դատրիկ Չապէլը վերածուի գահաժառանգի: Աւագանին ըսաւ.

— Տէր արքայ, սիրանունդ դատրիկն արա տէր ժառանգութեան քո, եւ լոյծ զերզումն մեր, զոր արարեալ եմք Ռուբէնի, եւ կապեա՛ ընդ դատեր քո, եւ Մեք ծառայեմք նմա՝ որպէս արու դասակի:

Թագաւորը իր Համաձայնութիւնը յայտնեց աւագանիին, եւ Չապէլ պաշտօնապէս Հռչակուեցաւ դահաժառանգ Հայակիլիկիոյ:

Լեւոն Մեծագործ ամուսնացած էր Իդապէլի (Սիպիլ) Հետ, որ դուստրն էր Ամորի, Թագաւոր Կիպրոսի:

Ամուսնութենէն տարի մը առաջ, դահաժառանգ Հռչակած էր այդ Ռուբէն Ռեմոնտը, եւ երդում պահանջած (եւ ստացած) աւագանիէն, որ իր մահէն ետքը, Հպատակին անոր, Հաւատարմութեամբ, Հնազանդութիւնով:


Չապէլ երբ Եռամեայ էր, Լեւոն արքայ նշանակեց երկու պայլ (խնամակալ) իր դատեր Համար.— Սիր Ատանը եւ իր քեռորդի Կոստանդինը: Մին անձի, ու միւսը ինչքի պահպանութեան Համար: Ու Լեւոն Մեծագործ նոյն տարին կը վախճանի:

Տարի մը ետք, Ռուբէն Ռեմոնտ գտնելով իրեն կուսակիցներ, կը Հանայ ախրանալ թագին, սակայն, կը պարտուի շարաշար, ու կը դերուի ու կը բանտարկուի:

Նոյն տարին, կը վախճանի Յովհաննէս կաթողիկոս: Կը սպաննուի պայլ Սիր Ատան: Կ'իշխեն երկու Կոստանդիններ. առաջինը պայլ, իսկ երկրորդը՝ Կոստանդին Ա. Բարձրբերդցի, կաթողիկոս:

Չապէլ, երբ թեւակոխեց իր եօթներորդ տարին, պայլ Կոստանդին եւ կաթողիկոս Կոստանդին, ինչպէս նաեւ աւագանին սկսան մտածել փեսացուի մասին: Տիրութեան տենչ ունեցողները կը ցանկային Չապէլին: Իշխանազուններ, սպսեաներ Հեծած երիվարներու վրայ խօլարշաւ կը գառնային Սիսի կատարը կառուցուած արքայական պալատին շուրջը, եւ իրենց արծիւի ակնարկը կ'որոնէր Չապէլը, Հագիւ եօթնամեայ: Թեկնածուները թագաւորութեան տենչով կը տոչորէին:

Ընտրութիւն կատարելը բարդ էր:



Հնարութենէ մը պիտի ստեղծուէին համակրութիւններ ու հակակրութիւններ: Ուրիշ ընտրութենէ մը շահեր ու միաժամանակ վնասներ:

Վերջապէս, միաժամանակ հաւանութեամբ կու տան որոշում մը, որ անհաւասար պիտի թուէր Մեծագործի ողջութեան ատեն:— Զապէլը ամուսնացնել Տրիպուսոյ կրտսէ՝ Պեմոնտ Գ. լատին իշխանին որդւոյն Ֆիլիպին, որ տասնութնամեայ էր: Ֆիլիպի ծնած էր Տրիպուսոյ տիրոջ առաջին կնոջ՝ Ժէն: Հայրը հակառակ էր Ռեմոնտ Ռուբէնի:

Աւագները այս ընտրութիւնով մեծապէս կը յուսային խնամութեամբ սիրաշահիլ Միտանի առաջին ոտքը, տէրը Տրիպուսոյ, մտրելով Հուրր անուրթեան: Կը յուսային նաեւ վայելել պաշտպանութիւնը Յաշակիւններուն (որոնք տուն աւել եղած էին Մերձաւոր Արեւելի մէջ, մոռցած Երուսաղէմը ազատագրելու իրենց պատրուակը), այլապէս անհնար յարձակումներու պարագային:

Ֆիլիպի թաղապետացաւ (1221), իբրեւ օգնական մանուկ թաղուհիին: Հայ աւագները անհրաժեշտ պայման դրին Ֆիլիպին, «հայենակ կենալը, ու ղեկեղեցին եւ դստիւն հայենակ տանիլ», այսինքն՝ լատին Ֆիլիպը պարտաւոր էր պահպանել արքունական եւ եկեղեցական աւանդութիւնները հայկական, ամէն ինչ վարել, ըստ հայ ազգային ծէսերու, եւ երբեք չզործադրել լատինական ծէսեր, սովորոյթներ:

Ֆիլիպի հանդիսաւոր կերպով կատարեց պահանջուած երդումը, որուն հաշիւ կրցաւ հաւատարիմ մնալ երկու տարի: Դրժեց, դաւանանեց, թելադրութեամբ օտար մոլեռանդ կրօնաւորներու, որոնք իբր թէ էին քրիստոնեայ: Մոլեռանդութիւնը հակասութիւնն է քրիստոնէական ոգին: Մոլեռանդութիւնը ըլլալ գործադրուած կրօնականներու կամ աշխարհականներու կողմէ, ծանրապէս կը վիրաւորէ քրիստոնէական ոգին: Մոլեռանդութիւնը առաւելապէս դաւանական դաւ է:

Անտիոքի Յաշակիւններուն եւ Կիլիկիոյ հայ աւագապետներուն միջեւ մահացու պայքար մը կար, որ վերջացաւ Անտիոքի Յաշակիւններուն յաղթանակով, որուն հետեւանք էր Ֆիլիպին բարձրանալը Հայկիլիկիոյ գահուն վրայ: Ֆիլիպին նպատակն էր վերջ տալ Հայոց տիրութեան եւ Կիլիկիան ընել գաղութը Անտիոքի:

Մոլեռանդները կը դաւէին անդադար: Մոլեռանդները սեւ եւ մտքով ու հոգիով, եւ անոնց գործունէութիւնը կը դիմէ կարմիրին, այսինքն՝ արիւնին, եւ դայն կը հոսեցնեն առատօրէն: Մոլեռանդները անդադար կը սեւադործեն ու կը կարմրագործեն, խրչելով զոհեր ո՛չ միայն այն ժողովուրդէն, որուն դէմ կը դործեն, այլեւ իրենց գործիք զարձաններէն: Իրենք ալ յաճախ կը մահանան խայտառակաբար, առնուազն բարոյապէս:

Մոլեռանդները իրենց պատկանած խմբակցութեան ի նպաստ գործելէ աւելի, դայն կը վարկարեկին ակամայ:

Ռեւէ խղճամիտ կամ ողջամիտ անձ, չ'ըլլար մոլեռանդ, որ ունի նեղ միտք եւ համր խիղճ:

Ֆիլիպի ժառանգականօրէն անկարագիր, դիւրութեամբ գործիք դարձաւ օտար ու մոլեռանդ կրօնաւորներու ձեռքերուն մէջ, ու մասն ծուռ ճամբայ, ու դնաց մինչեւ կորուստ:

Ամուսնութենէն երեք տարի ետքը, երբ եղած էր քսանամեայ, փորձեց իշխել ինքնազուտի, շեղելով հայկական սովորութիւններէն, հետեւելով իր հայրենակիցներու բարքերուն, հետզհետէ եղաւ կատարեալ դրուժան,

մտացած իր երգումը: Հայ աւագները յաճախ զգացուցին իրեն, որ կը խոտորի իր ուխտէն, ոսկայն Ճիլիփ ենթարկուած էր կրօնական ու աշխարհական լատին մոլեռանդներուն, որոնք անդադար կը դրդէին զինքը:

Պէտք է, որ վերին վարիչները վտարեն կամ զոնէ սանձեն մոլեռանդները, իբրեւ վնասարար տարրեր, եթէ անշուշտ իրենք չեն զանոնք մղողները մոլեռանդութեան, որ պատճառ կ'ըլլայ որ ստեղծուին Հակահռոտանքներ, արինայի Հակամարտութիւններով անխուսափելի:

Ակնարկ մը բաւական է միջազգային պայքարներուն վրայ, Համոզուելու Համար մոլեռանդութեան կոտորած ողբերգութիւններուն:

Մոլեռանդութիւնը մշտական մեծ աղէտ մըն է մարդկութեան Համար: Գաւազիլը դաստիարակութիւնը ու բուն փրփականար կը ստեղծեն զայն: Ամէն տեսակի մոլեռանդութիւնները միշտ վնասակար եղած են ամէն մէկ կողմին:

Մեր դարուն, դժբախտարար, դեռ կը շարունակուին մոլեռանդութիւնները, արինահնդութիւններով եղբայրասպան եւ Հակասակ Հրաւէրներուն, Համաժողովներուն միութեան ու սիրոյ:

Գաւազիլով Ճիլիփին, ըսենք, որ ան չզոհացաւ ուխտազանցութեամբ, այլ սկսաւ կողպտել զանձը արջունի: Եւ զողօնները փախցնելով փոխադրել Անտիոք:

Համբերութեան բաժակները յորդած էին, եւ երեկոյ մը Հայ աւագները զայն բաժնեցին թաղուհիին ժոցէն, եւ արգելափակեցին թիւ Համարնի մէջ, պահանջելով, որ ետ բերել տայ իր զոյցածները: Ի վերջոյ, Ճիլիփ պատժուեցաւ, սպաննուելով բանտին մէջ:

Լատինասէր կարգ մը Հայ ազնուականներ ալ, որոնք զործակցած էին Ճիլիփին, եղան շնորհազուրկ, Հեռացուելով պալատէն ընդմիշտ:

Ճիլիփ կ'ուզէր Զապէլն ալ փախցնել Անտիոք, սակայն, աշաւրջի կը Հակէին Հայ Հայրենասէր Եւսեփները, ու Ճիլիփն է, որ փախցուցին, փոխադրել տալով տարտարոս:

Կոստանդին Երկրորդ անդամ անուանուեցաւ պալլ (1223): Այս անգամ, սակայն, յիսգօր պալլ էր, որովհետեւ ո՛չ միայն խնամական էր թագուհիին, այլեւ ամողջ տէրութեան:

Ենթահարկի ըրաւ նաեւ նեղմիտ քանի մը կրօնաւորներ, որոնք միացած էին դաւադիր մոլեռանդներուն:

Սկիզբը, Զապէլ փախաւ Սիսէն ու պալատէն: Յիմարաբար սիրած էր Ճիլիփը, այնքան Հակակրեւի: Զապէլ փախաւ Սելեւհիա դղեակը, վանք մըսնելով՝ քոյր ըլլալու Համար:

Կոստանդին պալլ զայն ետ բերաւ:

Վերջապէս, Հայոց պարտները, թիւով եօթնասուն, գլխաւորութեամբ Կոստանդինի եւ խորհրդակցութիւնով կաթողիկոսին, ինձամեայ թագուհիին փեսայու ընտրեցին պալլ Կոստանդինի կրտսեր որդին, Հեթումը, որ էր զեղեցիկ, կայառա, անձնեաց:

Հարոսանկան Հրաւէրներ առաջուցան ամէնուրեք:

Տարսն, 1226 Յունիս 14ին, Պալատահարմար բազմութիւն ակմբուած էր մայր տանարին մէջ: Ներկայ էին կաթողիկոսն ու բարձրաստիճան եկեղեցականներ, Հայ ազնուականներ, օտար պետութեանց ներկայացուցիչներ եւ Հարիւր Հազարուոր ժողովուրդ: Քաղաքը դրօշազարդուած, զորդադարդուած ու տերեւներով եւ ծաղիկներով պծուած էր, իսկ մայր եկեղեցին կը շողողար լոյսերով եւ ոսկեճամուկ զգեստներով:

Պսակի արտրոդուքիւնը կը կատարէ կաթողիկոսը, օծելով Հեթումն ու Զապէլը թագաւոր, թագուհի :

Եկեղեցական երգերը շատուանեցին հայ ոտիակները : Երբ հարսանեկան թուփօրը ելաւ տանարէն, հարսին ու փեսին մօտաւոր աղջականները սկսան ժողովուրդին վրայ տարափել մարդրիտ ու ոսկի : Ժողովրդական ցնծութիւնները տեւեցին քառասուն տիւ եւ դիչեր, ճիշդ հեքիաթներու մէջ կատարուող տելոդուքեամբ :

Ամէն կողմէ աշխարհի՝ ղրկուած էին թագեր, թուղթերով սիրոյ : Ակնառու էին մոնկոլ մեծ խոն Հուլաղուի ղրկած շքեղ թաղերը, ամբողջովին աղամանդակուո :

Զապէլ թէեւ սկիզբը յօնքերը պոստելով կը նայէր Հեթումին, իր սըրտին մէջ պահած Փիլիփը : աղղուած սաղրանքներէն սեփական մօրը, որ հայ չէր, այլ օտար էր :

Սակայն, հետզհետէ համողուեցաւ, որ Հեթում թէ՛ համեստ է, թէ հանճարեղ է եւ յոյժ համակրելի :

Զապէլ, տտն մը ետքը, լեցուեցաւ կաթոգին սիրով հանդէպ Հեթումին, եւ բախտաւորուեցաւ երեք ուտարերով եւ հինգ ղոռատրերով :

Հեթում եւ Զապէլ բլլալով հանդերձ հայր ու մայր, նաեւ թագաւոր ու թագուհի, եղան ուսանողներ, նուիրուելով ընդհանուր զարգացումի : Ունեցան վարպետ վարդապետներ իրրիւ ուսուցիչ, եւ հմտացան լեզուներու, կրօնագիտութեան, պատմութեան, եւայլն :

Կոստանդին եղաւ թագաւորահայր եւ աւագազոյն պարօն : Ինք կը յանձնանէր ամբողջ պետութիւնը՝ իր սաղանգով, տիրութեամբ :

Իր որդիներուն յանձնեց կարեւոր պաշտօններ, պահելով պետական ղործերը հաւատարիմ հարազատներու հովանիին ներքեւ :

Անդրանիկ զաւակը, Սմբատը, անուանեց զունդատապլը (սպարապետ) : Սմբատ ամբողջ կէս դար վարպետօրէն վարեց այդ պատասխանատու պաշտօնը, եւ մեռաւ մարտի մէջ, 1276ին, իր եղբորորդի Լեւոն Բ-ի թագաւորութեան շրջանին :

Երկրորդ ուտարը, Բարսեղը, ձեռնադրել տուաւ հոգեւորական, որ եղաւ վանահայր Դրազարիի եւ արքեպիսկոպոս Սիւսի :

Երրորդ որդին, Լեւոնը, կարգեց մարաշխտ եւ անուանեց Վիլխան իշխանաց :

Չորրորդին պարգեւեց պատիւ պայլութեան, անոր յանձնելով բերդը Կոտիկոսի, որ գրաւուած էր ապստամբ Վահրամի կողմէ :

Եւ այսպէս, թագաւորահայր Կոստանդին հաստատեց իր տիրութիւնը, բովանդակ երկրին մէջ, առանց բիրտ ուժի, առանց բռնակալութեան : Ոչ ոք ժպրհեցաւ ձայն հանել զժգոհութեան : Շարունակուեցաւ թագաւորութիւնը Լեւոն Մեծագործի շրջանի փառքով ու զօրութեամբ : Եւ երկրին մէջ կը տիրէր բարօրութիւն :

Սկսաւ բարեւաւել յարարերութիւնները դրացի մահմետական պետութիւններու եւ խաչակիր կոմսութիւններու եւ թագաւորութիւններու հետ :

Իր ուշիմ քաղաքականութեան գիծը շարունակուեցաւ եւ աւելի պարպացաւ իր կրտսեր թագաւոր զակին, Հեթումի կողմէ, որ զիւանազրտական խոհեմ բանակցութիւններ վարեց այն շրջանի աշխարհակալ մոնկոլ ազգին զօրավարներուն . եւ խաներուն հետ, Հայապիլիկիան փրկելով մոնկոլական մտանդէն :

Մոնկոլներուն հետ զիւանազրտական բանակցութիւններ տեղի ունե-

ցան երեք անգամ, որոնց առաջինը վարեց, 1243ին, Կոստանյին պայլ, զըլ-
խաւորած հայ պատուրակութիւնը, որ յաջող գործ կատարեց Կեսարիոյ մէջ,
Կովկասի մտնելու զօրքերուն պիտաւոր հրամանատարին հետ: Ապա, բանակ-
ցութիւններ, Գարազբունի մէջ, միշտ բարեկամական:

Հեթում հասակ նետած էր, որով՝ հետզհետէ թալաւորութեան զեկը
ձեռք առաւ, միշտ ունկնդիր էր հօր խորհուրդներուն:

Հեթում, 1226-27ին, ստիպուած կ'արշաւէ դէպի սահմանը սուլթա-
նին Իկոնիոյ:

Կր հիմնէ, 1227ին, ի Սիս, Ս. Սոփիա նախագաս արքունական եկեղե-
ցին, որ Կոստանդնուպոլիս՝ Յուստինիանոսի կողմէ կառուցուած համանուն
հրաշակերտ տաճարին նմանութեամբ շինուեցաւ: Աստուածային իմաստու-
թեան նուիրուած այդ եկեղեցին՝ բարի արքան շինել սուաւ խնամքով խղ-
ճամբա ու սիրով շէրմեռանդ:

Աղօթատեղին կառուցուեցաւ երկայն ու կամարաշէն, կանգնած շրք
սիւներու վրայ: Նսկայ, օրրատաշ վէմերով եւ ազուցեալ կապարով: Գմբէ-
թայարկ էր աւազ սեղանը: Կային տակաւին երկու սեղաններ ալ, որոնց վը-
րայ էին վերնատուններ, որոնցմէ երկուքը ունէին, իրենց վերին մասերուն
վրայ, սեղաններ: Գլխապիր երկաթապիրներով փորապրուած էին անուննե-
րը Հեթումի եւ այլոց: Զանգակատունը բարձր էր ու քառանկիւն: Իւրաքան-
չիւր կոյսը կրկնակ լուսամուտ ունէր: Տաճարին կից կար մատուռ: Հրաշա-
կերտ մըն էր Ս. Սոփին, ուր կատարուեցան մեծափառ արարողութիւններ
եւ հանդիսութիւններ, շքեղութեամբ արեւելեան:

(Եգիպտացիք, 1266ին, հրդեհեցին քաղաքն ու եկեղեցին):

Եւ ահա դէպքեր, ժամանակագրական կարգով.

Հեթում, 1228ին, նորոգել տուաւ պարթապ Տարսոնի:

Ալաէտաին սուլթանը, 1228ին, կը դրաւ Գերմանիկոսը եւ Ալայան:
Կոստանդին Լամբրոնացի կը զինակցի սուլթանին, ընդդէմ հայոց:

Հալէպի սուլթանը 1235ին, կը փորձէ զրաւել Պաղրաս բերդը, սա-
կայն, չի յաջողիր:

Տիտանեան ասպետներուն կը նուիրէ, 1236ին, Հաբան բերդը:

Նոյն տարին կը ծնի Հեթումի անգրանիկ որդին, որ կը կոչուի Լեւոն:

Հոռմի պտպը թուղթ կ'առաջէ, 1237ին, Հեթումի եւ անոր հօրը,
թեւադրելով, որ շնեկն Կոստանդին Լամբրոնացին: Պտպը պաշտպան կը
հանդիսանար դաւաճանին, որ իր անարդ արարքէն հոջը, Կովարա բերդը
նուիրած էր Ասպետներուն Հիւանդանոցի: Վախէն, կարօտ՝ պաշտպանու-
թեան:

Սուլթան Ալաէտաին իր մայրն ու քոյրը կը դրկէ Հեթումին, խնդրե-
լով անոնց պահպանութիւնը: Սակայն, թաղաւորահայր Կոստանդին զանոնք
կը յանձնէ ժոկոտներուն: Անշուշտ այս սեւ բիծ մըն է Կոստանդինի հոգիին
վրայ: Եւ արարք մըն է հակահայկական:

Կոստանդին կաթողիկոս, 1238ին, ասորիներու կաթողիկոսին հետ կ'եր-
թայ Երուսաղէմ, ուխտի:

Հեթում եւ Զապէլ, 1238ին, Սիսի հիւսիսակոյսը կանգնել կու տան
ընտանեկան ամարանոց:

Զապէլ թաղուհի շինել կու տայ հիւանդանոցը Սիսի:

Թաղաւորահայր Կոստանդին կ'երթայ Կեսարիա, վասն դաշնակցու-
թեան ընդ սուլթանին: Հեթում դրամ կը հատոնէ իր եւ սուլթանին անուն-
ներով:

Հեթում, 1244ին, գեսպան կ'առաջէ Պաճու Նոյին, յայտնելով Հա-
յասարմութիւն:

Սուլթանը, 1245ին, օգնութեամբ դաւանուն Կոստանդին Լամբրոնա-
ցիի, կը խլէ Պոսկանան:

Հեթում, Նոյն տարին, կը Հաստատէ դաշն վաճառականութեան, վե-
նետիկցիներուն հետ:

Հայ զօրքը, 1246ին, կը Հարծէ ասպատակները սուլթանին, կողմերը
Կուկլակի:

Նոյն տարին կը մահանայ Ալաէտտին, Կարնորոսի մէջ:

Հեթում, 1247ին, կը պրակէ բերդը Պոսկանա:

Իր եղբայր Սմբատ զուստասապը, 1247ին, կը զրկէ Սմբղանդ, մոն-
ղոլներու խանին:

Հեթում, օգնութեամբ մոնղոլներուն, կը վանէ իկոնիանցիները, եւ կը
զրակէ վրանը սուլթանին: Յրանք ասպետները Հիանալով Հեթումի հերոսու-
թեանց, Հետը կը գիտակցին:

Հակառակութիւն մը կը ստեղծուի Հայոց եւ անտիօքցիներու միջեւ
(1249-50): Ս. Լուսավիթ կը միջնորդէ եւ կը յաջողի հաշտեցնել Հեթումը՝
Պեմոնդ Ե.ի հետ:

Կոստանդին, տէր Լամբրոնի, կը սպանուի (1250), ստանալով պատի-
ժը իր դուստանութեանց, ասպատարութեանց եւ մատնութիւններուն:

Հեթում իր Ֆիմի դուստրը կու տայ կնութեան, Սիդոնի տէր Յու-
լիանոսի:

Մահ՝ Ջապէլ թագուհին (1252, Յունուար 22): Կը թողուի Դրա-
դարկ: Անտարակոյս ազգային մեծ ու սրտազին սուլդ:

Երբ Ջապէլ թագուհին ծանր հիւանդ՝ կը դանուէր մէջն անկողնոյ,
Հայակիլիկոյ տմբողը բնակչութիւնը համերգի մէջ էր ազօթքի: Այդ հա-
մերդին մէջ ուժեղ կը հնչէին ձայները հիւանդներուն, որբերուն, այրիե-
րուն, ծերունիներուն: Իսկ իր սնարին շուրջը զինքը պաշտումով պաշարած
էին թագուոր մոնուսիը, զաւակները, աւագներ, սիրիկիներ, որոնք լուե-
հայն Երկնաւորէն կը պաղատէին, որ հիւանդութիւնը հրաշքով բուժուի:
Սակայն, Հասած էր ճակատագրական պահը վախճանման:

Ու Ջապէլ թագուհին կամ Ջապէլ սրբուհին աւանդեց հողին:

(Լեւոնանոյշ Ջապէլ թագուհիով կը վերջանայ Հարստութիւնը Ռու-
բինեան, իսկ Հեթումով կը սկսի Հարստութիւնը Հեթումեան):

Ատորիներու Իզնատիոս կաթողիկոսը կը վախճանի 1253ին, իր ջորին
ու երկու Հարիւր ոսկին կտակած Հեթումի:

Մարքոս Միանի դքսորդին, 1253ին, պարգեւեց Հայոց՝ տուն մը, Վե-
նետիկի մէջ:

Հեթումի Սիպիլի դուստրը, 1254ին, կը պսակուի Պեմոնդ Զ.ի հետ:

Հեթում կը ճանապարհորդէ: Կը մեկնի մոնղոլներուն մօտ, ընդունուե-
լով մեծամեծ պատիւներով: Բազմաթիւ շնորհներ կ'ընդունի ջրխատնէից
Համար: Աւետիսը կը հաղորդէ գիրով իր հօրը, որ սարքել կու տայ Հանդէս-
նոր հրճուանքի:

Հոյակաւոր ճանապարհորդ Ռիւարիք կ'այցելէ Սիւս, ու կը մեծարուի
Հայոց արքունիքին մէջ (1255):

Հեթում կը գիտակցի Հուլաղու խանին, 1255ին:

Վերջապէս, կը վերադառնայ Հայրենիք, հանդիսութեամբ համազգա-
յին (1256, Յունիս 5): Ազգաժողով կատարելով կ'արշաւէ Առակլիս:

Նոյն տարին, իբրև զինակից, Հուլաղու խանին կը զրկէ քառասուն հազար հետեւակ եւ տասներկու հազար ալ այրուծի:

Հեթում, 1259ին, կը մեկնի Տրիպոլիս, իր փեսան հաշտեցնելու այն իշխաններուն հետ, որոնք իրարմէ հեռացած էին զժտութեամբ:

Նոյն տարին կ'երթայ Ուռհա, Հուլաղուի մօտ, յանուն նուազման Բերիոյ:

Կը ժառանգէ Բերիան 1260ին ու մասամբ կը տիրանայ աւարին:

Իր Ռիթա դուստրը կ'ամուսնացնէ 1261ին, Կոստանդինի հետ, ժառանգ Սարուանդիքարի:

Կը վանէ գարամանցիները 1262ին, եւ կը զերծուցանէ բերդը Մանին:

Նոյն տարին, մոնղոլներու օղնութեամբ, կը զերծուցանէ Անտիոքը, եգիպտացիներու ձեռքէն:

Հեթում կ'արշաւէ Այնթապ, 1262-63ին:

Մահ՝ արքայահայր Կոստանդինի (1263):

Նոյն տարին կ'երթայ Գաւրէժ, Հուլաղուի մօտ, ժողովի:

Կ'ստացատակէ շրջակայքը Բերիոյ: Կը դառնայ աւարով:

Կը գրաւէ Մարաշը, 1266ին:

Նոյն տարին, կ'երթայ մոնղոլներու զօրավարին, ի խնդիր օղնութեան, բնդդէմ Պիղարոս, որուն զօրքը մտած էր հայոց սահմանէն ներս: Պատերազմ՝ Կը մեռնի Թորոս արքայորդի: Գերութիւն Լեւոնի: Աւեր Ստոյ: Սուգ Հեթումոյ:

Եգիպտացիք կը պաշարեն Սարուանդիքարը, սակայն, չեն յաջողիր գրաւել:

Յայտնութեան տօնին, 1267, առաջարկ զերեթափութիւն Լեւոնի:

Վախճանում Կոստանդին կաթողիկոսի:

Հեթում դեպպան կ'առաքէ Պիպարսին, ի Սաֆիտ, յանուն ազատութեան Լեւոնի: Ապաղա խանն կը խնդրէ, որ Լեւոնը փոխանակուի Սոնգուրի հետ, որ Պիպարսին էր շատ սիրելի:

Յակոբ Կլայեցի կաթողիկոս կ'օծուի (1268):

Նոյն տարին կը կնքուի դաշն հաշտութեան, հայոց եւ եգիպտացւոց միջեւ:

Հեթում կ'երթայ Ապաղա խանին, յանուն շնորհակալութեան եւ հրատեւելու:

Հեթում կը հրաժարի գահէն (1269): Լեւոնը կը զրկէ խանին մօտ:

Կիլիկիոյ մէջ կը պատահի մեծ երկրաշարժ:

Ապաղա խան կը տեղեկագրէ, որ Հայոց մէջ պիտի ըլլայ զօրածողով, բնդդէմ Եգիպտացւոց:

Հեթում իսպառ հրաժարեալ թագաւորութենէ՝ կ'ըլլայ կրօնաւոր, Մակար անունով (1270, Հոկտ. 20): Քիչ ետքը (28 Հոկտ.), մահ Հեթումի: Եգիպտոսի սուլթանը Լեւոնին թուղթ կ'առաքէ, յանուն ցաւակցութեան եւ միտթարութեան:

Մահ՝ Սմբատ Գունաստապլի:

Մահ՝ Վասիլի, որդի Սմբատայ:

Եւ այսպէս, կը վերջանայ Հեթումի շրջանը, որ եղաւ բարձրութիւն՝ բաղադատմամբ ալ բազմաթիւ ժամանակաշրջաններու: Հեթում թագաւորեց յիսուն տարի: Եղաւ տիրական ու տիպար արքայ: Ունէր մեծազոյն երազ մը, որ էր իրազօրծելի: Այլք շողնեցին իրեն, նոյնիսկ եղան արգելք: Եթէ էր երազը իրականանար, ալիարհ պիտի ստանար նոր զիմազծութիւն, այնքան ցանկալի:

Կոստանդին կաթողիկոսի հովուապետութիւնը տեւեց քառասունըվեց տարի:

Կոստանդին թագաւորաւոր էր եղաւ քառասունընթս տարի: (Կը նստէր Բարձրերդ):

Հեթումի թագաւորութեան երկար ժամանակաշրջանը եղաւ բազմաբնուէր: Ո՛չ միայն դէպքերով, այլեւ ընտիր դէմքերով եղաւ լի:

Նախ իստինք թագուհի Զապէլի մասին, որ եղաւ բազմիցս մայր եւ մնաց մայր օրինակելի: Զապէլ բամբիչ եղաւ նաեւ մայր հիւանդաց, որքերու, ծերոց, դժբախտներու եւ թշուառներու: Ըսինք՝ թէ հիմնեց հիւանդանոց, ուր ինք դժխոհ էր ու միաժամանակ ծառայ: Խոնարհութեան խորհրդանիշն էր, շղագրիով ըլլալէ նաեւ խորհրդանիշը հոգեկան բարձրութեան: Կը զուրգուրար հիւանդներուն վրայ, ու ինք անձամբ կը սպասարկէր անոնց: Իր աղջիկները ըրած էր հիւանդապահուհի: Եղաւ հրեշտակ գթութեան, եղաւ ցաւերու եւ վիշտերու ամօքիչ: Հոգիներու՝ հոգաբարձու: Նուիրուած մըն էր մարդկային սառսպանքին, զայն զոնէ դարձնելու համար տանելի: Հոգեկան հանճար էր, եւ քաջ բժշկան էր, որ մարդկային դերագոյն սառքներութիւնը իրերօգնութիւնն է, որպէսզի խաչերը թեթեւան:

Իր հոգիին հետ, իր հարստութիւնն ալ ընծայեց հիւանդանոցին, նաեւ վանքերուն, յոնուն մշակոյթի:

Եղաւ միշտ դէմքով փայտուն, ձեռքով բաց, հազուստ կապուստով ծըպտըած, որպէսզի իր զահակալ ըլլալը պահէ զաղանի, եւ ըլլայ սոսկ սամահութի:

Իր զգայնութիւնը պատճառ եղաւ, որ հիւծի ժամանակէն առաջ, քանզի կը տուայտէր ամէն մէկ սառսպողի հետ:

Ի մի բան, Զապէլ բամբիչ բուրաստան էր բարութեան, պարտէզ՝ պարտականութեանց: Եղաւ իտէալ հայուհի, հրաշափոխուած հրեշտակի: Եղաւ տիպար տիկնանց տիկին, եղաւ տիրատուր տուրքը տկարներուն, ամէն տեսակի:

Հեթում թագաւոր ալ, թէ՛ իշխող, թէ՛ կառավարող ըլլալէ զատ, էր նաեւ ազնիւ ազնուական, ու եղաւ եղբայր եւ հայր փողովուրդին:

Հեթումի աւազ յաջողութիւնը եղաւ աշխարհակալ մոնկոլներու հետ դաշնակից գառնալը: Բաշու Նոյունի հետ կնքեց դաշինք մը, որուն համաձայն, Հայափրկիկիան կը ճանչցուէր զաշնակից Մոնկոլ Կայսրութեան: Հայերը պարտաւոր էին պարենաւորել մոնկոլ բանակը, սննդանիւթով որոշ քանակի: Իսկ ահհարժեշտութեան ատեն, ընծայել նաեւ օգնական զօրք: Մոնկոլներն ալ պարտաւոր էին պահպանել Կիլիկիոյ հայ թագաւորութեան անկախութիւնը, առանց միջամտելու հայոց ներքին գործերուն: Հայափրկիկիոյ հարեան սուլթաններու յարձակման պարագային, մոնկոլները պարտաւոր էին պաշտպանել Կիլիկիան, զինուորական օգնութեամբ: Գաշնակիքը պիտի վաւերացուէր մոնկոլներու մայրաքաղաք Գարագորումի մէջ:

Երկրորդ պատուիրակութիւնը, գլխաւորուած Սմբատ սպարապետէ, վարեց բանակցութիւններ Գարագորումի մէջ, Գույուկ խանի հետ (1246):

Երրորդ պատուիրակութիւն մը, 1254ին, Հեթումին իսկ գլխաւորութեամբ, բանակցութեան սկսաւ, մոնկոլ մայրաքաղաքին մէջ, մեծ խանին՝ Մանգուի հետ:

Հայեմոնկոլ բանակցութեանց ու բարեկամութեան շնորհիւ էր, որ Հայակիլիկիան շրջապատող ու միշտ յարձակումի պատրաստ սուլթանութիւնները չէին ժպրհեր կատարել ստնձգութիւններ: Հայերը ուրիշ ճար չունէին, մոնկոլներուն բարեկամութենէն բացի: Անշուշտ մոնկոլներուն համար ալ բարերար էր հայոց հետ սնեցած իրենց դաշնակցութիւնը: Անոնք կը փափաքէին կայսրութեան հարաւային կողմը ունենալ հաւատարիմ դաշնակից մը, որ դիմադրէր մասնատրուպէս մեմլուքներուն:

Այդ դաշնագրներուն շնորհիւ, Հայակիլիկիան ո՛չ միայն զերծ մնաց յարձակումներէ ու գրաւումներէ, այլեւ, ընդհակառակն, սելճուքներէ խրչւած հողերը ետ առնուեցան եւ ամրապնդուեցան սահմանները, նաեւ ընդարձակուեցաւ մինչեւ Իսաւրիա, Կորնորոս, Պիր, Փէսուն, Կողխտրա եւ հասարաւէն Միջերկրական: Եւ ծովածոցը կոչուեցաւ Հայոց Ծոց:

Հայերը շրջապատուած էին սուլթանութիւններով Հալէպի եւ Իկոնիոյ, կար նաեւ մեմլուքներու սուլթանութիւնը Եդիպտոսի: Կային սակաւին խաչակիր իշխանութիւններ, թունաւոր սունկերու պէս բուսած: Ասոնցմէ ոչ մէկը չէր վստահելի: Հայերուն կը մնային միայն մոնկոլները մեծագոր:

Այդ բարեկամութենէն դատ, բարեկարգութիւններ կատարուեցան Կիլիկիոյ մէջ, Հեթումեաններու շրջանին:

Յմբագրուեցաւ հարազատ հայկական օրինադիրք: Մինչդեռ Ռուբինեանց շրջանին, կը գործածուէին օտար օրինադրքեր (Փրանսական, լատինական, յունական), որոնք անհարազատ էին ու անհասկնալի:

Նոր օրինադրքով հաստատուեցան իրաւանց սահմանները, ամրապնդելով պետութիւնը:

Սահմանափակուեցան իշխաններու իրաւասութիւնները:

Ըստ նոր օրինադրքին, միայն թագաւորը կրնար հատանել դրամ, կառուցանել զինդ, քաղաք, բերդ: Թագաւորին թոյլտուութեամբ կը շինուէին ռազմազինական կառուցումները:

Հայ ժողովուրդի բնածին ընդունակութեանց եւ աշխատասիրութեան շնորհիւ, նաեւ շնորհիւ քաջայերոզ նոր օրէնքներուն, զարգացած էր զինդատընտեսութիւնը: Ծինականները կը գործէին ուրախ տրամադրութեամբ, ժըպտելով կամ երգելով: Զարգացած էին երկրագործութիւնը եւ անասնապահութիւնը, մասնաւորապէս բազմացած էին ձի ու շորի: Առատ էին պտուղները: Առատ էին նաեւ բամպակն ու բրինձը, եւ սրթատունկն ու ձիթենին:

Սիւս, Տարսոն, Լամբրոն, Մամեսոն, Կորիկոս, Ատանա եւ Այսոս ու Փայաս քաղաքները վերածուած էին մէյ-մէկ կեդրոնի:

Բազմաթիւ էին հայ վարպետ արհեստաւորները, որոնք կ'աշխատէին թէ՛ երկրին, թէ՛ երկիրներուն մէջ դրացի, վայելելով վերին վարձատրութիւն ու համբաւ: Անոնց մէջ կային դեղագործներ (մերօրեանները ինչ ազգի ալ պատկանին, այլեւս զեղազործ ըլլալէ աւելի զեղափառու են), սովերիչներ, երկաթագործներ, գորգագործներ, պայտարներ, բրուտներ, դերձակներ, մետաքսագործներ, մանածագործներ, շերամապահներ, կօշկակարներ, հիւսնիք, որմնադիրներ ու ճարտարապետներ:

Գիտական ճիւղերու մէջ կը փայլէին բժիշկներ, քիմիագէտներ, վերաբրոյթներ:

Բարեբախտաբար, բազմաթիւ են մեզի հասած դրամները արծաթէ ու սօկիէ:

Մեծապէս զարգացած էր նաեւ առեւտուրը, շնորհիւ նոր պայմաններու:

րուն: Հայք վաճառականութիւն կ'ընէին թէ՛ արեւելքի հետ, թէ՛ արեւմուտքի, թէ՛ հիւսիսի հետ, թէ՛ հարաւի:

Պետական դանձը լի էր վաճառականներէ գոյացած եկամուտներով ու մաքսատուքերով:

Արար պատմիչ մը, Աբուլ Ֆէրա, կը գրէ, թէ Կիլիկիոյ հայ քաղաքներէն շատերը դարձած էին ժամադրաւորը ցամաքային ու ծովային ճամբաներէ եկող բազմադարեւ առեւտրականներու:

Փրանսացի ճանապարհորդ մը, Ռուբրակ, ԺՊ. դարուն, Սիւսի մէջ կը հանդիպի բազմաթիւ ռուսերու, որոնք եկած էին մորթեղէններ վաճառելու:

**

Քանի մը խօսքով ներկայացնենք Հեթումեան շրջանի մշակները մտքի: Բայց նախ ներկայացնենք, հակիրճ կերպով, հայ դպրոցը:

Աւելցած էր թիւը դպրոցներուն, եւ բարձրացած էին որակով, եւ դարձած՝ մասշտիբ Քանգի ուսումն էր ձրի: Գոտապարտուած էր ուսումը վճարովի: Ըստ օրէնքին.— «Իսկի չէ պատե՛հ՝ վարձ առնուլ եւ ապա ուսուցանել»: Բա՛ցք մոռնալու չէ, որ դպրոցները ունէին կոճակ մը ոսկի. պետական լեցուն գանձը, ինչպէս նաեւ լայն բարեացակամութիւն: Պետութիւնը կը հովանաւորէր տարրական ու բարձրագոյն կրթագրամները: Գոտապարտուած էր կ'ընտրուէին բժանդիր քննութեամբ: Կը դասաւանդուէին գրականութիւն, պատմութիւն, աստուածաբանութիւն, փիլիսոփայութիւն, բժշկութիւն, երկրաչափութիւն, թուաբանութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն: Չապէլի ու Հեթումի շրջանը ըլլալով բարօրութեան տարիներ, մեկնանասուեցան ստեղծագործողներն ալ:

Յայտնուեցան հեաղհեաղ գրողներ, քերթողներ, մանրանկարիչներ, առակագիրներ, փիլիսոփաներ, պատմագիրներ, դործիչներ, մատենագիրներ, հոնտորներ, իրաւագէտներ, ճարտարապետներ, եւ այլն:

Տեսակ մը ոսկեդար էր այդ շրջանը, առնուազն դար՝ վերելքի:

Եթէ Չապէլ հիմնեց հիւանդանոց, Հեթում հիմնեց մատենատուն, Սիւսի մէջ, ու գոյն ճոխացուց պէսպիսուն մատենաներով:

Հեթում հոտապարտ էր հանդէպ հանճարեղներուն, հմուտներուն, տաղանդաւորներուն: Գրասէր էր ու գեղարուեստասէր, եւ կը գնահատէր արժանիք եւ ստեղծագործութիւն, վարձատրելով արքայաբար:

Ինք էր, որ թարգմանել տուաւ հայերէնի, հնդկաստանցի հեղինակներու հուշակար հատորը անասնաբուժական, որ ըստ ականատեսներու վըրկայութեան, դարձաւ պաշտական մատենատան զարդերէն մին:

Հայերը հնուց հաստատած էին հնդկաստանցիներու հետ յարաբերութիւններ, առեւտրական գետնի վրայ: Յիշեալ հատորին թարգմանութեամբ սկսաւ նաեւ գրական հաղորդութիւն:

**

Արձանագրենք անունները մտքի մշակներէն ամէնէն ընտրելիներուն, որոնցմէ երկուքը սիրտի մասնանշենք մասնաւորապէս: (Հոռոմկլայի հիմնական հոգին եղած էր Ներսէս Ենթահայի կաթողիկոս):

— Մանրանկարիչ Մարգիտ Պիժակ, Գրիգոր եւ Ստեփաննոս երաժշտողէտներ, փիլիսոփայ Վահրամ Ռարունի, առակագիր Վարդան Այգեկցի, պատմագիր Վարդան Արեւելցի, իմաստասէր Յովհաննէս Երզնկացի (Պլուզ կոչեցեալ), բանաստեղծ Պրիկ, պատմագիր Գրիգոր Ակներցի եւ պատմագիր

Սմբատ սպարապետ ու մանրանկարիչ Թորոս Ռոսլին, որ միջնադարու մեծագույն մանրանկարիչը Հանդիսացաւ, ո՛ր միայն Հայոց, այլև միջագոյն արուեստադէտներու մէջ: Այս ճշմարտութիւնը հաստատած են օտար մասնագէտներն ալ:

Հեթում պալատան մանրանկարիչ նշանակեց Թորոս Ռոսլինը, մեծօպէս զնահատելով զերազանց զեղարուեստը յիշեալին:

Թորոս Ռոսլին էր տարօնցի, ծնած ըլլալով մերձակայքը վանքին Ս. Կարապետի:

Մտղքին հետ կը գաղթէ Կիլիկիա, 1230ին: Կը հաստատուին Հոռոմկրայ: Պատանի Թորոս այնտեղ կը վայելէ հովանաւորութիւնը Կոստանդին կաթողիկոսի: Կոստանի ջանասիրութեամբ: Կաթողիկոսեղբայր Թորոս քահանան կ'ըլլայ իր հոգեւոր հայրը: Իր նկարչական տաղանդը կը գտնայ կարկանդակ, երբ տակաւին էր պատանի:

Հեթում թագաւորն եղաւ իր առաջին մեծ գնահատողը, ու զայն մրտացուց մայրաքաղաք եւ պալատ: Հեթումի մահէն ետք, Թորոս Ռոսլին մնաց պալատին մէջ, շատ զնահատուելով նաեւ Լեւոն Գ.է եւ Հեթում Բ.է: Յար ուշիասեցաւ իրրեւ մանրանկարիչ, ապրելով ապարանքի մէջ: Սակայն, ան իր կեանքին մեծ մասը անցուց Հոռոմկրայ, որ կեդրոն էր գիտութեան ու գեղարուեստի: Տարիքաւոր էր, երբ հեռացաւ Հոռոմկրայէն, մեմլուքներու սուպատակութեանց պատճառով: Հաստատուեցաւ Դրազարկ, որուն վանահայրն էր Թորոս, իր հայրը հոգեւոր: Եւ այնտեղ մահացաւ 1290ին, թաղուելով Դրազարկի գերեզմանատան մէջ, քովիկը Լեւոն Գ.ի, թաղուհի Կեռանի:

Թորոս Ռոսլին, կաթողիկոսին թելադրութեան համաձայն, 1250ին, նկարած էր Լեւոն թագաւորին գեղանկարը, իրմէ նկարազարդուած մատանի մը մէջ:

Թորոս Ռոսլինի ձեռագործներն են այն եօթը մատանները, որոնք կը դնուին Մալաթի մատանատան մէջ: Անոնց համար աշխատած է տասներկու տարի: Ամենահինը Աւետարանն է Զէյթունի (1256): Իրեն կը վերագրուին ութ մատաններ ալ, որոնց ոճը, եւ այլ բարեմասնութիւններ՝ բացառիկ նմանութիւն ունին իրմէ ստորագրուած գործերուն:

Թորոս Ռոսլինի գործերը մնացած են անմրցելի իրենց գունազեղութեամբ, կենդանութիւնով, արտայայտութեան նորութիւնով եւ լոյսով հանճարի: Եղած է վարպետ անդերազանցելի:

Թորոս Ռոսլին տնօրէնն էր նկարչանոցին Հոռոմկրայի: Հարցուցած է աշակերտներ շնորհալի: Իրեն ծանօթ էին ո՛ր միայն Հայ, այլև օտար մանրանկարիչներուն, մասնաւորապէս իտալական վերածնունդի վարպետներուն գործերը, որոնց արուեստին կատարութիւնն է իրը:

Ահա երկու օտար կարծիքներ: Ռուս մեծանուն արուեստագէտ Դուրնովօ գրած է.

— «Իտալիցի ժամանակակից իտալացի նկարիչներու կերպարներու շարժումները կաշկանդուած են ու նուազ յազակամ են: Անխորի բոլոր ներկած ու ներկայացուցած անձերուն փոխարարներու քիւմները եւ անոնցմէ ամէն մէկուն տրուած նշանակութիւնը միեւն ժ.՝ դար կը բացակայէին իտալացի վարպետներուն գործերուն մէջ»:

Իսկ Վալերի Բրիւսով, ծանօթ բանաստեղծն ու զեղարուեստագէտը գրած է.

— «Ժ.Վ.էն ժ.Վ. դարերու կիլիկեան թագաւորութիւնը եանդիսացաւ ողջ մարդկութեան կեդրոնը եւզուոր կեանքի: Հայաստանը, միջնադարու երկ-

բարդ կէսին, կրցաւ ստեղծել Արեւելի մէջ ճշմարիտ, իսկական կեդրոն մը մշակոյթի, որ միևնալը դիմացաւ ամբողջ Ասիոյ դէմ մղած մարտերուն մէջ»:

Թորոս՝ կոչուեցաւ Ռոսլին, թագաւորական նկարիչ ըլլալուն համար: Ինքն ալ եղաւ մանրանկարչութեան մէջ բնդհանրական ու մշտական մեծ թաղաւոր:

**

Մմբատ սպարապետ եղած է նաեւ զրիչ: Գրած է ուսմանը:

Մըրայրն էր թաւաւորին, որով զաւակներէն մին թագաւորահայր եւ նախնին սպարապետ Կոստանդին պայլին, որ սպարապետութիւնը յանձնեց Մմբատի: Այդ պատասխանատու պաշտօնը Մմբատ կատարեց արժանաւորապէս:

Ջուական էր Տամա Լիծի, որ քոյրն էր Ներսէս Լամբրոնացիի եւ կրտսեր աղջիկը՝ Օշին Բ.ի:

Հեթո՛ւմ սպարապետ կատարեալ զինուորական ըլլալէ զատ, էր նաեւ մտաւորական (պատմագիր, փերթող, թարգմանիչ, իրաւարան, ղրիւնհագէտ):

Իրբեւ զինուորական՝ Հայկիլիկիան ազատած է մեծ վտանգներէ:

Պէյպարս, սուլթան Եղիստոսի, 1276ին, զինակցած Իկոնիոյ, կ'ուղղուէր Կիլիկիա:

Սպարապետ Մմբատ իր փոքրաթիւ զինուորներով յաղթելու համար հսկայ բանակին, կը դիմէ հնարամտութեան: Իր զինուորները բաժնելով քանի մը խումբերու, կը պատուիրէ գաղտնաբար սպասել ուժեղուն թշնամի: Իսկ ինք մտնեալ սակաւաթիւ զօրքով կը դիմէ դէմը ռազմաճակատ: Սուլթանը այդ փոքրաթիւ զօրքաւորներ տեսնելով՝ կը կարծէ, թէ այնքան է հայոց զօրութիւնը. անմիջապէս կը հրամայէ յարձակիլ: Սպարապետը հասած էր իր նպատակին: Ծարպիկ դարձուածքով՝ կռիւր կը փոխադրէ այնտեղ, ուր դարանակալ կը սպասէին իր զետեղած զօրախումբերը, որոնք ինքզին խառնուրդի մէկ պահուն, թաքտոցներէն դուրս գալով՝ անակնկալ կերպով կը յարձակին թշնամիին վրայ, անխնայ կոտորելով զինուորները սուլթանական: Թշնամին կը փորձէ փախչիլ, սակայն զիականքու կոյտերը արգելք կ'ըլլային փախուստի: Վճռական ճակատամարտը տեղի կ'ունենայ, մերձ Մարաշի, հովիտին մէջ Ջահանի: Մմբատ հակառակ իր այլադր տարիքին, փայլեցաւ իբրեւ ռազմագէտ արի: Այդ խաղձը մանրամասնօրէն նկարագրած է ասորի պատմագիր Ապուֆարաճ: Սուլթանը համոզուելով, որ իր զօրքերը պիտի պարտուին ու շարաշար ջարդուին, կու տայ հրաման նահանջի: Թշնամիին փախուստի տեսն, հայ սպարապետը կը փափաքէ սուլթանը բռնել զքրի: Նախ նետահարելով՝ կը վիրաւորէ զքեթէ մահացու կերպով, սակայն, այդ ատեն, սուլթանին զօրքերը կը յաջողին նետահարել Ժերուճ սպարապետը, որ քիչ ետքը կը մեռնի, իրեն օղնութեան փութացող, եւ յաղթանակը աւետող հայ զինուորներու գրկին մէջ: Իսկ սուլթանը կը մահանայ նոյնպէս, իր վէրքին պատճառով:

Իրբեւ զիսանագէտ ալ դորձած է Մմբատ սպարապետ, եւ յաջողապէս:

Մոնկոլեան մոլեկան հեղեղը իր երկրէն ելլելով՝ խուժած էր դուրս, պրաւած էր երկիրներ, գերած էր Ժողովուրդներ, քանդած էր գրեթէ ամէն ինչ, իր ետին ձգելով անթիւ կոյտեր աւերակի: Մոնկոլները մօտեցած էին Կիլիկիոյ, որ անխուսափելի կերպով պիտի ենթարկուէր աննախընթաց աշխի:

Հեթում անհիշապէս պատուիրակութիւն մը առաջեց մոնկոլ բանակի հրամանատար Բաշու Նոյունի: Պատուիրակութեան պետն էր Սմբատ սպարապետ, որ յաջողեցաւ բարեկամութեան դաշինք կնքել Կեսարիոյ մէջ (1243): Հայակիրիկիւն, ըստ դաշնագրութեան, մոնկոլ կայսրութեան կ'ըլլար ենթակա: Պարտաւոր էր պարէն հայթայթել բանակին: Փոխարէն՝ մոնկոլները պիտի պաշտպանէին Հայոց անկախութիւնը, տալով երաշխիք:

Բանակցութիւնները շարունակուեցան մոնկոլներու մայրաքաղաք Գաղղուսի մէջ, եւ Հայոց պատուիրակութեան պետը միշտ էր Սմբատ սպարապետ (1246-48): Բանակցած է Գուլուկ խանի հետ:

Անդամ մըն ալ, 1253-55ին, ընկերացած է Հեթում թագաւորին, երբ Հայոց ու մոնկոլներու Մանկու մեծ խանին միջեւ կնքուեցաւ պայմանագիր մը, որուն խմբագրութիւնը կատարած է Սմբատ սպարապետ: Այդ պայմանագիրը գոյութիւն ունի, իրեւ փաստաթուղթ: Մեղի հասած է նաեւ նամակ մը, գրուած Սըմըրղանտէն եւ ստորագրուած Սմբատ սպարապետին կողմէ, եւ ուղղուած Կիպրոսի թագաւոր Հէնրիկ Լուզինեանի: Նամակը, որ գրուած է հին ֆրանսերէնով, կը հաղորդէ հետաքրքրական տեղեկութիւններ մոնկոլական բարձրու եւ ռազմական գործոց մասին:

Իրրեւ մատենագիր, ունի «Տարեգիրք» մը, որ կը սկսի տասներորդ դարէն, հասնելով մինչեւ 1274ի անցուղարձեւումն նկարագրութիւնը: Պատմական թանկարժէք երկասիրութիւն է:

Կազմած է նաեւ «Խասաստանագիրք»ը, որով յայտնուած է իրրեւ իրաւադէտ (1265):

Բաղմաշնորհ էր Սմբատ սպարապետ: Զրաղած է նաեւ երաժշտութեամբ եւ քերականութիւնով: Իր գրչադիր մագաղաթեայ «Աւետարանը կը զտնուի մատենատան մէջ Երեւանի: Անոր մէջ կան լի յիշատակութիւններ, իր իսկ ձեռքով գրուած: Ի միջի այլոց, փորձած է հասաստել նշանները հայերէն առղանութեան:

Գրած է նաեւ պատմական ու իմաստասիրական նիւթերով ռոտանաւորներ: Մասնաւորապէս շահեկան է «Ի Ճաշոց Գրիտ» բանաստեղծութիւնը, նըւիրուած ճակատամարտին 1266ի:

Կատարած է թարգմանութիւններ ալ: Իր թարգմանած «Անտիոքի Օրէնքները» գործը իրրեւ ընկեր կը ծառայէ, որովհետեւ կորուած է բուն ընկերը: Հ. Ղևոնդ Ալիշան այդ մատենը թարգմանեց ֆրանսերէնի, սպարապետին մահուան վեցհարիւրամեակին առթիւ, եւ ֆրանսերէնը հայերէնին հետ հրատարակեց Վենետիկի մէջ, 1876ին:

Սմբատ սպարապետ բացառիկ ու փայլուն դէմք մըն է, իրրեւ մտաւորական գինուորական: Գաջաբար գործածած է թէ՛ սուր, թէ՛ փետուր:

Ըսուած է, թէ Հեթում թագաւոր՝ հայ կրօնաւորներով դաջած է Աթղանիստան, ու Մակու խանը ընտանեօք մկրտել տուած է քրիստոնեայ:

Հեթումի վերին նպատակն էր մոնկոլները դարձնել քրիստոնեայ, որպէսզի մոնկոլական մեծ կայսրութեան շնորհիւ, քրիստոնեայ աշխարհը շահի հզորագոյն դաշնակից մը, նոյնիսկ գինակից մը:

Հեթումի ծրագրերն իրականացումով՝ աշխարհը պիտի ստանար նոր դիմագիծ:

Կարճ յապաւումներով կ'արտագրենք Ռրնէ Կրուսէի (անդամ ֆրանս-

սական կաճառին) «Պատմութեան հաշուեկշիռը» ճշմարտութեան գերբնական հաստատու ճեղքուցիչ:

— «Այս այն դարաշրջանն էր, երբ մոնկոլ կայսրութիւնը դրեթէ գրաւած էր ամբողջ Ասիան: Մոնկոլ մեծ խանը, թոռը եւ երրորդ յաջորդը ձենկիզ խանի, տէրն էր վերին ու կենդրոնական Ասիոյ, Չինաստանի կէսին եւ ամբողջ Պարսկաստանի: Իր քեռորդիներէն մէկը կ'իշխէր առաստական տափաստաններուն վրայ, մինչեւ սահմանները Լեւոստանի եւ Հունգարիոյ: Խաչին ու մահիկին միջեւ վեց անգամ տեղի ունեցած դարաւոր մենամարտներուն մէջ, մոնկոլներու միջամտութիւնը կրնար ըլլալ վճռական:

«Ճանապարհորդները գիտէին, թէ մեծ խանին բանակներուն, եւ նոյնիսկ անոր շրջապատին մէջ, կային մեծաթիւ քրիստոնեաներ: Իրապէս իր նախարարներէն շատերը նեստորական էին, ինչպէս իր ընտանիքէն բաղմաթիւ իշխանուհիներ, եւ նոյնիսկ իր հարազատ մայրը: Արդարեւ նեստորականութիւնը շատոնց ու շատ տարածուած էր վերին Ասիոյ թուրք ցեղախումբերուն մէջ, որոնց իշխանական ընտանիքները սերտօրէն կապուած էին ճինկիզիանեան տունին: Այս քրիստոնէական համակրութիւնները օգտագործելու համար էր, որ Անմեց պապը, 1233ին, ապա Ս. Լուզովիկոս, 1253ին, Մոնկոլիա դրկած էին Բլան Քարենի դեսպանութիւնը, երկրորդը՝ Ռիւպրիքի դեսպանութիւնը: Պէտք է բռնել, որ ընդունելութիւնը եղած էր զիջ Քալաներական: Պատճառը այն էր, որ մոնկոլ կայսրերը՝ քրիստոնէայ իշխաններուն հետ համաձայնութիւնը կ'ընդունէին միայն ճորտութեամբ վերջիններուն, որ քրիստոնէից կողմէ էր անընդունելի: Բայց այնտեղ, ուր լատինները ձախողեցան, հայերը յաջողեցան:

«Հայ ժողովուրդին պատմութիւնը մէկն է ամէնէն աւելի դրաւիչ պատմութիւններէն: Եւրոպայի յառաջապահը՝ Ասիոյ յառաջացեալ սահմաններուն վրայ, ան շղարկեցաւ դործել: Քրիստոնէութեան ազդարարեց եւ մատնանիչ բռաւ այն մտանդները, որոնք կը սպառնային անոր, ինչպէս նաեւ ցոյց տուաւ այդ մտանդներուն դիմադրելու միջոցները:

«Հասնելով Միջին Ասիոյ արեւմուտքը, խաչակիրները այնտեղ գտած էին Կիլիկիոյ մէջ հաստատուած առողջ հայկական գիւղացիութիւն մը, որ հոն գաղթած էր իր եկեղեցիին ու աւատակետիներուն հետ, Մեծ Հայաստանը թուրքերուն կողմէ գրաւուելէն ի վեր: Կիլիկիան իր արծիւի բոյներով եւ իր բերրի դաշտադէտքերով՝ կը գտնուէր Նոր Հայաստան մը ըլլալու ճամբուն վրայ: Ենթադրել խաչակրութեան պատճառով յառաջացած ռազմական եւ քաղաքական խոտորումներուն, կրցաւ ինքզինքը ազատագրել բիւզանդական տիրակալութեան վերջին հետքերէն, եւ իր անկախութիւնը պաշտպանել թուրքերուն դէմ: Պէտք է խոտորվանիլ, որ խաչակիրները իրենց երեւութին սկիզբը օգտակար եղան Հայկիլիկիոյ, քանի որ Բիւզանդիոն զգուշացաւ հզօր քանակով մը յարձակիլ ու վերջ տալ Հայոց նորածագ անկախութեան: Թէեւ խաչակիրներու այդ օգտակարութիւնը լիովին փոխադարձուեցաւ Հայոց կողմէ, պարենաւորելով խաչակիրները եւ Քալանքար գիւնակցելով անոնց: Սակայն, այնուհետեւ խաչակիրները եղան անկարագիր Հանդէպ Հայոց եւ վատօրէն վնասակար. Ն. Պ.): «Հայկական իշխանապետութիւնը հաստատուեցաւ այսպէս, շատ կարեւոր դեր մը խաղաց Լատին Արեւելքի պատմութեան մէջ: Խաչակրութեան ամբողջ աւելորդութեան, Փրանքները աւելի հաստատարիմ դաշնակից մը չունեցան: Փրանք եւ Հայ ընտանիքները անզաղար իրարու միացան ամուսնութեամբ, այնպէս որ՝ Երուսաղէմի արքայական ընտանիքը ի վերջոյ վերածուեցաւ Փրանք-Հայկական Թագաւորութեան:

Ապօրինական կարգաւորութիւնը ներմուծուեցաւ Հայկական արքունիքին մէջ: Յրաններէնը եղաւ Հայ իշխաններուն երկրորդ լեղուն: Պապութիւնը, յիշին, նուիրագործեց այդ սերաւ համաձայնութիւնը՝ Մեծն Լեւոն Բ-ի շնորհելով արքայական թագ:

«...Հեթում Ա. թագաւորը զարգացուց այս քաղաքականութիւնը, բլլալով աները եւ հաւատարիմ դաշնակիցը Փրանք պարոններուն զլխաւորապէս ին՝ Անտիոք – Տրիպոլիտի իշխան Պոհեմոնդ Զ-ի: Հեթում յրացաւ Պրանքներուն, ինչպէս նաեւ իրեն համար, մեծակառոյց ծրարէր մը:— Մոնկոլ ահապին ուժը կապտել, դայն կեդրոնացնել ի նպաստ քրիստոնեայ քաղաքակրթութեան: ...Աշխարհակալին թոռները դարձնել Լատին Արեւելքի փրկիչները: Չեռնարկը դժուարին էր, բայց Հեթում կոթնելով նետաորակներուն, կը յուսար ձեռք ձգել Մոնկոլներուն համակրութիւնները, հանդէպ քրիստոնէութեան: Չէր անդիտանար նախ, թէ անոնք ամբողջ Ասիան դրակել ետք, իրենց առջեւ կը դանկին վերջին պատուարը:

«Հայ միապետը ուրեմն չվարանեցաւ ճամբորդել մինչեւ Մոնկոլիս, 13 Սեպտ. 1254ին, եւ ընդունուեցաւ Գարագորումի մերձ, մեծ խան Մոնկոլի կողմէ: Ճենկիդի թոռը ո՛չ միայն լաւագոյն ընդունելութիւն մը կատարեց, այլև խոստացաւ Հայոց թագաւորութիւնը եւ Հայ քրիստոնէութիւնը առնել իր պաշտպանութեան ներքեւ:

«...Մոնկոլի եղբայրը՝ Հուլալու խանը՝ 1258ի սկիզբը, դրակեց Պաղատաւը: Հոկայ քաղաքին անկումը մեծ աղէտցութիւն մը յառաջ բերաւ ողջ աշխարհի մէջ: ...Արարներուն տիրապետութիւնը տեւած էր վեց հարիւր քառասունըօթը տարի: ...Ճենկիդ խանի թորան կինը, Տոքուզ – Սոթուհ, որ շատ հաւատացեալ նետաորական մրն էր, քրիստոնէից կը շնորհէր նըպաստաւոր վարչաձեւ մը, եւ բազէ ի բաց դանոնք մասնակից կ'ընէր յաղթութեան:

«Պագտատէն ետք, 1260ի սկիզբը, Հուլալու խանին հրամանատարութեամբ դործող բանակը, որուն միացած էին Հայոց թագաւորը Հեթում եւ Անտիոքի իշխանը Պոհեմոնդը, դրակեց Հայկէպ: Նոյն տարի, Մարտին, Քիթպուքա մոնկոլ զորավարը դրակեց Դամասկոսն ալ: Հայկէպ եւ Դամասկոս մահմետական անընարարելի քաղաքները, որոնց ոչ մէկ Փրանք բանակ չէր կրցած դպիլ, կ'իյնային մոնկոլներուն առջեւ: Քիթպուքա, որ նետաորական էր, իրեն անմնապէս կ'ընկերանային Հայոց թագաւորն ու իշխանը Անտիոքի: Այդ բախտորոշ տարին (1260), մահմետական Սուրիան, ծովուն կողմէ դեռ բռնուած Փրանք բերդերու գիծով, կոնակէն կը խորտակուէր, զարնուած մոնկոլ արշաւանքով:

«Նետաորական մոնկոլը, տէրը ամբողջ ներքին Սուրիոյ, երկարեց իր հուժկու ձեռքը Պրանքներուն, որոնք տիրած էին ծովեկերքին:

«Այդ ձեռքը մերժեցին Սէն-ժան-տ'Արքի պարոնները, վախնալով ճենկիդիանեան խոստարտութեանէն. անոնք մերժեցին մատուցուած դաշնակցութիւնը եւ նախընտրեցին համաձայնել Եգիպտոսի մեմլուքներուն հետ, որոնց ազատ անցք տուին, մոնկոլ բանակը մատնելու համար յանկարծակիի: Սեպտեմբեր 3ին (1260), այդպէս նպաստաւորուած մեմլուքները ջախջախեցին Մոնկոլները, դանոնք նետելով Եգիպտոսէն անդին:

«Պրանքները սուղ վճարեցին իրենց կուրութիւնը: Մեմլուքները, որոնց երախտագրութեան կը սպասէին, դարձան իրենց դէմ: ...Մեմլուք սուլթանութիւնը, աւելի քան Սալատէնի կայսրութիւնը, նախորդք բացարձակ միապետութիւն մըն էր, որուն կը հնազանդէին Սուլտանէն մինչեւ Եգի-

բառ, ինչ որ ժԱ. դարու սկզբնաւորութեան, Ֆրանքներու յաջողութիւնը ապահոված էր շնորհիւ իրենց զինուորական միապետութեան էր, հակապատկերը մահմետական իշխանութեան: Բայց կացութիւնը վերջնապէս շրջուած էր. Մահմետականներուն զինուորական միապետութեան եւ Ֆրանքներուն անիշխանութեան պատճառներով: Աւելին ըլլալով, 1260 — 1277ի շրջանին, Մեմլուքները ունեցան պէտ մը, սուսական տափաստաններուն մէջ նախկին դերի, Թուրք Պայպարսը, որ գործը եւ յաղթութիւնը դիւրացուցած էր, քանի որ Փրանքները անբացատրելի կերպով մերժած էին զիրենց փրկելու համար եկած Մոնկոլներուն դաշնակցութիւնը: Պայպարսի կը մնար օգտուիլ անոնց յիմարութենէն: Քանի մը ամսուան մէջ, գրունելով մաքրեց անոնց բերդերուն կէսը, Եաֆաշէն եւ Անտիոքէն (1268), մինչեւ Ասպետներու Քրաքը (1271): Գալով Հայերուն, ան դաջած էր առնելու սարսափելի վրէժ մը, կրակի եւ արեան մատնելով ամբողջ Կիլիկիան: Հեթում Թագաւորը, խորտակուած այս աղէտներէն, հրաժարեցաւ զահէն, առանձնաւոր համար վանքի մը մէջ:

«Հայ միապետին ճախորդութիւնը՝ ճախորդութիւնն էր իաշակրութեանց, ճախորդութիւնը Եւրոպայի, ինչպէս Թուրք Պայպարս կը տիրապետէր մահմետականութեան, Հեթում տիրապետած էր իր ժամանակաշրջանի քրիստոնէութեան, եւ իր մտահաշիւներուն մէջ ներմուծած էր ամբողջ Ասիան: Փեքինէն մինչեւ Սէն-ժան տ'Արքը, ընդարձակ մոնկոլ հակահոսանքին մէջ ընդշմարած էր՝ թէ ո՛ւր է փրկութիւնը Արեւմուտքի: Ո՛չ ոք հասկցած էր իր հաճախը: Ֆրանքները, զորս փորձած էր մօտեցնել Մոնկոլներուն, չէին ըմբռնած դերագոյն շահը իրենց համար, այդ տեսակ մօտեցումի: Ան կըցած էր մոնկոլները ատեն մը ընել արեւելեան քրիստոնէութեան պաշտպանները, փրկարարները, բայց ա՛լ ետ կը կենային այդ ապերախ գերէն, երբ անոնց Լատիններուն մէջ միայն կասկածամբուութիւն եւ թշնամութիւն գտած էին: Հրաժեշտ առնելով հայ իշխողէն, որ չէր վախցած կատարել Գարազորումի ճամբորդութիւնը, ի նպաստ քրիստոնէութեան կեդրոնացնելու համար մոնկոլ անգրիկ ուժը, պատմութիւնը պարտի ուղղունի միջնադարու ամենէն յստակաստե ուղեւորէն մէկը, ամենէն զօրաւոր համարներէն մէկը: Հեթում Թագաւոր պիտի մնայ ա՛յն մարդը, որ եթէ Արեւմուտքը զինք մտիկ ըրած ըլլար, կըցած պիտի ըլլար պատմութեան ընթացքը ուրիշ կողմ դարձնել այն պահուն, երբ մոնկոլ երկրաշարժը տակնուվրայ ընելով զէմքը Ասիոյ, թոյլ պիտի տար հազարամեայ գետերուն հոսիլ՝ նոր ուղղութեամբ:»

«Ինչ որ մեծ Հայը ընդշմարած էր, մինչեւ Եզրիպտոս երկարող մոնկոլ կայսրութիւն մըն էր... Քիչ առ քիչ քրիստոնէացած, իր նեստորական ազգայիններուն, ինքզնիւ հայ կամ լատին կրօնաւորներուն ազդեցութեան տակ... Կորսուած աշխարհի մը այս երազն էր, որ Հեթում Հայոց Թագաւորը, վերածուած Մակար վանականի, անշուշտ գեռ կը հետապնդէր Յառախ վանքին մէջ. եւ մինչ երէկուան այս կարեւորութիւնները կը նուազէին, նման երազի, Պայպարսի կաշմբուան ձեռքը՝ իր հին ընթացքին կը վերագրանէր պատմութիւնը:»

(Ինչպէս կը հաստատուի, «Իաշակիր» կոչուող պարոնները իաշակրոններ ու իաշագողներ չէին միայն, այլ իսայատակ տխմարներ: Իսկ հանձար մը հասկնալու համար անհրաժեշտ է քիչ մը խելք, քիչ մըն ալ խիղճ: Խաչակիրները պատճառ եղան, որ ի վերջոյ, Թուրքերը մահմետականանան, սղծելով մահմետականութիւնը, նաեւ գերելով ու նահատակելով այդ կրօ-



նին ծնունդ տուող արար մեծ արդը, ինքզնիս նաև դարձր շարունակ դերե-
լով ու կոտորելով բազմաթիւ ժողովուրդներ: Ռաշակիրները պատասխանա-
տու են ահաւոր աղէտներու: Թուրքերը ո՛չ միայն եղան կեղծ մահմետական-
ներ, այլև իւրացուցին խայթախայթիւնն անգամ:)

*
**

Պիրականացաւ Հանճարեղ Հեթումի երազը երանելի: Արդեւ եղան
խաչակիրները իրենց տղեղ ու տիմար վերաբերումով: Անոնք իրենց մեղքե-
րուն վրայ աւելցուցին ծանրակշիռ մեղք մը, որուն տակ տրտուեցան, տի-
րապետելու մոլութիւնով: Եւ մարդկութիւնը շարունակեց շարշարուիլ ու
շարդուիլ, թուրքերէն եկող աղէտներու շարքի մը ներքեւ: (Պատմագիր մը
հաշուած է, որ թուրքերը իրենց լայն տիրապետութեան շրջանին, կոտորած
են վաթսուն միլիոն մահմետական ու քրիստոնեայ):

«Ռաշակիր» կոչուածները իրենց բուն ինքնութիւնը շուտով յայտնե-
ցին, իրբեւ արկածախնդիր, աննկարագիր, վատագի, նիւթապաշտ, սրբա-
պիղծ: Ասպետական էին անուանապէս, ըլլալով ասպետական: Տակուին ա-
պերախա ու ամբողջովին անխտահելի: Անոնք միշտ նախընտրեցին իրենց
աղտոտ ու արքատ շահը, քան թէ զարոց շահերը անկուելի:

Ռընէ Կրուսէ, Հակոտակ իր ճշմարտախօսութեան, յայտնապէս խնա-
յած է խաչակիրներուն, դանձը խաչելու համար, իրբեւ աւազակներ:

Ռաշակիրներու գործունէութիւնը շարք մըն է մեղքերու աններելի:
Ռաշակիրները եղան ծովահններ ցամաքի: Գործեցին ո՛չ թէ յանուն ազա-
տագրութեան, այլ զբաւելու, զերելու, գահակալելու տենչով: Ի վերջոյ,
ձախողած ու ցրուած են, պատակաւորած, պարպուած, պարտուած:

*
**

Բազրատունեաց Հարստութիւնը երբ վերջացաւ (բիւզանդացիներու
անհետատես, քինախնդիր ու վատագի սաղրանքներով, ինչ որ, ապա, իրենց
համար եղաւ կործանարար), բիւզանդացիք չգոհացան այդքանով, ու սկսան
մէկիկ-մէկիկ սպաննել, աստ ու անդ դոնուող հայ ազնուականներէն շա-
տեր, միանգամընդմիջով վերջ տալու համար հայկական պետութեան մը կազ-
մութեան: Հայ ժողովուրդն ալ նեղեցին՝ նեղմիտ դաւանական խնդիրներով:
Հայերէն շատեր գաղթեցին ու հաստատուեցան զանազան երկիրներ, ժամա-
նակի ընթացքին դրաւելով պատուարեր դիրքեր, նոյնիսկ դիրքեր պանծալի:
Հայկական խումբեր դացին Կովկաս, Պրիմ, Մակեդոնիա, Պուլկարիա, Ռու-
մանիա, Հունգարիա, մինչև Լեհաստան:

Երբ իշխան Ռուբէն հռչակեց անկախութիւն Կիլիկիոյ մէջ, այնտեղ
արդէն կային հնուց հաստատուած հայեր, որոնց վրայ աւելցան նորեկներ,
որոնք բուրբուեցան Ռուբէնի ու Գող Վասիլի շուրջը:

Հայերը Կիլիկիա գաղթելով ու հիմնելով պետութիւն մը՝ կատարեցին
Բիւզանդական նահանգ մը զբաւելով հեազհետէ) թէ՛ արդար վրէժխնդրու-
թիւն մը, թէ՛ աշխարհագրական սրբագրութիւն մը, մերձենալով Եւրոպայի
ու Ափրիկէի, մերձենալով մանաւանդ Միջերկրականի:

Բուն Հայաստանը, զժրախտաբար, կիսովին դատարկուած էր զրե-
թէ: Մեծ մաս մը հայերէն տեղաւորուած էր կեղերնական Փոքր Ասիոյ մէջ:

(Կիլիկիան թէեւ վեց անգամ փոքր էր բուն Հայաստանէն, սակայն, վեց անգամ դրեթէ աւելի հարուստ էր իր բերքերով):

Իսկ Կիլիկիոյ մէջ տուն տեղ եղած հայերը հազիւ մէկ վեցերորդն էին ամբողջ Հայութեան: Հակառակ այդ աննպաստ իրողութեան, հակառակ քանակով քիչ ըլլալուն, հայոց անկախութիւնը (առաջին անգամ էր, որ Կիլիկիան կ'ըլլար պետութիւն: Հայերէն առաջ, Կիլիկիան միշտ եղած էր զապտիւթ մը, պատկանող սա կամ նա աշխարհակալութեան) տեւեց իր շուրջը գտնուող պետութիւններէն աւելի: Եւ հակառակ անոր, որ պաշարուած էր ոխ, մախանք, յարձակման ու յափշտակութեան տենչ ունեցող բազմաթիւ մեծ ու փոքր պետութիւններու կողմէ:

Հայակիլիկիան իր փոքրաթիւ Հայութեամբ կրցաւ դիմադրել բիւզանդացիներուն, սելճուքներուն, մեմլուքներուն, հազարացիներուն, թուրքերուն, ինչպէս նաեւ դոյնդոյն, մոնաւանդ անդոյն խաչակիր իշխանութեանց:

Եթէ Հայաստանէն Հեռացողներուն կէտը (որոնք հալեցան ժամանակի ընթացքին) Պատմատուէր հարաւ, Հայակիլիկիան կ'ունենար տարբեր դերք ու դիմադրութիւն:

Հայակիլիկիան ո՛չ միայն եղաւ ամէնէն երկարակեացը, այլև ամէնէն դաւաթափացեալը իր մշակոյթով, քաղղատմամբ իր հարեւաններուն, որոնք դրացած էին միայն իշխանամտութեամբ, գիրար կողոպտելով:

Իսկ եթէ Բախար հայոց ընծայէր բացակայ մեծագոյն նուէրը — Խաղաղութիւնը — հայերը ո՛չ միայն իրենց, այլև բոլորին համար կ'ըլլային բարեբարներ բարեբարի:



Կոչումով եւ առաքելութեամբ շինարար մեր ժողովուրդին հարազատ դաւաններէն, Չապէլին ու Հեթումին նուիրուած այս հատուածը կը փակեմ, յիշելով արաբ հարուստի մը արտայայտութիւնը (երբ կը գտնուէի Մերձատուր Արեւելք): Խօսելով Փրանսերէն եւ մէկ բառ միայն գործածելով արարերէն, ըսաւ.

— Ելիամտիլլահ, բժիշկա հայ է, ճարտարագետս հայ է, դերձակս հայ է, կօշկակարս հայ է, սափրիչս ալ հայ է: Ամէնքն ալ վարպետներ են ու վստահելի: Ելիամտիլլահ...

Եթէ Բախար քանի մը կողմէ ժպտած ըլլար հայոց (եթէ գոնէ թուրքերը չըլլային՝ իրենց չարափոխած մահճեռականութեամբ), պիտի ըլլայինք մեծ ազդ, հարուստ քանակով ու որակով, ընծայելով մարդկութեան մեծագոյն բարեբարները, հանճարներ ամէն ասպարէզի:

Յայնժամ, շատեր մարդոցմէ պիտի աղաղակէին.

— Փա՛ռք Աստուծոյ, մեզ վարողները խաղաղասէր հայ քաղաքագէտներն են, մեր դիւանագէտները մարդասէր հայերն են, մեր քաղաքագետները շինարար հայերն են, Կապրինք խաղաղութեան ու խնդութեան մէջ: Փա՛ռք Աստուծոյ...

Արձանագրեցի այս վերջաբանը, առանց չափազանցութեան, առանց ազգայնամտութեան, այլ յանուն հիմնովին համոզուած ճշմարտութեան:

ՆՇԱՆ ՊԵՇԻԿՅԱՆԸ



ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ՀԵՏ

•

Ժխորին, ապականութեան, մակերեսային գոյութեան, անցաւորին մէջէն. — փախուստի կղզի մը: Երկու էակներ բանաստեղծութիւն կը խօսին: Հրաշք մը մեր օրերուն: Թարմութեան հով մը: Մաքրագործումը հոգիին: Թափանցիկ ենք, կը տեսնենք յստակը: Ես որքան վաղուց չեմ լսեր այս ձայնը: Որքա՞ն, որքա՞ն հեռացեր եմ էութենէս: Ոնիրը իր կոչումին դաւանանելուն: Արդեօք լուսինը պիտի յագեցնէ՞ ծարաւը մեր տենչերուն: Ի՞նչ հողն այս, — թէկուզ պղծուած, — այնքան կախարդանք ունի:

Այս ձայնը ծանօթ, հին եւ նոր, պարզապէս ներկայ: Կանչ մը դէպի կեանք:

«Արմատ», կ'ըսէ: Քայց մենք մտոցեր ենք արմատը:
«Էտրփին», կ'ըսէ: Մենք ուրացեր ենք գայն:

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ. օղը, ջուրը, հողը ապականեցի, կորսնցուցի անձս, իսթարեցի Աստուծոյ սատկերը:

Բանաստեղծութիւն, դուք ես թագուհիս: Միակ լեզուն, որով կրնամ խօսիլ: Բարձրանալ անկումէս, ըմբռնել գոյութիւնը: Թափանցել խորհուրդից, արձակուիլ ժամանակին մէջ:

Հիմա՝ որ ազատագրուած եմ, մերկացած կեղծիքէն, վարք՝ խորունկը, տակաւին կաթիլ մը շունչ, որ կրնայ մեզ փրկել մեծ աղտէն: Տեղ մը երկրագունդին վրայ, լուսնին, միւս մայրակներուն, կամ անջրպետին մէջ, կրնանք կառչիլ ձգողական կեղծանի մը եւ կազմակերպել մեր կեանքը: Կրկին ճեռել մեր արմատները եւ վերագտնել մեր անձը:

Ժխորին, ապականութեան, մակերեսային գոյութեան եւ անցաւորին մէջ. — փախուստի կղզի մը...

ԲԻԻԶԱՆԻ ԿՈՍՏԵԱՆ

ԳԵՈՐԳ ԷՄԻՆԻ ՀԵՏ



Դեմքն այս ես ո՞ւր եմ տեսն: Ծանօթ է շատ: Հարագտներուս մէջ, միջնադարեան մանրանկարներուն, Ազքամարի որմնաքանդակներուն կամ հագարաւար տարիներ առաջ, Ռարարտական կամ Արմենական գաղթելու ժամանակ: Այս սեւ մօրուքն ու խորունկ աչքերը արեանս մէջ կը զգամ: Ես եմ, ցեղս է, տիեզերքի հետ հազարդակցութիւնս է:

Այս ճայնը, — աչքերս գոց, — այս ճազը լեզուն, լսած եմ վազուց: Մեր շարականներուն, տապալում, դաշտերուն մէջ եւ համբաններուն: Չորս հագար տարի, — գուցէ աւելի, — խօսեր եմ գայն: Կահատակութեան անսպասիւմ մէջ, Աստուծոյ հետ, սիրոյ, տառապանքի եւ ուրախութեան պահուն:

Ինչքան հուշերն անակնկալ — Պատկերներ, յուշեր, լիներ, գետեր, լիճներ նուիրական: Խորհրդանշաններ, խտացած գաղափար, յաղթութեան երգեր, կարօտ, կարօտ՝ մահէն հօր: Ա՛խ, մեր Հայկական երազը: Յակոբը, որ հրեշտակին հետ կը կռուի: Յաւիտեան ապրիլ ուզող ժողովուրդը:

Տար ձեռքդ, եղբայր: Կը զգամ սիրոյ ափսս մէջ: Ոչ մէկ պատուար: Տիեզերքը եւ ժամանակը կ'անցնին մեր մէջէն: Կը լսեմ մէկ սրտի տրոփիւնը միայն: Կ'ուզեմ ճշտ, երգել կեանքը, անմահութիւնը: Լուսինը երբեք այսքան պերճախօս չի եղած: Արցունք մը միայն, տեղ մը էութեանս մէջ: Տախ, մաքրագործող, ազատագրող: Օտարութեան բոքքառը, երկար տառապանքի բիծերն ու փոքրը, գերութեան նուաստացումը, խոշտանգուած մարմիններն ու հոգիները — մաքրագործուած են: Ազատ եմ: Լիւզիմ, յաղթականորէն Հայ եմ:

Այս քրքան երկար կը կենայ արեւը Սրբազան Լերան վրայ...

ԲԻԻԶԱՆԻ ԿՈՍՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Մ Է Կ Վ Ա Յ Ր Կ Ե Ա Ն

Կրնայ պատահիլ, որ մարդիկ օր մը ուզեն զիս յիշել:
 Կրնայ պատահիլ: Ամէն բան կը պատահի:
 Եւ նախազանցը յայտարարէ, այդպէս լուրջ եւ մոռյլ՝
 — Սիրելի ընկերներ, մեր այսօրուան օրակարգի հարցերուն անցնելէ
 առաջ...
 Կամ ալ՝
 — Սիրելի ներկաներ, հանդէսը բանալէ առաջ...
 Կը հրաւիրեմ ձեզ մէկ վայրկեան լռութեամբ յուշնկայս յարգել հան-
 դուցեալ Ժազ Սարեանի յիշատակը:
 Ոտքի՛:

**

Գլխահակ մարդոց լուռ շարքեր: Իւրաքանչիւրը տիեզերքի մութ ան-
 հունին մէջ կորսուած աշխարհ մը: Գարձած ոգի կամ ուրուական (մէկ
 վայրկեան ինծի թոյլ տուէ՛ք այդ պատրանքը), ես ալ, նախապէս ժազ Սար-
 եան կոչեցեալս, հոն եմ: Կը վերցնեմ սա երբորդ շարքէն առաջին գլխուն
 կափարիչը — «նայինք մէջը ինչե՛ր գրուած կան»:

**

Ժազ Սարեան՝ն ըսաւ:
 Բայց ո՞վ է, ո՞վ էր ժազ Սարեանը: Անունը ծանօթ է, մտերիմ. ճանչ-
 ցած պէտք է ըլլամ անկասկած: Ո՞ւր, Է՞րբ, չեմ յիշեր: Ուսուցի՞ր էր, հան-
 րային գործի՞չ, մեկնեա՞ս: Ոչ: Բարերա՞ր. թերեւս: Այո, հիւանդանոցին
 սենեակներէն մէկը այդ անունը չի՞ կրեր — «...Իր մօրը յիշատակին»: Ու-
 րեմն՝ ազգային բարերար Ժազ Սարեան: Սարեան՝ թէ Սարգեան:
 Աջ կողմի դրացիիս կօշիկները նոր են եւ փայլուն: Ա՛յ, մոռցայ, նա-
 մակնէ՛րբ: Ինչ որ է, ա՛լ այսօր ժամանակ չունիմ, Արփիկին կու տամ: Պէտք
 է նաեւ հեռաձայնել Անդրանիկին, որ գործաւորը զրկէ եւ սառնարանին դու-
 որ նորոգէ: Տուփ մը շօշուա, քանի գիշերը՝ ուզենք-չուզենք նարեաններուն
 պիտի երթանք: Ասկէ ելլելու պէս կ'առնեմ, յետոյ դժուար կ'ըլլայ: Բա-
 րերարին անունը Սարեան չէ, Սարգեան է, հիմա կը յիշեմ: Յովհաննէ՞ս թէ
 Յարութիւն: Կարծեմ՝ Կարապետ:

ՅՈՏՆԿԱՅՍ ԼՌՈՒԹԻՒՒՆ

Ձախ կողմի դրացուհիս յայտնապէս յղի է: Կուրծք, փոք, յետոյք: Աճեցէք եւ բողմացարուք: Սէր՝ եւ ո՛չ թէ պատերազմ: Սեռ եւ ո՛չ թէ յղութիւն: Քիչ Քը ուշադրութիւն չէի՞ք կրնար ընել, օրիորդ: Ի՞նչ է, օրիորդ չէ՞, տիկի՞ն է — օ՛, ներեցէ՛ք տիկին, տիկին, բնականաբար, որքան մտացրիւ եմ: Ուրեմն, վերակտինք — զիչ ժը ուշադրութիւն չէի՞ք կրնար ընել, տիկին: Ինչպէս կը գրէր կատողած մը, անցեալ օր: Ըսէ՛ք, տիկին, շատ կը խնդրեմ ըսէ՛ք — արզանդին մէջ թփրտացող պէպէ՛քն ալ մէկ վայրկեան անշարժ կը մնայ ժառ Սարեանի քաղցր յիշատակը յարգելու համար: Անկի՛րթ, ինչո՞ւ անկիրթ: Անտեղի՞ — ըս՛ւ, ըս՛ւ, հարցումս ետ առի:

Ժառ Սարեանը արդեօք ազգականական կապ ունէ՞ր Մարտիրոս Սարեանի հետ: Վաղը՝ նկարիչ ժանսէ՛մի վերնիսաժը, կալըրի Մանուկ, ժամը եօթին: Փալ շարաթ, իտալացի արուեստագէտներու հաւաքական ցուցահանդէսը: Մե՛ղք, փխցուցի: Կիրակոսեանի «Մայրութիւնը», հոյակապ էր:

Յակոբեաններն ալ հոս են, եւ առաջին շարքին վրայ, ինչպէս միշտ: Որքան ալ տխուր, մա՛նաւանդ տիկինը: Կարծես թէ ժառ Սարեանի մօտիկ ազգականը ըլլար: Ե, ինչո՞ւ չէ՛, կրնայ ըլլալ: Ազգականը կամ սիրուհին — եթէ անշուշտ հանդուցեալը ութսունամեայ խոփած ծերուկ մը չէր: «Մաղիկ հասակին» — ի՞նչ դարձանալի բացատրութիւններ կան հայերէնի մէջ — ծաղի՞կ հասակ:

Արդեօք ժառ Սարեանն ալ ծաղիկ հասակին խամրեցաւ, ուսմանթիք եւ ժամանակավրէպ զրազէտներու պէս: Եթէ դրազէտ էր ի՞նչ գրած է, իր մէ ի՞նչ կը մնայ: Ի՞նչ կ'ուզես, որ մնայ — գիրք, — պիտի պատասխանէր լա Փալիս: Անծանօթ դրազէտի մը անծանօթ գիրքերը, այսինքն՝ ոչինչ: Ոչինչին ոչինչը: Քեզմէ՞ ինչ պիտի մնայ: Յաւակնութեան դրուի-դործոցը — կարծել, թէ զեզմէ բան մը կրնայ մնալ: Զաւակնե՛րը...

Եղբայր նախազան, նշան ըրէ նստինք, վայրկեանը անցաւ, լուրջ օրակարգերուն անցնինք: Ժառ Սարեան կամ Սարեան, Յովհաննէս, Յարութիւն կամ Սարգիս, ի՞նչ կարեւորութիւն ունի: Մարդը մեռած է, մեռած, հասկցա՛ր: Մեռած, ծայրուած, կապուած, կնքուած եւ անդիի աշխարհի նա՛մակատուփը նետուած (դրոշմաթուղթը մի՛ փճացներ, հաւաքածոյ կը կազմեմ): Յետոյ, ո՞վ ըսաւ, թէ կրեւիցէ ապրած էր:

Օ՛Ք, վե՛րջապէս...

ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Ե Ս Տ Ի Ր Ա Յ Ա Յ



Ես տիրացայ քու սրտիդ եւ սէրերուդ անարեւ,
Ինչ որ պէտք էր ես առի քու աչքերէդ կայտաջինց
Ու մատներէդ խնկաբոյր, կարեւորը արդարեւ
Ինձի համար այդ էր լսիկ, ու մնացածը ոչինչ:

Ես տիրացայ խօսքերուդ ու շարժումիդ շրտարում,
Երբ դիտեցի քեզ հեռուէն՝ դուն գգացիր, թէ ի գուր
Կրնաս խորել գիւ յանկարծ, նման յուզիչ պահերուն,
Երբ պատմուծան կը հագուի կեանքի երազ մը մաքուր:

Ինձի համար ինչ փոյթ թէ կ'ապրիս հեռու, անհաղորդ,
Բան մը որ իմ մօտ ունիս, որ քեզ ինձի կը կապէ,
Սրտէդ գաղտնի գրաւուած կախարդանքն է յուսայտրդ:

Ես տիրացայ քու սրտիդ եւ սէրերուդ կենդանի,
Աչքերուդ մէջ բռնկեզ երազանքիմ սաստափէ
Ու մատներուդ հեշտանքիմ, որ գիւ կեանքիմ կը տանի:

ՇԱՀՊԱՆ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԿԸ Վ Ա Ր Թ Ո Ւ Ի Ս,

Տ Ի Կ Ի Ն Գ Ո Ղ Ո Մ Պ Ո Ս

Ա.

Բաղձաթիւ անդամներ սիրահարուած եմ: Մինչեւ այսօր, դեռ չեմ կրցած ճշդել, թէ արդեօք զրոյցածս իրական սէ՞ր էր, ցանկութի՞ւն էր, թէ խառնըւած թիս ազդեցութիւնը՝ սրտիս ու մըտքիս վրայ:

Հիմա, խնձթ սէրերու եւ արբեցնող երազներու օրերս դաւանան աշունները իլլած են ինձմէ, զարչապարիս ներքեւ զօսացած տերեւներ կը ճաթառին եւ դուժկան քամիներ կը սուլին տխուր նայուածքիս դիմաց կը ստուերանան կորաքամակ ծերունիներ, անթացուպեր, լերկ գանկեր ու սպիտակ ծամերու տարամա՛ ալիքներ:

Ի՞նչ տխուր է կեանքը, երբ այլևս մեկնած են պատրանքները, զվլիւիչ նայուածքներ կը խուսափին աչքերուդ հանդիպելէ, երբ զազատողի կը դիտես կենսադուր պարմանուհիները, կը ճղնիս

խեղդել մէջդ խլրտացող յուզումին յաճախները, երբ կը զգաս, որ արիւնդ շիթ-շիթ կը քամուի սրտէդ ու ամէն ուրախութիւն կը մեկնի անգարձ...
Սակայն այս խաւարը յաճախ կը պայծառանայ, երբ լուսաւոր տեսիլ մը յանկարծ կը ցայտէ անցեալի ստուերներէն, կը թակէ յիշողութեանդ պատուհանները ու կը սպրդի գանկէդ ներս:

Սակայն այս խաւարը յաճախ կը պայծառանայ, երբ լուսաւոր տեսիլ մը յանկարծ կը ցայտէ անցեալի ստուերներէն, կը թակէ յիշողութեանդ պատուհանները ու կը սպրդի գանկէդ ներս:

Ամէն ինչ կ'այլափոխուի մէկէն, անկարելի ստուամով մը կը վերադառնաս անցեալիդ ու կը զգաս, որ կ'ապրիս դարձեալ, ժարմնիդ ամէն մէկ բլիւջը կեանքով կը շնչէ, ու երակներուդ մէջ կը զգաս արիւնդ, որ կը խրախուսէ էութիւնդ:

Ահա այդ հոգեվիճակը ունիմ հիմա:



Լուսնի արծաթեայ ցուլերով ողողուած կարսայ մըն էր կարծես տիկին Հերմինէն: Իր սեւ հանդերձները ա՛լ աւելի

կը շեշտէին զէմքին ուղիտակը: Ունէր խոշոր ու սեւ աչքեր, եւ անխորհրտ ծամերը, փարթամ հիւսկերով, կը կախէին ուսերուն վրայ:

Նուաղ էր նայուածքը, շարժումները՝ ծոյլ ու շնորհալի, ժպտը՝ տըրտում:

Բարեկամի մը զրուանեակը զայցած էի գործով, երբ առաջին անգամ հանդիպեցանք իրարու:

Կարծես տասնեօթ տարեկան էր, այնքան թարմ էր ու ամփոփ:

— Արդէն հինգ տարիներէ ի վեր այրի եմ, — բացատրեց կարմրելով:

— Բնաւ ժամանակ չես կորսնցուցած, — ըսի ծիծաղելով, — տաս տարեկանի՞դ ամուսնացար:

— Ինչէր կ'ըսես, չա՛ր, — ժպտեցաւ անուշ, — դեռ պառուած չեմ, զիտեմ, սակայն ամուսնացած տեսնա՞, Քրասնէն պակաս չէի:

Իջմբին դիժերը սկսան քիչ-քիչ շեշտուիլ: Տաք ու պող շատ տեսած էր: Խանդավառ աչքերու փայլը կարծես յուզեց իր նայուածքը:

— Կը դըամ տառապանքդ, — ըսի, — եթէ միթիթարութեան պէտք ունիս, ես պատրաստ եմ:

Ծիծաղեցաւ իր անուշ ու հնչեղ զբոբիքով:

— Միթիթարութեան պէտք չունիմ, — ըսաւ դարձեալ ծիծաղելով, — ես միայն Աստուծոյ ապաւինած եմ:

— Յաւանորտ չեմ, — ըսի քմծիծաղով մը, — սակայն Աստուած չի կրնար տալ քեզի ինչ որ ե՛ս կրնամ տալ:

— Ես Աստուծոյ ապաւինած եմ, — կրկնեց ինքնավստահ եղանակով մը, — Ան կը թելադրէ ինձի ինչ որ պէտք է ընեմ:

— Ի՞մ թելադրութիւններս շատ աւելի գործնական են. եւ յետոյ՝ պահեցողութեան սահմանը քառասուն օր է: Չե՛ս կարծեր, որ ծայրայեղ աստուածաբարութեամբ խախտած ես պահեցողութեան օրէնքները:

— Խօսքերդ չափազանց գայթակղեցուցիչ են, — առարկեց հեղձանքով,

— ուշադրութիւն ըրէ, որ սոված դայի մը տպաւորութիւնը չթողուս վրաս:

— Այնքան սոված չեմ, սակայն ես քեզի հետ չէ, որ կը խօսիմ: Կը խօսիմ աչքերուդ հետ:

Ձգաց, որ թափանցած էի իր հողերանութեան խորքը, վերլուծած էի իր անորժակները, խախտած էի իր պաշտպանութեան պատնէշները:

— Մի խոռովեր հողիս, — ըսաւ ազալական, — արդէն ես քեզի կը նայիմ իբրեւ եղբայրս:

Պաղ սարսուռ մը անցաւ վրայէս: Յանկարծ տակնուվրայ եղայ: Վերադարձուած էր արժանապատուութիւնս:

— Ես քու եղբայրդ չեմ, — տղապակեցի թղայնացած, — ոչ ալ քու եղբայրդը կրնամ ըլլալ: Երբ արիւնի կապ չըկայ՝ քոյր-եղբայրութիւնը անկարելի է: Կրնայ զոյութիւն անննայ փոխադարձ յարգանք եւ պատկասանք, սակայն աւելին յուսար անամարութիւն է: Ես քոյրերէս գոտ ուրիշ քոյր չեմ ճանչնար, սրբօհոտեալ ատիկա անկարելի է ինձի համար: Ձիս կը վերտորես իզրայր կոչելով: Եղբայր ըլլալէ ճանձարացած եմ ես:

Յանկարծական պոռթկումս սահմանակցացած էր զինք: Աչքերը խոշորացած էր ու ճակտին վրայ կնճիռներ դժուած էին: Ու դեռ բերանը չբացած՝ ես հեռացած էի, առանց աւելորդ բառ մը արտասանելու:

Յայտրդ շարաթներուն, քանի մը անգամ հանդիպած էի նոյն գրասենեակը, դործէ աւելի, շերտիկէին վրայ աչք մը նետելու համար: Որովհետեւ այդ գեղանի այրին, հասարակ էր մը չէր ինձի համար ու իր նուաղիտ նայուածքը կը պատկերանար մտքիս առջեւ ամէ՛ն անգամ, որ՝ առանձնանայի ու ինքնամոտեմբի երանաւէտ պահերու՝ փորձէի օրօրուիլ անկարելի երազներով:

Քանի մը առիթներով իրարու ժողտեցանք: Յոյսի նշոյլ մը կ'ուռնանար որտիս ու վստահ էի, որ հաճելի վախով մը ինք եւս կը նախզար մտեցող վտանգը ու հանդարտ դիմադժերուն տակ

կ'ուրուագծուէր իր արագուն հողիին սպտոնացող ողբերգութեան մը սարսափը:

Օր մը, երբ բարեկամս բացակայ էր դրասենեակէն, առաջին անգամ ըլլալով՝ իրեն հետ առանձին մնալու առիթը ունեցայ: Ձիւնք նեղ կացութեան շմտանելու եւ պատշաճութիւնը յարդելու նախանձախնդրութեամբ, քաղաքավարական խօսքերէ ետք, պատրաստուեցայ մեկնելու, հակառակ իր անուշ աչքերուն հրաւիրող արտայայտութեան:

— Ինչո՞ւ չես նստիր եւ կ'ուղես շուտով հեռանալ, — հարցուց մեղմ ժպտելով:

— Այնպէս, — ըսի կանգ առնելով, — քաղաքավարութեան սիրոյն:

— Նայուածքով աթոռը ցոյց տուաւ:

— Նստէ՛, հարցուի՛նք:

— Հաշտուի՛նք: Բայց ինչո՞ւ համար, արդեօք խոսում է ինք իրարմէ:

— Ձէ՞ որ անցեալ անգամ ջղայնացած հեռացար: Անկէ ետք հետս չիօսեցար:

— Ձիօսեցայ, որպէսզի այն տպաւորութիւնը չթողում, որ քեզի համար հոս կու գամ:

— Ինչի՞ր կ'ըսես, ինչո՞ւ այդ տպաւորութիւնը պիտի թողուս:

— Որովհետեւ, բացէ ի բաց ըսեմ, — ճշդեցի համարձակ, — ես միայն քեզի համար է, որ հոս կու գամ:

— Կատակ կ'ընես, — քրքջոց կարմրելով, — դուն եղբայրս ես, իսկ ես՝ քոյրդ: Ով ի՛նչ ուզէ՝ թող խօսի, քանի որ մեր սրտին ու մտքին մէջ ամէն ինչ մաքուր է ու յստակ, քանի որ իրարու հետ ազատ ու յետին հաշիւներ չունինք, ով ի՛նչ ուզէ՝ թող խօսի, հոգս չէ:

Պահ մը լուս մնացի: Կարծես մէկը թիկունքէս հարուածած էր դիս: Հիասթափ նայուածքս ուղղեցի աչքերուն ու աջակէս մնացի:

Ո՛հ, ինչո՞ւ չէր ուզեր հասկնալ, կամ եթէ կը հասկնար, ինչո՞ւ չհասկընայ կը մեզանէր: Աղտոտ հաշիւներ... աշխարհի վրայ ե՛րբ գոյութիւն ունեցած են մաքուր հաշիւներ. հաշիւները միշտ

աղտոտ կ'ըլլան ու աջակէս ալ կը մնան, զարմանայի ու ծիծաղելի չէ՞ այս աղտոտ աշխարհի վրայ մաքուր հաշիւներ փնտռելը:

— Նայէ՛, — ըսի ջղայնացած, — մինչեւ ե՞րբ պիտի տեսնես այս քոյր-եղբայր խաղը: Բացէ ի բաց ըսէ՛, ի՛նչ է միտքդ, կ'ուզես քթի՞ս խնդալ պղտոր հնարքներովդ, ըսէ՛:

— Հանդարտէ՛, — ըսաւ մեղմօրէն ժպտելով, — հանդարտէ՛, տղա՛ս, օր մը, երբ դուն ալ ամուսնանաս, երբ յուսախարութիւններն ու հիասթափումները կ'յտնեն էութիւնդ, երբ հաստատես, թէ երազները իրենց անուշութեանէ կը մերկանան ու երազ ըլլալէ կը դադրին, այն ատեն անձամբ կը հաստատես, թէ բոլոր տեսակի պայթարները ի յառաջադունէ դատապարտուած են ամբանալու, որովհետեւ յաղթանակները մարդուս մեծագոյն թշնամիներն են...

— Քեզ երբեք չեմ շնորհաւորեր այդ պարտուողական տրամադրութիւններու համար: Թերեւս մեծամտութիւններ սընուցած ես անցեալին, անկարելի ծրարիքներ ես որոնացած, անկալի քաղցրութիւններ ես ցանկացած ու, քնակաւնարար, անկուճք եղած է ահուկի, փլուզումը եղած է ամբողջական:

— Դուն կը նախընտրէիր, որ սոսքով մը ըլլայի հողին կպած, անկումներէ զերծ մնալու համար: Ո՛հ, ես կը ցանկայի թռչիւններ, կ'երազէի փայլուն տեսիլներ, որոնց իրականացումը տյնքան հեշտանքով ճաշակեցի, սրբութիւններ ու աւանդութիւններ կոխկոտելով շրթներս ժօնեցուցի բոցափառ հոճոյքներու, յաղթանակներով յիտորտացի ու կիրքերով արբեցայ... Ի՛նչ մնաց այս բոլորէն. պարտութիւն, լաց, վիշտ ու այս սեւ հանդերձները: Հիմա ես ինձի կ'ըսեմ. — կ'արժէ՞ր պայթարել այս բոլորին համար, երբե՞ք, երբե՞ք. եթէ հարկուր առիթ տրուէր ինձի վերսկսելու, պիտի մերժէի եւ ոչ իսկ անգամ մը պիտի նախաձեռնէի այս տիրաբոյր արկածախնդրութեան...

Այս գեղանի կնոջ կուրծքին տակ
անկասկած, վշտի կուտակուած շերտեր
կային, սակայն ամուսինին մահէն հինգ
տարի ետք, արդեօք տրամաբանական
կրնային՞ն ըլլալ ընդվզումի այս արտա-
յայտութիւնները, յոռետես ճշմարտու-
թեանց այս պոթկուծը:

— Մի կարծեք, որ համոզիլ են խօս-
քերդ, — բո՛ւ պահ մը լուռ մնալէ ետք,
— եթէ այնքան յոռետես ըլլանք, ըսե-
լու համար, որ վերջին ու ամբողջական
յոգիթանակը մահուան կը պատկանի,
այն ատեն ինչո՞ւ կը պայքարինք կեր-
տելու համար միշտ աւելի կատարելա-
գործուած քաղաքակրթութիւն մը, ին-
չո՞ւ օրէ օր կը պարարտանանք սպան-
դանոց տարուելիք ոչխարի մը նման: Ա-
ւելի գործնական չէ՞ր ըլլար կաթիլ մը
թոյնով կեանքին վերջ գնել: Նոյնիսկ
անբան ոչխարը, որ սպանդանոց կ'եր-
թայ, իր եղբրական վախճանով, իր հա-
մետ բաժինը բերած կ'ըլլայ լաւագոյն
քաղաքակրթութեան մը հաշուոյն մղուած
պայքարին: Ուրեմն, մեր գոյութիւնը
անկասկած իմաստ մը ունի: Վստահ ե-
ղիբ, որ ջիւ մը լուսատեսութիւնը կ'օգ-
նէ, որ մեր կեանքը դառնայ աւելի զը-
ւարթ ու արդիւնաւոր:

— Դժուար բան է երիտասարդ ըլ-
լալ եւ իմաստուն, — ասարկեց ժպտե-
լով, — տրամաբանական է, որ ամէն
ինչ վարդագոյն տեսնես, ծրագիրներ մը-
շակես ու եռանդով գործի անցնին՝ գա-
նոնք իրականացնելու համար:

— Համաձայն եմ քեզի, — հաստու-
տեցի ծիծաղելով, — որքան ալ իմաս-
տուն մենք մայրիկի հովեր տեսնու, ինծի
համար կը մնաս դարձեալ նոյն ցանկալի
պարմանուէին:

— Զիս կը շփացնես այդ չտիպանց
իմաստալից բառերովդ, — պատասխա-
նեց գոհունակ ժպիտով մը, — համեա-
տութիւն չի ներեր, որ բացայայտօրէն
ընդունիմ, ինչ որ հայելին մէջ ես ինչս
կը հաստատեմ ամէն օր:

— Իրականութիւններ կան, որոնք
միշտ պէտք է կրկնուին, ինչպէս աղօթք-

ներ, որոնք դարերէ ի վեր անփոփոխ
կ'արտասանուին հաւատացեալներու կող-
մէ: Գեղեցիկ ես, Հերմիոնէ՛, եւ գեղեց-
կութիւնդ կատարեալ է: Ափսոս չէ՞, որ
այդ գեղեցկութիւնդ մնայ չլիքայուած
բացասական բնաւորութեանդ անհազորդ
քմայքներով:

— Անցեալին, բոլոր հակադիպու-
թիւններս եղած են դրական, — ճշդեց
տխուր, — սակայն այսօրուան տրա-
մարանութիւնս կը թելադրէ, որ մար-
դոց հետ յարաբերութիւններս քողարկ-
ւած ըլլան զրոյական տրամադրութիւն-
ներով:

— Այդ խօսքերուդ ընդմէջէն յայտ
նշոյլ մը կը տեսնեմ, — ըսի խանդա-
վառ:

— Բաւական յամառ բանակցող մըն
ես, — գանգատեցաւ, — մէկ բան յըս-
տակ ըսեմ, — երբեւիցէ մի յուտար, որ
մեր դիրքերը կրնան փոխուիլ, ես կը մը-
նամ զոյրդ, դուն՝ եղբայրս, ու այսպէս
կը շարունակուի: Ի՛նչ եթէ ուրիշ անսալ
խօսքերուս, կը թելադրեմ, որ մեր դիր-
քերուն վրայ մնանք անխախտ ու մա-
քուր:

— Ըսեմ կարճ եւ կտրուկ, — գո-
չեցի, Ղդայնացած ոտքի ցատկելով,
— ես կը ծաղկեմ այս գեղջկական տրա-
մարանութիւնդ ու յստակ բառերով կը
յայտարարեմ. ես պէտք չունիմ աւելորդ
քոյրերու, ուշադրութիւն ըրէ, այնքան
վտանգաւոր եմ, որ կրնամ ամէն վայր-
կեան վրադ խոջանալ. կատակ չէ, որ
կ'ընեմ, վրաս եղբօր պէս մի նայիր սա-
կէ ետք, զիս մի գրգռեք նայուածքնե-
րովդ՝ ապա պաղ ջուր թափելու համար
դրացումներուս վրայ:

Այս բոլորը ըսած ատեն արգէն մին-
չեւ գուռը հառած էի: Առանց ետի դառ-
նալու՝ դուրս նետուեցայ ու վայրկեան
մը ետք, արգէն փողոցն էի, ամբոխին
մէջ:

Այնքան տարուած էի մտածումնե-
րով ու եզրակացութիւններով, որ գրե-
թէ ամէն քայլափոխիս մէկու մը կը
զարնուէի:

Բ.

Ինչո՞ւ Աստուած այսպէս ստեղծած է մարդ արարածը, հարց կու տայի ես ինծի յաճախ: Ինչո՞ւ այս յարաճուն ցանկութիւնը, միշտ նորին ու աւելի գեղեցիկին տենչացող այս անզուպ ու անյագ կիրթը, որ կ'անտեսէ ու կը հեղձէ ամէն օրէնք, ամէն պատուար, իր ուռճացումով ու պոթկումով կը ջրէ քաղցրական ու ծիսական ամէն խոշորոտ, ամէնէն մտայլ արամադրութիւնն իսկ կը պայծառացնէ ու կը լուսաւորէ, ինչո՞ւ...

Իր պատկերով ստեղծած է Աստուած մարդ արարածը, կ'ըսեն: Իսկ սիրոյ, սեռի եւ կիրթի առեղծուածը, որ կլանած է մարդու էութիւնը, եւ դեռ նախածի ու տիրամորթեան զգացումները ի՞նչ կանխամտածումով շարած է մեր արիւնին հետ: Ըստ էութեան, Աստուած ստեղծած է հարցականներ միայն, որոնց պատասխանները միշտ այ մնացած են պղտոր, հարցական...



Անցան շաբաթներ, ապա ամիսներ, Հերմիտէին չհանդիպեցայ: Յաճախ կը ջանայի մտքիս մէջ պատկերացնել իր անուշ աչքերն ու նուազկոտ նայուածքը, կը խանդավառուէի խելացնոր ծրագիրներով, կը մոռնայի ամէն ինչ ու քայլերս ինքնաբերաբար կ'ուղղուէին դէպի իր դրասնեակի: Մական դրան իսկ չմօտեցած, կ'այլափոխուէի յանկարծ, պազ ու տափակ պատասխաններու տարափր կը սթափեցնէր զիս ու կը վերադառնայի ընկճուած, պարտուած:

Մական կամքի ուժով, ժամանակ մը կըրցայ մէջս խեղդել այն վարար ցանկութիւնը, որով ողողուած էին զրայարանքներս այրիին հանդէպ:

Գուցէ տարի մը անցած էր, երբ դարձեալ հանդիպեցայ իրեն, փողոցը, բոլորովին պատահամբ:

Ինքնաշարժիս անիւը պայթած էր ու ես փոխնորդ անիւը տեղաւորելու աշխատանքին վրայ էի:

տանքին վրայ էի: Հեռուէն նշմարեցի, որ աղջիկ մը ժպտելով ինծի կը մօտենար:

Ինքն էր:

— Ինչպէ՞ս էք, տիկին Հերմիտէ, — ըսի կնամենտար եղանակով մը, — ո՞ւր կ'երթաք:

— Քիչ մը օդ առնելու, — պատասխանեց, — տարեկան արձակուրդս առած եմ ու սուներ նստելէն ձանձրացայ...

Ապա, պզտիկ դադարէ մը ետք՝

— Իսկ դո՞ւն ինչ կ'ընես, անի՞ւր պայթեր է, ի՞նչ զփրստութիւն:

— Ընդհակառակն, բարեբախտութիւն ըսէք, որովհետեւ եթէ այս դրժբախտութիւնը չպատահէր, ձեզի հանդիպելու բարեբախտութիւնը պիտի չունենայի:

— Այդպէ՞ս...

Միասին խնդացինք բարձրաձայն, առանց անցորդներու հետաքրքիր նայուածքներուն ուշադրութիւն դարձնելու:

— Հիմա, — ըսի դորձս վերջացնելէ ետք, — թեղի առաջակ մը ունի՞մ ընելիք:

— Գիտեմ, պիտի առաջարկես, որ միասին պզտիկ պտոյտ մը ընենք, բայց յարմար չէ:

— Ինչո՞ւ յարմար չէ, չէ՞ որ ես եղբայրդ եմ:

— Ծիչդ է, սովայն եկուր շաբ լեզու մարդոց հասկցուր, թէ մենք թոյր ու եղբայր ենք:

— Ո՛չ մէկուն հաշիւ տալու պարտաւոր չենք, կը բաւէ որ մեր սիրտը մաքուր ըլլայ:

— Ծիչդ է, սակայն մարդիկ օրէնքներ դրած են ու հասարակ մահկանացուի մը համար անկարելի է այդ օրէնքներուն դէմ ծառանալ:

— Ուրեմն կը մերժե՞ս:

Չուզեց անմիջապէս պատասխանել: Ակնրեւ էր, որ հոգին փոթորկած էր խուլ պայքարի մը հետեւանքով:

— Ուրե՞մն, — կրկնեցի հարցումս, չեղտակի նայելով աչքերուն:

Արդէն սկսած էր միջնալ: Մեղձ գե-

Այս գեղանի կնոջ կուրծքին տակ անկասկած, վշտի կուտուկուած շերտեր կային, սակայն ամուսինին մահէն հինգ տարի ետք, արդեօք արամամանական կրնային ըլլալ ընդվզումի այս արտա- յայտութիւնները, յոռետես ճշմարտութեանց այս պոռթկումը:

— Մի կարծեր, որ Համոզիչ են խօսքերդ, — րսի պահ մը լուռ մնալէ ետք, — եթէ ոյնքան յոռետես ըլլանք, ըսելու համար, որ վերջին ու ամբողջական յաղթանակը մահուան կը պատկանի, այն ատեն ինչո՞ւ կը պայքարինք կերտելու համար միշտ աւելի կատարելագործուած քաղաքակրթութիւն մը, ինչո՞ւ որէ օր կը պարարտանանք սպաննանոց տարուելիք ոչխարի մը նման: Աւելի գործնական չէ՞ր ըլլար կաթիլ մը թոյնով կեանքին վերջ դնել: Նոյնիսկ անբան ոչխարը, որ սպանկանոց կ'երթայ, իր եղերական վախճանով, իր համեստ բաժինը բերած կ'ըլլայ լաւագոյն քաղաքակրթութեան մը հաշուոյն մզուած պայքարին: Ուրեմն, մեր գոյութիւնը անկասկած իմաստ մը ունի: Վստահ եղի՞ր, որ քիչ մը յաւտեսութիւնը կ'օգնէ, որ մեր կեանքը դառնայ աւելի զլաւթ ու արդիւնաւոր:

— Դժուար բան է երիտասարդ ըլլալ եւ իմաստուն, — առարկէց ժպտելով, — արամամանական է, որ ամէն ինչ վարդազոյն տեսնես, ծրագիրներ մը շակեւ ու եռանդով գործի անցնիս՝ զանոնք իրականացնելու համար:

— Համաձայն եմ թողի, — հաստատեցի ծիծաղելով, — որքան ալ իմաստուն մենք մայրիկէ հոգիներ առնեն, ինծի համար կը մնաս դարձեալ նոյն ցանկալի պարմանուհին:

— Ձիւ կը շփացնես այդ չափազանց իմաստալէց բառերովդ, — պատասխանեց գոհունակ ժպիտով մը, — համեստութիւնս չի ներեր, որ բացայայտօրէն ընդունիմ, ինչ որ հայելիին մէջ ես ինքս կը հաստատեմ ամէն օր:

— Իրականութիւններ կան, որոնք միշտ պէտք է կրկնուին, ինչպէս ազօթք-

ներ, որոնք դարերէ ի վեր անփոփոխ կ'արտասանուին հաւատացեալներու կողմէ: Գեղեցիկ ես, Հերմինէ՛, եւ գեղեցկութիւնդ կատարեալ է: Ափսոս չէ՞, որ այդ գեղեցկութիւնդ մնայ չղթալուած բացասական բնաւորութեանդ անհաղորդ քմայքներով:

— Անցեալին, բոլոր հակադրեցութիւններս եղած են զբազան, — ճշգեց տխուր, — սակայն այսօրուան տրամաբանութիւնս կը թելադրէ, որ մարդոց հետ յարաբերութիւններս քողարկուած ըլլան քրոջական տրամադրութիւններով:

— Այդ խօսքերուդ ընդմէջէն յոյսի նշոյլ մը կը տեսնեմ, — ըսի խանդավառ:

— Բաւական յամառ բանակցող մըն ես, — դանդաղեցաւ, — մէկ բան յըստակ ըսեմ, — երբեքիցէ մի յուտար, որ մեր դիրքերը կրնան փոխուիլ, ես կը մընամ քոյրդ, դուն՝ եղբայրս, ու յայպէս կը շարունակուի: Եւ եթէ ուղես անսալ խօսքերուս, կը թելադրեմ, որ մեր դիրքերուն վրայ մնանք անխախտ ու մաքուր:

— Ըսեմ կարճ եւ կտրուկ, — գոչեցի, ջղայնացած ոտքի ցատկելով, — ես կը ձողկեմ այս գեղջկական տրամաբանութիւնդ ու յստակ բառերով կը յայտարարեմ. ես պէտք չունիմ աւելորդ քոյրերու, ուշադրութիւն ըրէ, այնքան վտանգաւոր եմ, որ կրնամ ամէն վայրկեան վրադ խոյանալ. կատակ չէ, որ կ'ընեմ, վրաս եղբօր պէս մի նայիլ ասկէ հտք, զիս մի գրողեր նայուածքներովդ՝ ապա պաղ ջուր թափելու համար զպացումներուս վրայ:

Այս բոլորը ըսած ատեն արդէն մինչեւ դուրը հասած էի: Առանց ետիս դառնալու՝ դուրս նկատեցայ ու վայրկեան մը հտք, արդէն փողոցն էի, ամբոխին մէջ:

Այնքան տարուած էի մտածումներով ու եզրակացութիւններով, որ զրեթէ ամէն քայլափոխիս մէկու մը կը դարնուէի:

Բ.

Ինչո՞ւ Աստուած այսպէս ստեղծած է մարդ արարածը, հարց կու տայի ես ինձի յաճախ: Ինչո՞ւ այս յարաճուն ցանկութիւնը, միշտ նորին ու աւելի գեղեցիկին տենչացող այս անզուսպ ու անյազ կիրքը, որ կ'անտեսէ ու կը հեղնէ ամէն օրէնք, ամէն պատուար, իր ուրուստում ու պոռթկումում կը ջրէ բարոյական ու ծիսական ամէն խոչընդոտ, ամէնէն ժոպլ տրամադրութիւնն իսկ կը պայծառացնէ ու կը շուտարէ, ինչո՞ւ...

Իր պատկերով ստեղծած է Աստուած մարդ արարածը, կ'ըսեն: Իսկ սիրոյ, սեռի եւ կիրքի առեղծուածը, որ կ'լանած է մարդու հոգիները, եւ զիս նախանձի ու տիրամոլութեան զգացումները ի՞նչ կանխամտածումով շարած է մեր արեւին հետ: Ըստ հուրիան, Աստուած ստեղծած է հարցականներ միայն, որոնց պատասխանները միշտ ալ մնացած են պզտոր, հարցական...



Անցան շարաքներ, ապա ամիսներ, Հերմիտէին չհանդիպեցայ: Յաճախ կը ջանայի մտքիս մէջ պատկերացնել իր անուշ աչքերն ու նուազկոտ նայուածքը, կը խանդավառուէի խելացնոր ծրարիւններով, կը մտնայի ամէն ինչ ու քայլերս ինքնաբերաբար կ'ողողուէին դէպի իր դրսոնեակը: Սակայն դրան իսկ չմօտեցած, կ'այլափոխուէի յանկարծ, պաղ ու տափակ պատասխաններու տարափը կը սթափեցնէր զիս ու կը վերադառնայի ընկճուած, պարտուած:

Սակայն կամքի ուժով, ժամանակ մը կըրցայ մէջս խեղդել այն վարար ցանկութիւնը, որով ողողուած էին զայսարանքներս այրիին հանդէպ:

Գուցէ տարի մը անցած էր, երբ դարձեալ հանդիպեցայ իրեն, փողոցը, բոլորովին պատահամբ:

Ինքնաշարժիս անիւր պայթած էր ու ես փոխնորդ անիւր տեղադրելու աշխատանքին վրայ էի:

տանքին վրայ էի, Հեռուէն նշմարեցի, որ աղջիկ մը ժպտելով ինձի կը ծօռնար:

Ինչն էր: — Ինչպէ՞ս էք, տիկին Հերմիտէ, — ըսի կհամեծար եղանակով մը, — ո՞ւր կ'երթաք:

— Քիչ մը օդ առնելու, — պատասխանեց, — տարեկան արձակուրդս առած եմ ու տունը նստելէն ձանձրացայ...

Ապա, պզտիկ դադարէ մը ետք՝ — Իսկ դո՞ւն ինչ կ'ընես, անի՞ւր պայթեք է, ի՞նչ դժբախտութիւն:

— Ընդհակառակն, բարեբախտութիւն ըսէք, որովհետեւ եթէ այս դրժբախտութիւնը չպատահէր, մեղի հանդիպելու բարեբախտութիւնը պիտի չուենայի:

— Այդպէ՞ս...

Միասին խնդացինք բարձրաձայն, առանց անցորդներու հետաքրքիր նայուածքներուն ուշադրութիւն դարձնելու:

— Հիմա, — ըսի զործօ վերջացնելէ ետք, — քեզի առաջարկ մը ունիմ ընելիք:

— Գիտեմ, պիտի առաջարկես, որ միասին պզտիկ պտոյտ մը ընենք, բայց յարմար չէ:

— Ինչո՞ւ յարմար չէ, չէ՞ որ ես եղբայրդ եմ:

— Ճիշդ է, սակայն եկուր շար լեզու մարդոց հասկցուր, թէ մենք զոյր ու եղբայր ենք:

— Ո՛չ մէկուն հաշիւ տալու պարտաւոր չենք, կը բաւէ որ մեր սիրտը մաքուր ըլլայ:

— Ճիշդ է, սակայն մարդիկ օրէնքներ դրած են ու հասարակ մահկանացուի մը համար անկարելի է այդ օրէնքներուն դէմ ծառայել:

— Ուրեմն կը մերժե՞ս:

Չուզեց անմիջապէս պատասխանել: Ակններեւ էր, որ հոգին փոթորկած էր խուլ պայքարի մը հետեւանքով:

— Ուրե՞մն, — կրկնեցի հարցումս, չեշտակի նայելով աչքերուն:

Արդէն սկսած էր մթննալ: Մեղմ դե-

փրկողը կը խաղար իր վարտերուն հետ ու իր նուազիտոս նայուածքը կը մատնէր իր տառապանքը, տկարութիւնը:

— Մտի՛ր, — ըսի ինքնաշարժին դուռը բանալով, — արդէն մութ է եւ ոչ ոք կրնայ ճանչնալ մեզ:

Մտաւ առանց ընկրկելու: — Բայց պէտք է մենք մեզ ճանչնանք, — եղբակացուց նշանակալից նայուածքով:

Անցանք անտառներու մէջ սողոսկող դարձաբաճիկ ճամբաներէն: Աշնանային իրիկունը կը մաղուէր թեթեւ, ծոռերու սաղարթններուն վրայ, մինչ լուսինը կը փալիւլէր ամպերուն մէջ, յարդերուն վըրայ նետուած մանգաղի մը նման:

Լուսին մըն ալ ինքն էր, քովս, ինքնաշարժին մէջ նստած, լուսաւոր դէմքով ու տրտում աչքերով, մաղերը խառնուած իրիկուան մութ Փոնին: Հրաշալի փերի մը, որ իր ներկայութեամբ կը լեցնէր հոգիս...

Ապա կը զգայի սրտիս զարկերը, որոնք հաս-հաս կ'արձագանցէին կուրծքիս տակ. քաղցր շերտութիւն մը կը պարուէր ամբողջ մարմինս ու կը սարսուռայի թեթեւ դողով մը...

— Ինչո՞ւ չես խօսիր, — հարց տուաւ յանկարծ լուսնիկը խղիւղով, — դուն, որ այնքան շատախօս ես:

— Ի՞նչ խօսիմ, վայրկեաններ կան, երբ լուսնեամբ շատ աւելի բան կարելի է հասկնել, քան խօսքերով:

— Գիտես որ, — ըսաւ ծիծաղելով, — այնքան թափանցամիտ չեմ, բացէ ի բաց ըսէ ինչ որ լռելեայն կ'ուզես հասկըցնել ինձի:

Նեղ կացութեան մը մատնուած էի: Գիտէի, որ տակաւին կանխաճառ էր սիրոյ որեւէ արտայայտութիւն, որովհետեւ կը զգայի իր յամառ անհատականութիւնը, որ վայրկեանէ վայրկեան աւելի կը շնչուէր, մինչ ես կը թուրնայի...

— Կ'ուզէի, որ խօսիս ամուսինիդ մասին. ինչպիսի՞ մէկն էր:

— Ո՛հ, — հառաչեց, — լուսահոգին մարդ էր, իսկական մարդ: Երբ հան-

դիպեցանք, ես տասնութ տարեկան էի, ինք՝ քսան: Բարձրակրթուած էր, աղուոր, դանդուր մաղերով, խելացի աչքերով, կատարեալ երիտասարդ մը: Իսկ ես լոյսի կտոր մըն էի...

— Ատիկա կասկածէ վեր է, — հաստատեցի:

Ինք շարունակեց, բոլորովին վերացած.

— Երկու տարի զազմուորէն սիրեցինք զիրար, ապա ողբերգական կացութեան մը սպառնալիքին տակ՝ ստիպուեցանք ամուսնանալ, հակառակ մեր ծնողներու հաւանութեան...

— Ի՞նչ հովուերգութիւն, հետաքրքրական է, շարունակէ...

Նայուածքը արտակարգ փայլ մը ստացած էր ու կը խօսէր, կարծես մաղնիքացած՝ աներեւոյթ ուժէ մը.

— Մասն մը ունեցանք, ու մեր ամուսնութեան առաջին տարեդարձն իսկ շատնած՝ ամուսինս մահացաւ. նորակառոյց շէնքի մը փլատակներուն տակ մընալով...

Այստեղ աչքերը թրջուեցան, թաշկինակով սրբեց զիթը ու ինձի նայեցաւ յուսահատ:

— Կր տեսնե՞ս ինչ տխուր է, — շարունակեց ջիւղ մը թեթեւցած, — Առտուած իսկ նախանձեցաւ մեր երջանկութեան: Ինչո՞հ ամուսինս զոհ գնաց շար աչքերու եւ շար լիզուներու:

— Չար աչքերու կը հաւատա՞ս, — հարցուցի հետաքրքիր:

— Անշուշտ կը հաւատամ, միթէ դուն չե՞ս հաւատար:

— Ես ալ կը հաւատամ: Թէեւ անհաւատ մըն եմ, սակայն կը հաւատամ շատ մը ժխտական ու շար ուժերու: Կը հաւատամ շար ողիններուն, շար աչքերուն: Կը հաւատամ նաեւ հողի անմահութեան: Վստահ եմ, որ որոշ անհատականութիւն կրող հողին չի կորսուիր, թէեւ այդ եղբական վերապրումը կարելի է յաւիտենական տանջանք կոչել, քանի որ արտայայտութեան ո՛չ մէկ կարելիութիւն կը տրուի իր հողեղէն պատեանէն մերկացած այդ աներեւոյթ դո-

յութեան: Կը տեսնե՞ս, մահէն աւելի ախուր է, երբ անցնին մահէն անդին: Մինչ հաստացեալները դրախտ կ'երազեն, անհաստները կը սորոսափին մոխրացնող սերմակէտէն, իսկ ես յայտով կ'ապրիմ. գուցէ հողինները զիրար կը հասկնան, գուցէ հաղորդակցութեան միջոցներ ունին, կը հասկնան՞ս ինչ կ'ըսեմ. գուցէ ամուսինդ հիմա մեր քովն է, հո՞ս, ու կը փորձէ զդացնել իր ներկայութիւնը ցաւազար յուղումներով ու դուր ճիղերով: Գուցէ իր վատուժ պոչութեամբ կը ծանրանայ ինքնաշարժիս դեկին վրայ, մեզ սա անդուռէն վար գրլորելով մահացնելու, աւելի շուտ՝ քեզի միանայու համար...

— Պարտապ բաներ կը խօսիս, — ընդմիջեց Հանդարտօրէն ու զարձեալ յուզեցաւ: Ծնւառութիւնը անհանդարտ էր ու աչքէն վար սառող արցունքի կաթիլ մը փայլեցաւ մութին մէջ:

Ձեռքը առի ափիս մէջ ու նայեցայ աչքերուն:

Անսահման տխրութիւն մը կը ծորէր նայուածքէն: Ի տես իր այդ երեւոյթին, ամէն կիրք ցամքեցաւ մէջս, ցանկութիւններս վերածուեցան մարած մոխիրներու:...

— Կը տեսնե՞ս, — ըսաւ զիչ մը Հանդարտեղէ ետք, — ինչ փայլուն էր կեանքիս սկզբնաւորութիւնը, իսկ հիմա ձախուղած մըն եմ միայն:

— Ամենեւին: Ես կեանքի մէջ յաջողած կը սեպեմ կին մը, որ ամուսնացած է ու զաւակ ունեցած: Ան կրնայ բլլալ միջինատէրի մը, աղբահաւաքի մը կիներ եւ կամ... այրի մը: Մանրամասնութիւնները կարեւոր չեն: Կարեւորը՝ ծրնել, աճել եւ պողաբերելու բնութեան օրէնքին կատարումն է, բնականաբար մարդկութեան ճշգրտ կանոններու ծիրին մէջ:

ձամբան կ'երկնար մութ ժապաւէնի մը նման, որ տեղ-տեղ կը կարատէր ելեկարական լոյսերով: Ինքնաշարժս կը սուրբար ճեղքելով ողբ, որ զով յորձանքներով կը շոյէր մեր երեսները:

Իր ձեռքը զեռ կը հանուէր ափիս մէջ, սակայն այլեւս կիրքերս մեղմացած էին: Կը նմանէի լեռները մաղցող ալփիներու մը, որ դէպի բարձրաբերձ դադաթը ուղղուող իր սուրբունքի մէջ, հանգրուանի մը նուաճումէն ետք, կանդ կ'տունէ գոհունակութեամբ, քիչ մը շունչ առնելու եւ այս մասնակի յաղթանակը ըմբռնելու համար:

Յաճախ, մաղբը շոկելու համար, ձեռքը դուրս կը բերէր ափէս ու սպաս մեքենարար կը վերադարձնէր: Կը դպայի, որ քիչ-քիչ ինք ալ կը վարակուէր մարմինս լուփլիղող զգացումով, ու երբ նայուածքս կ'ուղղէի դէմքին, կը կարծուրէր ու աչքերը կը խոնարհեցնէր:

— Ինչո՞ւ չես խօսիր: — Ի՞նչ խօսիմ, — պատասխանեց խեղդուկ ծայրով, — այն զղացումը ունիմ այդ պահուն, որ կարծես ամուսնոյս կը դաւանանեմ:

— Ձե՞ս կարծեր, որ իսկական հաճոյքը բուն այդ դաւարութեան մէջ է, — բսի պահ մը լուռ մնալէ ետք, — ազատ սէրը շատ քիչ անգամ կը խոնդափառէ եւ յաճախ բռնադրօսիկ է, մինչդեռ սէրը, որ ենթակայ է արգելքներու, շարունակ կը փրփրի եւ կ'ուսուսանայ, կը վարարի եւ կը յորդի, իր խօլ արշափին հետ սանելով բարոյական ու տրամաբանական ամէն պատուար:

— Գուցէ ճիշդ են խօսքերդ, — յարեց Հետաքրքրութեամբ:

— Այսօր կը գոհանամ միայն ձեռքդ բռնելով, — պատասխանեցի ժպտուն, — հիմակուհիմա այս պարզ հպումը պէտք եղած խանդավառութիւնը կը պաւանտէ ինձի:

— Իսկ ես կ'ըսեմ քեզի, որ ձեռքէս աւելի անդին չես կրնար երթալ, թոյլ չեմ տար, որ երթաս:

— Ո՞վ կը խօսի աւելի անդին երթալու մասին, — բսի խնդրայով, — մտոցա՞ր, չէ՞ որ քոյր-եղբայր ենք:

— Այո, միշտ նկատի ունեցիր, որ քոյր-եղբայր ենք:

Գ.

Մովեղերեայ օրճարանի մը մէջ էի, առանձին:

Մտածումներս սմբողովութեամբ կեդրոնացած էին այն շփոթ զգացումներուն վրայ, որ տիկին Հերմինէն անդալալար կը հազարդէր մեր Հանդիպումներուն ընթացքին: Իր աչքերը՝ զգուանքներու ծարաւ հողիին պատուհաններն էին, ձեռքերը՝ պազ ու անհազորդ: Շրթները՝ մեղաւոր էին ու ցանկալարոյց, խօսքերը՝ առփակ ու վհատեցնող:

Սակայն, որոշած էի այս արկածախնդրութեան մինչև ծայրը երթալ: Խորքին մէջ, մտահօրէն դիտելի, որ ինձի հանդէպ ունէր խոր կամակրանք մը, որ դեռ ծպտուած էր քոյր-եղբոր պետակին տակ:

Ոտքի մէջ, դիտումսուր կերպով հասկցուցած էր, որ յաջորդ օր դարձեալ պիտի անցնէր նոյն վայրէն, դարձեալ նոյն ժամուն:

Անմիջապէս Հոն փութացի: Սկսայ երթիւնելի գանդաղ ընթացող, երբ յանկարծ, անկիւնէն յայտնուեցաւ:

— Բարի իրիկուն, տիկին, — ըսի ժպտելով:

Կարծես յանկարծակիի եկած կանգ առաւ ու ժպտեցաւ:

— Եթէ երէկուան պտոյտը հաճոյք պատճառեց ձեզի, — աւելցուցի, առանց խօսելու առիթ տալու իրեն, — գարձեալ կը հրաւիրեմ ձեզ, սր...

— Անհունօրէն հաճելի է, — պատասխանեց խօսքս կտրելով, — սակայն ի՞նչ կը մտածես, պատշաճ է:

— Փամանակը սկի է, — ըսի, ու արագօրէն ուղղուեցանք զէպի ինքնաշարժը:

Ակնհերեւ էր, որ այդ փողոցէն անցնելու միակ դրողպատճառը, ինձի հանդիպելու դիտաւորութիւնը եղած էր, այնքան սիրայօժար կերպով ընդատալեց հրաւերին: Ժպիտով մը բարեկալուստ մաղթեցի ու ձեռքը բռնելով՝ որպիսութիւնը հարցուցի:

Գարնանային նոյն անուշ իրիկունն

էր, նախորդ օրուան նման, գրեթէ նոյն ժամը, նոյն ճամբան: Միակ տարբերութիւնը, Հերմինէի բարեկամեցողութիւնն էր, որովհետեւ երկար ատեն որեւէ փորձ չլրացաւ ձեռքը ափէս քաշելու, ընդհակառակն, յաճախ, որոշ պարագաներու, երբ ինքնաշարժը վարելու համար երկրորդ ձեռքիս ալ պէտք կ'ունենայի, ի՛նք կը փնտռէր ձեռքս, մատները անցընելով մատներուս ու քնքջօրէն սեղմելով:

— Շատ մտածեցի, — ըսաւ յանկարծ լրջանալով, — երէկ դիւրեւորէն մինչև այս վայրկեանը, քո մօտիդ ու մանաւանդ ի՛մ մասին մտածեցի: Զգացի վերջապէս, որ ընթացող թաքուն ճիգ մըն էր, վերջ մը դնելու կեանքի ու հաճոյքներու հանդէպ ունեցած անտարբերութեանս, ճիգ մը՝ դիս զէպի կեանք մղելու: Ենթահակալութեամբ կը յայտնեմ, որ պէտք է վերադառնալ ինքն ինքն կամ համոզումներս, որոնք բոլորովին յուսահատ արամադրութիւններէ ծընունդ առած էին: Հիմա կեանքին կը նայի՞մ այնու իբրև մէկը, որ իրաւունք ունի վայելելու անոր բարիքները, սեւէ այլ մասհանացուի մը նման:

— Կը շնորհաւորեմ քեզ, այս իմաստուն որոշումներուդ համար, — բսի խանդավառ:

Իրիկունը յդի էր ցանկալարոյց երազներով: Քիչ մը շուսյօրէն դործածած իր անուշահոտը ունեղերս կը լիցնէր, ու սիրտս կը յորդէր երանուէտ արբեցութեամբ:

— Յայտնեմ քեզի խոկումներուս արդիւնքը, — ըսաւ յօտակ ու ինքնավրտահ, — որոշեցի ինքզինքիս թոյլատրել պտոյտներ՝ այսպիսի պարկէշտ պայմաններու տակ:

— Այսինքն՝ քոյր — եղբայրական փոխարարութիւններ, — ըսի քիչ մը սրտնեղած:

— Մի բարկանար, կարելի՞ է այսպանել մէկը, որ կ'ուզէ պարկէշտ մնալ:

— Պարկէշտութիւնը՝ քեզի համար, կ'երեւի հաճոյքներու դրժումն է, — ըսի նոյն սրտնեղ արամադրութեամբ, —

ուրեմն մէկը, որ տեղի կու տայ դրոշմաւորութեան կամ սեռային ախորժակներու զեղումին, քու կարծիքովդ անպարկեշտ է:

— Այո, ճիշդ այդպէս:

— Եո կը կարծեմ, թէ անարդար ես այդ համոզումներու մէջ: Իմ կարծիքով, մարդ պէտք է պարկեշտ ըլլայ նախ ինքն իր հոգիին մէջ, ինքն իր անձին հետ, ապա յարաբերական պարկեշտութիւնը փնտռէ իր գիմացիին քով: Աւելի յստակ խօսիմք. արդեօք խօսքերդ կը համապատասխանեն զիջումներու... սարսուռը, որ մատներէդ կը փոխանցես մարմնիս, խօսքերուդ ճիշդ հակառակը չ'ըսե՞ր...

Այստե՞ք պահ մը լուռ մնացի, թոյլ տալու համար, որ պատասխանէ, սակայն չխօսեցաւ:

— Ձեռ խօսիր, — ըսի, — անդամի մը համար պարկեշտ ես գոնէ...

— Ո՛չ, ո՛չ, կը սխալիս, — աղաղակեց չափազանց յուզուած, — անկասկած չեմ հասկնար պայքարը, որ կը մղուի մէջս: Դուն քու երիտասարդի տրամաբանութեամբդ այնքան տուժ կ'երթաս, որ... դեմքէ արժանապատուութիւնս կը վիրաւորես: Մինչդեռ ես կը խորհիմ, որ պէտք է հասկցած ըլլայիր, թէ ես կին մըն եմ, այրի մը, որուն համար մարդկութեան օրէնքները անտես են զրացական նրբութիւնները: Պէտք է սեւ հագնիմ, կը հասկնա՞ս, որպէսզի կարենամ մարդոց աչքին երեւիլ: Քեզի կը թողում մնացեալին եզրակացութիւնը, ամէն ինչ պէտք է սքողուած ըլլայ այս սեւերով, ամէն երազ, ամէն թոհի՛ք՝ ա՛յս սեւերով, ի՞նչպէս կընամ պարկեշտ ըլլալ ես ինձի հետ: Որքան կըցայ կոտորակ, դուն կը թելադրես, որ պատեմ այս սեւերը, եւ կուրօրէն հետեւիմ թմայլենքերու ու տենչերուս ձե՛ր չէ...

Ձեռքը քաշեց ափիս մէջէն ու սկսաւ արտասուել:

Բառեր չգտայ պատասխանելու, որովհետեւ իրաւունք ունէր: Իր ծրագրերը որչէք էին, թուղթերը քացած էր:

Մինչդեռ իմ մեքենայութիւններս կը ձգտէին պղտոր նպատակներու:

Ինքնաշարժը կեցուցի ճամբուն ետքերը:

— Կը բաւէ լուս, — ըսի անհուն գորովով, — ուրախ ժամանցի համար եկանք ու տես թէ ուր հասանք:

Երբ ձեռք տարի մաղերուն, շոյելու համար, ընդոտ շտկուեցաւ ու աւազերու նայեցաւ: Իր նայուածքին մէջ արհաւիրք կար: Յանկործ նախազայց, թէ ո՞ւր կ'ուղէի հասնիլ, ու մատներով մէկդի հրեց ձեռքս:

— Ձհամարձակիս ուրիշ անգամ, — ըսաւ մեղմ, քայց սաստող ձայնով, — ուրեմն ա՛յս է քու հասկցած պարկեշտութիւնդ:

Մագերը երկու ձեռքերով շտկուեց ու գլուխը շտկեց հպարտ:

— Խնդրեմ, միարդասնանք, — ըսաւ շուրջ շտկով:

Ես շուարած էի:

— Կը բուէ՛, — պոռայի երեսն ի վար, — այս ի՞նչ կասկածամտութիւն է, ի՞նչ կարծեցիր զիս, գո՞ղ եմ, թէ դազան, կը կարծես կեանքիս մէջ կին տեսած չե՞մ, ինչո՞ւ այս ծիծաղելի կասկածը, եթէ այնքան աղտոտ մէկն եմ, ինչո՞ւ հետս առանձին եկար մինչեւ այստեղերը, խօսեցար զպայտանքերու ու ծրագրերու մասին: Եթէ զիս եղբայրըդ կը սեպլիլ, ինչո՞ւ այդ պարզ դրոշմաւոր շրջաններըդ որպէս քոյր:

Ինքնաշարժը աշխատեցաւ եւ սուրացի՝ ահագին ազմուկ յարուցանելով: Յօնքերս պոստած էի ու նայուածքս դաժած ճամբուն:

Բաւական ատեն լուռ մնացինք, երկուքս ալ, մագնիսացած ինքնաշարժին արագութեան առթած սոսկումէն:

— Կը խնդրեմ, որ քեզ մը դանդաղեցնես:

Ինքնաշարժին ընթացքը դանդաղեցուցի, սակայն չպատասխանեցի խօսքերուն, նայուածքս ճամբուն դաժուած պահելով:

— Կը խնդրեմ, որ անյիշար ըլլաւ, — թախանձեց թեւս բռնելով, —

մտքի բաժանում, կը տեսնես, որ տակնուվրայ եղած էի, խօսքերուս հակակրճիւր կորսնցուցած էի, ինչո՞ւ հասկնալ չես ուզեր...

Ես թէեւ մտքիս մէջ ներած էի իրեն, սակայն դեռ բարձրաձայն չէի խոստովաներ ու կը մնայի, իբրև թէ՛ անգրգռուելի իր թախանձանքներուն դիմաց: Կը զգայի, որ եկած էր վերջապէս պահճը, երբ պիտի կարենայի ձեռք ձգել ի՞նչ որ կը ցանկայի:

— Ի՞նչ կ'ուզես, ըսէ, — հարցուց քնքուձեամբ, — այս քառորդ ժամը մտքիս, կ'ողջակեմ, ինչո՞ւ չես ուզեր հասկնալ, ես պէտք ունիմ քու խօսքերուդ, իրախոսիդ...

— Իսկ գղտանքներուս պէտք չունի՞ս, — հարց տուի առանց իրեն դատաւարու:

— Կ'աղաչեմ, նորէն մի սկսիր:

— Կ'ուզեմ, որ յստակ ըլլաս ու միանգամընդմիջտ պատասխանես. դրդանքներուս պէտք չունի՞ս:

— Ձիս նեղ կացութեան մը մէջ կը զնես:

— Անգամի մը համար քաջ եղիր, հոս առանձին ենք, ինչո՞ւ կը քաշուիս, ըսէ՛ յստակ եւ մեկին. այո՞՞ թէ ոչ...

Ինքնաշարժը կեցուցի ճամբուն եզերքը, հսկայ ծառի մը տակ:

Հերմիէն լուռ կը մնար, նայուածքը խնայարձակ, տրտում ու ընկճուած:

— Փաջ եղիր, — ըսի կզակէն բրունելով ու զէմքը ինծի դարձնելով, — դիտցիր ինչ է ուզածդ ու աշխատէ ձեռք ձգել զայն:

Երբ միւս ձեռքովս թուշը շոյեցի, փորձեց ժպտիլ, սակայն չկրցաւ ու յանկարծ փղձկեցաւ: Դէմքը խրած ծոցիս մէջ, հեկեկաց երկար, բուռն ցնցումներով:

Ես իր մետաքսէ սեւ մազերը կը գրգռէի, յաճախ կրկնելով:

— Լաց, լաց, այս լացը ուրիշ լաց է, այս լացը տխուր ու անհաղորդ օրերու թաղման լաց է, լա՛ց...

— Վախճամ քմայքոտ երեխայի մը նմանցնես զիս, — ըսաւ հազիւ վանկերը

իրարու կապելով, — խնդրեմ, հասկցիր զիս, մի ծիծաղիր վրաս:

Ես գինք արգէն բազուկներուս մէջ զրկած էի, ու կրակա խրած իր ծածկունքն մէջ: Վարակուած էի իր յուզումներով, իր ցուերով, իր վշտերով, կը խղճայի իր անպաշտպան գրութեան, իր անգոր ու անօգնական վիճակին:

— Անհող եղիր, — վստահացուցի զինք, — բնաւ մի մտահոգութիւն ծիծաղելով, կը լսե՞ս, եթէ սիրտդ լաւ կ'ուզէ՛ լաց, եթէ ծիծաղիլ կ'ուզես՝ ծիծաղէ, եթէ օր մը կեանքէդ զոտիս եւ ուզես անձնասպան ըլլալ՝ վերջ տուր կեանքիդ, ասիկա է ապրելու դործնական ոճը:

Լսեցի, թոյլ տայու համար, որ իր կարծիքը յայտնէ մտածումներուս մասին:

— Խօսէ, կ'աղաչեմ, խօսէ՛, — թախանձեց, — քու խօսքերդ ուղղակի սրբտիս կ'երթան, ըսէ, ուրիշ ի՞նչ պէտք է ընեմ...

— Դո՛ւն պէտք է որոշես ընելիքդ, ամէն մարդ ի՛նք պէտք է զգայ իր կարողութիւնները եւ ըստայնժ սահմանէ իր կեանքի ուղին: Յեղաշրջումներու դարուն մէջ կ'ապրինք, ամէն կողմ կը լրտես, որ հաւասարութիւն կը քարոզեն: Անոնք ճախողած մարդիկն են, որ այդպիսի քմահաճ կարգախօսներով կ'ուզեն յափշտակել ուրիշին ստացուածքը: Եթէ արդարութիւն պահանջեն՝ արամբանական է, սակայն հաւասարութիւն, այնպէս՝ ինչպէս կ'երազեն ճախողած մարդիկ, անկարելի է ու անարամբանական: Բնութիւնը արդէն իր խօսքը ըսած է հաւասարութեան մասին, մարդիկ հաւասար կը ծնին, մերկ, անբարբառ ու անօգնական, ասիկա հաւասարութիւն չէ՞: Եթէ հաճոյքի տրամադրած ժամանակս զոհէի օրեւէ այլ փառասիրութեան իրականացման, կը վստահեցնեմ քեզի, ո՞ր յարատեւ երդերով ու կեդրոնաձիգ մտասեւեռումով անպայման կը յաջողէի: Սակայն ինծի համար, կեանքին ծուրը հաճոյքն է: Հաճոյք՝ ուսումի, հաճոյք՝ ընթերցանութեան, խաղամուրթեան, Գույշ առարկես, թէ մարդ սղջատ կամ

Հարուստ կը ծնի, ինչ որ կը խախտէ բընութեան գծած հաւատարութեան սկզբունքը: Մնանկացած Հարուստներ չե՞ս տեսած, կամ հարստացած աղքատներ: Այս վերիվայրուստները մէկ օրէն միւսը չկատարուեցան: Ունեցան իրենց ազդակները: Մէկը մտնեց՝ միւսը ինայեց, մէկը ծուլացաւ՝ միւսը աշխատանքով հասաւ իր նպատակին: Հիմա առնենք զեզ ու վերլուծենք: Այսքան ճշմութենէ ետք, այս հինգ երկար տարիներու խոկումի, ինքնամոխուսումի ու զրկանքի տարիներէն ետք, ամէնէն շատ ի՞նչ բանն է, որ կ'ուզես ընել, անկեղծօրէն պատասխանէ...

— Կ'ուզեմ ապրի՛լ, ապրի՛լ, — ազգականք զգուիք բարձրացնելով, — ապրի՛լ ու վայելել կեանքը, ապրի՛լ, գիտովա՛լ, պատե՛լ այս սեւ Հանդերձները, շնչել ազատ ու ապրի՛լ, ապրի՛լ...
Ուսերէն բռնեցի արկերովս:

— Հիմա դատար կեանքիդ ուղին, սրտիդ ու հոգիիդ թելադրած ուղին, Հիմա այնքա աշխատողութիւնդ, նախ գտիր, թէ ո՞վ է այս բոլորին արդեւք Հանդիսացողը:

— Ձեմ դիտեր, — թոթովեց խեղճացած:

— Դո՛ւն, — ըսի նայուածքս զամբողջով իր աչքերուն, — դո՛ւն ես քու անձիդ ամենամեծ թշնամին: Դո՛ւն՝ որ կը բռնանաս զգացումներուդ վրայ:

— Բայց չէ՞ որ այրի մըն եմ, ի՞նչպէս կրնամ ազատ ընթացք տալ հոգիիս թռչններուն:

— Այրի ես, հա՛, որո՛ւն այրին ես արդեօք, կրնա՞ն ինծի խիղիսօրէն ըսել, ամուսինի՞դ այրին, թէ կեանքի այրին: Եարթթ մը լացիր, երկու շաբաթ, ամիս մը, վե՛րջը: Առաջին քանի մը օրերը, ամէն վայրկեան կը յիշէիր Հանդուցեայը, ապա օրը քանի մը անգամ, յետո՞յ... ամուսինիդ մարմինը մոխիր չդարձած, արդէն մոռցած էիր զինք, սակայն նախամեծնութեան պա-

կասը կը ստիպէր, որ մնայիր այրի, անծանօթ մէկու մը այրին, կրնա՞ս հակառակը պնդել, հա՞...
— Մի, մի՛ ստիպիր, որ աւելի տառապիմ, — աղաչեց լալաղին, ճար մը ըրէ, ըսէ թէ ի՛նչ պէտք է ընեմ:

— Դուն ոչինչ կրնաս ընել, — պոռացի ինքնիրմէս ելած, — ես եմ, որ պէտք է մտածեմ զեզ ազատելու մասին...

— Ազատե՛, ազատե՛:

— Պէտք է նոր կեանքի վարազորը բանալ, — ըսի զինք աթոռին վրայ կողտօրէն հրելով, — պէտք է միանգամընդ միշտ խորտակել պատուարները...
Ձեռքս օձիքէն ներս խրելով պինդ բռնեցի ու քաշեցի: Սեւ զգեստը մինչեւ մէջքը պատռեցաւ ու յանկարծ, խաւարին մէջ, երկու սպիտակ ստիւններ, երկու սպիտակ պարարտ ստիւններ, ցանկայարոյց ձգողութեամբ տնկուեցան աչքերուս դիմաց:

Ինք, բնողարար, անմիջապէս կուրծքը ծածկեց ձեռքերով, զարմանքի ու վախի թացադանչութիւն մը արձակելով: Երկնցած մնաց նստարանին վրայ, անշարժ: Դէմքը կորուսած էր մութին մէջ, այնպէս որ՝ իր արտայայտութիւնը չէի կրնար տեսնել: Խաւարի ծածկուցէն դուրս կը մնային միայն շրթները, որ կը հառաչէին անհամբեր պրկուսնորով:

Իրիկունը կը սահէր լուս, ասուպ մը կը ճեղքէր բացիփիկ աստղերու համաստեղութիւնները, եւ լուսինը կը ժպտէր տխուր, միակնիթ մուրացկանի մը նրժան:

Դաւաղիք խաւարն ու խորհրդաւոր լուսութեան ծոցը, ճամբու եզրին կանգ առած ինքնաշարժին մէջ, յանցաւոր սէր մը, կրթու հառաչներու եւ հրաշք տեսչերու նախերգանքով, կեանք կը ստանար երկուքիս հոգիին մէջ, երբ իրարու դիմաց կը սեղմուէինք անյապ տենդով:

(Մնացեալը յաջորդով)

Ս. ՍԱՐԳՍԻՍԵԱՆ

Ա Ն Ծ Ա Ն Օ Թ Ի Ն

Կը տագնապիմ իմաստութեանդ որոնումով,
 Ի տես անիմանալի տեսականիդ՝
 Մտածումս կը մնայ հարցական.
 Արդեօք ցնո՞րք ես անգոյ,
 Թէ գոյաւոր ճշմարտութիւն.
 Հարկ է պատեղի լաչակն այս եղկ անգիտութեան
 Եւ ուղունել կոյս հանգրուանն իմացումիդ:

Ո՞վ երկնեց ճեզ,
 Մտքիս ոստա՞յնը վտիտ,
 Թէ շունչն հանճար Արարողին ամենագոյ.
 Կ'իմանա՞ս զիս, Գեղեցկութիւն Անձանօթ,
 Կոհակները պաղատակիս կը մատչի՞ն ունկերուդ,
 Թէ կը շիջին ծոցն ամայիդ անձայրածիր,
 Անարձագանգ ինչպէս բարբառ անապատի.
 Կ'իմանա՞ս արդեօք ձայնս իմանալի...:

Կը տագնապիմ էութեանդ մութ խորհուրդով,
 Տարերկրային ո՞ր արգանդէն ծնար դուն.
 Ո՞վ շալիեց ճեզ այսօրն փայլ ու շնորհ,
 Մշտանորոգ քարմութիւն:
 Դուն, էակի՞ց Աստուածութեան մեծարեալ
 Ին ծնուցի՞չ երեսոյթներու տիեզերական.
 Սակայն ինչո՞ւ չես դրսեւորեր գոյութիւնդ բողաբկեալ
 Բազմաերաշ յայտնութեամբ,
 Բանաւոր քէ անբան իրերու մէջ համայնական:
 Դուն, գոյակի՞ց վաղնջական սրբոց դասուն,
 Բայց անունէդ ոչ մէկ նշոյլ չեմ գտներ
 Յայտնաւորքի մեհեմագիր փերթերուն,
 Որ վարքդ բնութագրեմ:
 Անկերպարան էութիւն,
 Ունի՞ս ժամանակի զգայարանք,
 Թէ անյարիր մասն ես կեանքի հոլովոյթին...:

Կը զգամ սակայն,
 Թէ բնագանցութեան ըմբռնումէն շատ վաղ
 Եւ նորառեալ գիտութեան նուաճումէն գերիվեր՝
 Կը ցոլաս իմ դէմ իբրեւ գաղափար անըմբռնելի,
 Որուն կ'ուզեմ տալ
 Շունչ, արիւն ու հոգի
 Շաղուած տարրերով մարդեղութեան
 Եւ մարմնաւորել ըստ տեսականիդ
 Շքեղ յղացիւն:

Եւ դրոշմել քեզ
Առանց անուանակոչութեան
Եւ հաւատոյ առանց ընկալագրի
Պարգաւէս
Անուանել քեզ
Էութիւն,
Հոգի,
Սէր:

Կը տագնապիմ, մտածելով, թէ գուցէ
Ժամանակավրէպ կամ տարածամ
Իմաստութեամբ զգեստաւորեմ քեզ,
Շնչաւորելով ըստ հայեցողութեանս պատկերին,
Զի կատարելութեան անպարագրելի
Շուքն եմ ազագուն:
Այլ դուն, Անծանօթ Վեհութիւն,
Հարկ է որ ըլլաս,
Մարմնանաս իբրեւ մարդ,
Որ հանչեմք գիրար բարբառով մեկին,
Ըստ անեանայնի հոգեհաղորդ մտերմութեամբ:

Հարկ է կերպարանաւորուիս,
Ունենաս դէմք, թոյր ու դիմագիծ,
Բնութիւնդ ընդդէմ ստորագելիներու
Բազմաեղի համաստեղութեամբ:

Ըլլաս էակ,
Խաղաղ թէ խռովայոյզ ներաշխարհով,
Որ կարդամ աչքերուդ պրիսմակէն
Խորհուրդները հոգիիդ,
Ինչպէս ռազմի մէջ ինկած
Անծանօթ զինուորի սառած աչքերուն ներքեւ
Մահուան անդհանքը կը կարդամ:

Ըլլաս տիպար,
Կենցաղային ստուերագոյն բարդութեամբ,
Թէ պարզութեամբ վիպային,
Որ քառերուդ, ապրումներուդ ընդմէջէն
Ըմբռնեմ քեզ
Հառազայթային խորաթափանց ֆանաչողութեամբ:

Հարկ է դրսեւորուիս
Արեւախանձ աւազներէ պեղուած
Իբրեւ վիմագրեալ արձանագրութիւն,
Որ վերծանեմ իմաստն Անհունիդ...:

Անծանօթ հոգիս,
Եղիբ, եղի՛ր միայն...:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

3. ԶՈՐԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ

«Ինք» Հայը ինչ քիզանդակա՞ն եւ հայկական ճամբաներու վրայ

Ին.

«ԵՐԵՒԱՅՍ ԶԻՆՉ ԽՆԴՐԷ՛»

Հայրենի՛ք...

Ես Նազըմն եմ. կեղծ թրքութիւնս թող ինծի մնայ. դուք պահ մը անկեղծօրէն Հրայրացէք, «Իննթութեան» լակերտներուն «չիմա՛ր», անմա՛ր խորհուրդին կամաւոր դերին դարձէք, ու երբ օտք կը դնէք Հայրենի Հողին վրայ, անոր նուիրուած անուշ բանաստեղծութեան մը Հայրենական ոլորտ-ներուն յանձնուելով ձեր Հողին, սիրոյ եւ ողջոյնի գերազոյն արտայայտութեամբ՝

— Հայրենի՛ք... — ըսէք Հայրենիքին, ըսէք ու եթէ կրնաք կրեցէք Հողեկան այն ծանր տառապանքը, որ կը պատճառէ մայր երկիրդ, կամ՝ ճամբուդ վրայ, երկրիդ առաջին քաղաքը, Սերաստիան, շոգեկառքի կայարանին վերեւ թրքական գրօջ պարզած Սվաղը, սելճուքեան դէմքերու ցուցադրութեամբ այսպէս փոխադարձելով.

— Հայրերդ հոս չեն, «Իննթութուկ, Հայրենիք մի՛ ըսեր ինծի, որ տարտերս չբացուին...

«Անցեալին Ալիփաւանի կրունկն ու Լէնկթիմուրի կիցը զգացեր եմ մէջքես, եւ այժմ դարձեր եմ առաւելարար անո՛նց յետնորդներուն որջը...

«Այ Քառասուն մանուկներու քաղաքը չեմ, չունիմ քառասուն գմբէթով խորան ու Քառասնից Մանկանց եկեղեցի, չունիմ Աստուած, «Աստուածածին» ու Ս. Նշան...

«Ձեմ յիշեր նշանաւոր Մխիթարս...

«Մոռցեր եմ Մուրատիս կնքահայրութեամբ պսակուիլ Վարուժա-
նիս...»

«Դաժան ներկան սեւ կտպած է զլիսու եւ սելճուք Տivas դարձուցած
է զիս...»

«Հայրենիք մի՛ ըսեր ինծի...»

— «Հայրենիքի քայր կը խօսի հայուն» — ըսած է բանաստեղծը. քա-
ղա՞քն էր, որ լուր պիտի մնար «հայրենիք» դոշոդին հանդէպ, եւ նման խօս-
քերով պիտի շատուպեցնէր զայն...»

Ես, առաջին իսկ առիթով զգացի այդ տառուպանքը ու կեղծ թրքու-
թեամբս հուզիւ կրցայ տողով անոր ծանրութեան...

Մեր Սերաստիան, իր երբեմնի հոծ հայութեամբ եւ հայկական եռու-
ղեռի այնքան խանդավառ անցեալով, իր այլեւս չգոյ եկեղեցիներով, գրպ-
րոցներով ու Սեննքերիմ թաղաւորի անյայտ դերեղմանով անցեալին կը
պատկանի :

Իսկ ապաղային, նոյն վայրին վրայ կերտուելիք նոր Սերաստիան ան-
շուշտ պիտի ունենայ «ՄինիօՒՍ ՍեֆԱՍՏիԱՅի» մայր հրատարակ, «Դիւ-
նիէլ ՎԱՐՈՒԹԱՆ» մշակոյթի կեդրոն ու մեծ մտտենադարան, «ԸՆԿԵՐ ՄՈՒ-
ՐԱՏ» օրօրօրապ, «Բէգաս» ինքնուշարժներ, «Բրէնիկ» փիլեմիկ, «Իերեմիկ»
մարզական, «Յեղիմ Սիրսը» վարժարան, «ԱԼԻՍ» օրաթերթ, անհամար հա-
յութիւն...

Այժմու սելճուք Սվուզին ունեցածները, կամ պարզօք անհրապոյր,
յետամնաց քաղաքի փոշոտ, ազուտ պատկերն է միայն, ուր կ'երևին կարծես
իբարու նեցուկ կանգնող խարիտու տուներ, սելճութեան ոճով կառուցուած
հին շէնքեր, թրքական, ըսել կ'ուզեմ՝ աղտոտ փողոցներ, որոնք կը կոչուին
«Մէմլուք», «Մուքափա» եւ այլ օտար անուններով :

Այլեւս չգոյ թոփրաք Գալէի արեւմտեան կողմը կը գտնուի սելճուք
սուլթաններու օրեքէն մնացած Ա՛ժօՖ (կայրոյտ) Մէտրէսէի տխրահուշակ շէն-
քը, որ, 1915ին, իբրեւ տանջարան-բանտ գործածուեցաւ իթթիհատականե-
րու կողմէ...

Պատե՛րը պատմէին հոն կատարուած կարմիր գասաւանդութիւննե-
րը... հայոց տանջանքի պատմութեան պահերուն...

Կ'ըսեն, թէ սակաւաթիւ հայեր դեռ կ'ապրին Սերաստիոյ մէջ :
Հայրենի հողին վրայ հայ մը տեսնելու, արեան քաղաքականութեան
անփոխարինելի վայելքը ապրելու համար, շատ թափառեցայ թաղերը, ան-
ցայ Վարուժանի անցած մայթերէն, Մուրատի յաղթական քայած ճամբանե-
րէն, աչքի պոչով հազար-հազարներու նայեցայ, սակայն արեւոյ հայ շտե-
սաւ...

Միայն հողիս, քանի մը օր ետք, զիչերը, ազգային աննախընթաց ինք-

նամկրատութեան մը անօրինակ խորհուրդը ըմբռնեց, Սփայի խուլ մէկ շըր-
ջանը գտնուող թրքական բաղնիքի մը մէջ, հայկական նուիրականութեան մը
դիմաց...

Աղտոտ մնալը Նադրին կը վայելէր թէեւ, սակայն յաջորդ օր, Մա-
յիս 28 ըլլալուն, ուղեցի Մեծ տօնին մարմնով ալ մաքուր հայ ապրիլ եւ
ինծի, «թրքութենէս» զաղտնի...

— Գիրլը՛ Նազըմ, սվազը պէտքիւք բանաստեղծը Սվազի համամներէն
մէկուն համըմներու փութփէրէ՛ս մերկութեամբ դիւթականացած ներ«աչ-
խարհ»ը տեսեր, ներշնչուեր ու գրեր է իր ամէնէն կիրգէլ բանաստեղծու-
թիւններէն մէկը, «Աննիկեան բաղնիք»ը... դոնէ՛ յանուն անոր բովանդա-
կութեան, կ'արժէ լուսանք մը առնել:

— Կիտէլըմ, Նազըմ...

Հետաքրքրուեցայ, հարցուցի ու փայլունով գացի Փաշա համամը:
Անունը բարձր, ինքը ցած, հասարակ, փոշայի բազնիք է այս լողա-
րանը, որ շունի արեւելեանի յատուկ պորտաբար եւ այլ յարմարութիւններ:
Ունեցածը, աղտոտ կամարներու տակ, իրարմէ տարբեր մեծութեամբ
եւ տարբեր ձեւերով քանի մը գուռեր են միայն:

Սովորական բաներու մասին աւելի չխօսիմ ու յայտնեմ անսովորը:
Առաջին օճառուէլը վերջացնելէ ետք, ես ինծի բոխ՝ քիչ մը ընկողմա-
նիմ գուռին քով...

Երբք մաքէս շանցաւ անշուշտ, որ ընկողմանելուն անմիջապէս պիտի
յաջորդէր... Ծնրագրութիւնը, ու Ծնրագրութեան՝ ինքնարուի խաչակըն-
քումը, թրքական բաղնիքի մէջ... «ճուրակ»ի առջեւ...

Առանց ընկողմանելու, դժուար թէ տեսնէի այս վերջինին մաշած,
մամոտած, տեղ-տեղ կաշուրի եւ օճառի ազտերով ծեփուած կողերուն վը-
րայ, հոս-հոն երեսող հայկական անեղծ գիրեր, գիրերու մասեր:

«Ա» մը, «Մ» մը, «Ծ»ի կոտար մը, «Թ»ի ոլոր մը, հրեշտակի կոտարած
թեւ մը...

Եւ՝

«Անա կանգնեցաւ առաջն մկրտութեան ի քողութիւն մեղաց մորոց»,
մեղաց մեր աղգին, որ անսահման հաւատք ունեցաւ Սահմանադրութեան
հանդէպ, սահմանազանց միամտութեամբ հաւատաց թուրքին շունեցած ա-
տաքինութեան, այլասիրութեան, բարեխղճութեան, ու հազար անձ երկու
քոտա ժանտարմայի հպատակելով՝ լքեց պապենական հողը, տունը, դպրո-
ցը, եկեղեցին...

Թանցաւոր է ազգը, յանցաւոր ենք մենք...

Եղեանը եթէ պիտի կատարուէր, թող կատարուէր ո՛չ թէ Սուրիոյ ա-
նապատներու տարածքին, այլ հայրենի հողին վրայ...

Թող ազգովին մեռնէինք, միայն թէ՛ մեռնէինք մեր տան սեմին, մեր
ժամուն բակը կամ կամարներուն տակ...

Ո՛չ մէկ ուժ կրնայ գլխադրել մեռնիլ ուզողի կամքին, նոխազային
նախասիրութիւններուն...

Մենք մեր երկրին մէջ զոհուելու նախասիրութիւնը ունենայինք եւ
անվախ ըսէինք ցեղասպանութեան ձեռնարկած արեւնկղակ բորենիներուն:

— Թուրքի՛ր, բնաջնջէ՛լ կ'ուզէք մեզ, բնաջնջեցէք մեր հողին վրայ՝
լէնք տարագրուիր... ձեք նախաղանք մեր պարանոցը. ձեք մարթիմը, մեր
կուրծքը. մահացուցէք մեզ, առանց տեղահանելու...

Ըստինք այսպէս եւ արժեքներնք մեր ըսածը ու չմտածէինք հրաշքով փրկուելու մասին, այլ ջանայինք փրկութեան հրաշքը գործել ու փրկուել, կամ, հակառակ պարագային, ազգովին մեռնիլ, որ ո՛չ մէկ հայ վերապրող, ո՛չ մէկ վերապրողի դուակ օր մը այս կողմերը զալով ու հազար մահ ապրելու գնով չտեսնէ Սեբաստիոյ շրջութիւնը Սվազի մէջ, հայրենիքին բացակայութիւնը մայր հողին վրայ, չիմանայ ահաբեկ սաստը հայրենի բազմադարեան քաղաքներուն, չզբայ սաստապանքը ճիստիլ գիտցող՝ քարերուն, դիրերուն եւ Քրիստոսի շտփ սուրբ այս գուռին, ուր պապերը կնքուած են յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն...

Ամէն՝ որովհետեւ այլ զգացի ծունկերու սաստիկ ցաւը բաղնիքի թոց քարերուն վրայ, ու նոյն տանն տնդարարձայ, թէ այդպէս, աղամամերկ վիճակիս մէջ, եւ մերկ սրտով, կատարած եմ մարդկային ամենանուիրական ծնրադրութիւնը՝ ամենասուրբ աւանդի մը դիմաց ու մտքէս արտասանած յախուն «աղօթք» մը՝ ի վերջոյ հասնելու համար... «արարողային սրբազան տրամադրութեան».

— Երեխայս գի՞նչ խնդրէ...

Պի՛ գիտէ Սեբաստիոյ կամ շրջակայ գիւղերէն ո՛ր մէկուն ո՛ր ժամուն մկրտութեան աւազանն էր ասիկա...

Քանի՞ սերունդներ կնքուած են ասոր մէջ եւ իրենց կնքուածութեան հաւատարիմ մնալով՝ հաւատացած են թշնամիին, յոյս կապած են թշնամիին, սիրած են թշնամին, որ սիրուելիք տեսակէն չէ, ոչ ալ յուսուլ ու հաւատալ սուտոյ որակէն. «կայ» պատմութիւնը եւ հոն արձանադրուածներուն պատճառով հայկական եկեղեցիէն թրքական քաղնիք զլորուած այս նուիրական քարը, ազգիս հայոց մկրտութեան սուրբ գուռը, որուն առջեւ ծնրադրելէ ու ծանր «աղօթք» մը արտասանելէ ետք, ալ ինչպէ՞ս չփորձուիս... Ինքնամկրտութիւն կատարել ու անկէ յորդիլ սկսած ջուրը թատ-թատ վլխուղ թափելով պատասխանել արարողութեան հարցումին.

— Առ քշնուիս, Երեխայս խնդրէ ո՛չ հաւատք, ո՛չ յայս, ո՛չ սէր, այլ միայն՝ Վրի՛ժ...

ԻԶ.

«ԲԱՅՑ ԱՓՍՈՍ ՈՐ...»

Վրէժի մասամբ լուծուումով փրկուեցաւ մեր հայրենիքին արեւելեան մէկ մասը:

Թող մեծ մասն ալ լուծուած, Հայաստանը ամբողջութեամբ աղատազրբուած բլլար ու Սեբաստիան տօնէ՛ր Մայիս 28ը...

Փողոցէ փողոց, հրապարակէ հրապարակ, թաղէ թաղ շրջելով տեսնէի՛ր պճնուած կերպարանքը Քառասուն Մանուկներու քաղաքին, դիտէի՛ք հայ ամբողջներու տօնական ճիւղագարութիւնը, Կարէի՛ր խանդը՝ էութիւնդ յանձնելով յաղթանակի երգին, որուն բարձրադու թնդիւններուն տրձագանգները, հայրենի միւս քաղաքներէն որոտացող իրենց հզօր նոյնութեան հետ, կրնային հասնիլ շոր ծաղերուն, բարձրանալ երկինք...

Թող Աստուածն ու օւշխարհն ալ լօէին մէկ սիրտ մէկ հողի հայու-
թեան երդը հօր Հայաստանէն.

— «Մեր եայրենիք շղթաներով,
Այսքան տարի կապկապուած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած:

.....

Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Ջար իմ ձեռքով գարծնցի,
Գիշերները ես քուն չեղայ...

Ես եղա՛յ սակայն...

Ուշու հրապարակին նայող պանդուկի իմ սենեակիս մէջ, պատուհանին
դիմաց սարքած Մայիս 28ի սեղանիս առջեւ, բոլոր հայերուն կողմէ, գրե-
թէ... «ստանձին-տանձին»՝ բռնագրաւուած Հայրենիքին փրկութեան կե-
նացը ժամեր շարունակ խմելէ՛ հոգ եղայ, երբ արդէն հասած էի «Իւր քաջ
որդւոց սուրբ արիւնով ազատուած» Հայրենիքի լինելային խորհուրդին...

Հո՛ն տրուեցաւ ինձ մի դրօշ...

Ձայն կուրծքիս սեղմած՝

իջայ հրապարակ, ուր հաւաքուեր էին բողո՛մահար սերաստացի հայեր
Բրդնիքէն, Կովտունէն եւ այլ շրջաններէն եկած շինական հայեր, Վենետի-
կէն ու Վիեննայէն՝ Միտիթարեան հայրեր, Մուրատի հրամանատարու-
թեամբ՝ անհամար հայ քաջեր, որոնք շահած էին ամբողջական Հայաստանի
փրկութեան վերջին յաղթանակը...

Հրապարակին կեդրոնական մասին վրայ ինկած, խորտակուած էր ար-
ձան Աթաթիւրքը, եւ անոր տեղ, նոր պատուանդանին վրայ, Ազատութեան
արեւուն տակ ոսկի շողեր կ'արձակէր պրոնզեայ հսկա՛յ Արամ Մանուկեան
մը...

Գիւլ անդին, վար առնուած էր նաեւ թրքական դրօշը, որուն արձա-
թափայլ բարձր ձողին քով կը տեսնուէին միջնահասակ, պատկառելի մարդ
մը եւ լաճ մը՝ համակ խանդ:

Պատկառելի մարդը ունէր ոլորուն պեխեր, խանդավառ լաճը՝ դան-
դուր մաղեր...

Պեխաւորը Դանիէլ Վարուժանն էր, դանդրահերը՝ Դերենի՛կը...

Ինձի տրուած դրօշը կուրծքիս, երբ երեւցայ պանդուկի մայթին, բո-
լորը, բոլո՛րը դարձան իմ կողմս ու տիրեց խոր, խորհրդափառ լու-
թիւն...

Միայն Մուրատի ձին, ձիւնափայլ ճիւղաւոր, երիվարային զիտակից
գոհունակութեամբ խրինջեց քանի մը անգամ, ապա՝ թշնամիին գլխուն ի-
ջած սմբակը վերցնելով՝ ուժգնօրէն դուփեց յատակին, զնգաչուց սալաքարե-
րը ու հասկցուց ինձի, որ արտասուքով օծուած դրօշը տանիմ, դինք գոզեր-
դող բանաստեղծին տամ...

Տարի, տուի...

Վարուժան ինքնայատուկ ակնածանքով առաւ դրօշը, Համբուրեիէ
եղք՝ կապեց դայի պարանին, ըսաւ դանդրահեր տղուն.

— Կեցցե՛ս, Դերենիկ, արիւններդ Ալիի արեամբ մաքրեցիր ի վերջոյ... դուն արժանի ես դրօշ բարձրացնելու փառքին... ծածանեցո՛ւր Երանդոյնը...

Դերենիկ բռնեց պարանը, ու կրք օկտաւ բարձրացնելի դրօշը, ի՞մ կողմէ՛ սկսուած հրդին շարունակութիւնը փոթորկեցաւ ամբոխին կողմէ՛:

— «Նայի՛ր նրան, երեք գոյնով,
Նուիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դէմ
Թող միշտ պանծայ Հայաստան»...

Վերջին վանկին Երանդոյնը արդէն հասած ձողի կատարին, թափ առաւ ու զեղեցկացուց իր երկինքը՝ հայուրեան պարծանքը ծալքերուն մէջ շողացնելով

Առաւօտուն, երբ արթնցայ, հակառակ Մայիսեան արեուն, Շահադիդայի «Ա՛յո, այդ ինչո՞ւ»ի ակոսանքը պատճառ դարձաւ, որ դիւերը մընայ ներաշխարհիս վրայ, ու Դերենիկը այլվէն դեպքին նայելով ուրախութիւնս առնէ, Հեռանայ անձայն...

Մեծ քար մը ձեռքին ըլստից, ղալկահար, թշնամու սեմին պիտի սպանէ երկար...

Թող սպասէ...
Ես հրադիս դրօշը որտե՛ս մէջ ծալած, շարունակեմ ճամբաս դէպի Մալթիա...

Յ. ՉՈՐԵՑԻ

(Շար. 8)



ԵՐԿԱՐ ՈՒ ԱՆՀՈՒՆ ԳԻՇԵՐ...

Յրիւ ամպերու ուռկանը մուսյլ,
Թախծեմերու այս մերկ իրիկնամուտին,
Կը ժողվէ անփոյթ,
Կիրքը արեւին՝
Ու լուս աչքերուդ աշտարակին մէջ,
Իմ կրակը որք
Տառապանքներու հեփաթով կ'այրի
Կը սպանի՝ ծարաւ
Սրտիդ կաթկթող հաշիշի ծոցին...
Ու գիշերս մութ
Փողոցներուդ մէջ կը մաշի անյուշ,
Ու բառերս կոյր
Ջիզերէդ հրայրք կը մուրան անփուն:

ՆԱԶԱՐԷԹ ՊԷՐՊԷՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԱՀԱՆ ԶԱՆՈՅԵԱՆ

ԱՀԱՐԿՈՒ ԱԹՈՒԱԿՆԵՐ

Փոքեթաթախ, կարմրորակ կառքեր իրենց անտանելի աղմուկով՝ մտան գործարանին բակէն ներս ու կանգ առին կաղնիի հսկայ ծառին մօտ: Վահրամ, հակառակ անոր, որ ոչ մէկ հետաքրքրութիւն ունէր կառքերուն նկատմամբ, պատուհանէն հաշուեց զանոնք: Ութ հատ էին: Վահրամ յաճախ մտածած էր, սակայն չէր կրցած հասկնալ ընաւ, թէ ի՞նչ բանն էր, որ կ'որոշէր ատենը անգամ մը գործարան հասնող այդ կառքերուն թիւը: Չէր կրցած հասկնալ նաեւ, թէ ինչո՞ւ ամէն անգամ տորբեր քանակութեամբ կառքեր կը զըրկուէին: Սակայն, ընդհանրապէս, անոնց թիւը ութէն աւելի կ'ըլլար: Մօտ տասը տասներկու: Նոյնիսկ պատահած էր, որ այդ նոյն պատուհանէն տանըհինգ կառք հաշուէ զուրսի կաղնիին շուրջ: Յամենայնդէպս, կառքերը ոչ մէկ կարեւորութիւն կը ներկայացնէին իրեն: Կը պատահէր, որ անոնց մասին մտածէ, երբ ուրիշ մասնաւոր մտահոգութիւն մը չգաղարուէր ուղեղին մէջ:

Երբ կառքերուն խապտա ձայները մարեցան, գործարանին կարգ մը անկիւններուն մէջ աշխատանքը կանգ ա-

ռաւ յանկարծ եւ, մօտ տասնեակ մը աշխերտներ, իրենց վարպետներուն հրահանգին վրայ՝ զուրս ելան զանոնք պարպելու: Քանի մը ուրիշներ, կաւէ սափորներով ջուր տարին վարորդներուն, որոնք կառքերէն իջած՝ զբազած էին իրենց վրայէն ճամբու փոշին թօթուելով:

Վահրամ նշմարեց, որ բոլոր վարորդները տարօրինակօրէն իրարու կը նմանէին, անիլուած, փայլուն դրոշմներով, հաստ, թուխ պեխերով, կոշտ, թափթփած մարդիկ: Անոնց մութ, լայնիկէկ տարատները պղտոր սպիտակութիւն մը ստացած էին փոշիին տակ եւ բոլորը հագած էին կարմիր, աղտոտ շապիկներ: Վահրամ մասնաւորաբար կը սիրէր դեռնել զանոնք, երբ անոնք աշխերտներուն ձեռքերէն կ'առնէին կաւէ սափորները, եւ իրենց կարմրած դէմքերը վեր, դէպի երկինք բարձրացուցած՝ անյագօրէն եւ բարձրաձայն կը խմէին: Առաջին տարիներուն, նոյնիսկ երբեմն նախանձած էր վարորդներուն, զանոնք այդ վիճակին մէջ տեսնելով: Հիմա, սակայն, պարզապէս հաճոյքով կը դիտէր բոլորը: Երբ վարորդները յազենային, ու գէշազէկ թօթուէին իրենց վրայէն անվերջանալի

փոշին, կ'երթային, կը նստէին կաղնիին տակ ու կը սկսէին խօսակցիլ բարձր, դրեթէ անհասկնալի պոռչտութեամբ:

Աշկերտները, կաւով լեցուն, լաթէ մոխրագոյն պարկերը մէկիկ-մէկիկ վար տուն կառքերէն, եւ իրենց կունկներուն վրայ փոխադրեցին զանոնք ներս: Երկու արագաշարժ եւ առոյգ տղաք սկսան շարել զանոնք անկիւնը: Վարպետներէն մէկը միշտ կանգնած կ'ըլլար հոն եւ աշկերտներուն ցուցմունքներ կու տար: Պարկերուն տեղը շուրջ տասնըհինգ սանթիմէթր բարձրութիւն ունեցող ամպլոնն մըն էր, որ շինուած էր կէս դար առաջ: Գործարանը հին ըլլալուն՝ պատերը եւ առաստաղը ճեղքոտուած էին: Ձմեռը, անձրեւին ընթացքը գիւրեթեամբ կը հոսէր ներս եւ գետինը շարուած պարկերուն բովանդակած կաւը կը վնասուէր, գրեթէ անդործածելի կը զառնար: Վտանգը հեռացնելու համար, յիսուն տարիներ առաջ, իմաստուն վարպետ մը, յզացած էր ամպլոնին գաղափարը եւ իր նիւթական զոհողութիւններով մարմին տուած էր անոր: Եթէ մէկը ուշադրութեամբ քննելու ըլլայ ամպլոնին ճակատը, հոն տակաւին կրնայ նշմարել մաշած փորագրութիւնը:

ՆՈՒԷՐ ԳՈՐԾԱՐԱՆԻ՝
ՎԱՍՏԱՎԱԻՈՐ ՎԱՐՊԵՏ
ԹՈՎՄԱՍ ՊԱՆԱԿՆԻ ԿՈՂՄԷ

Եւ հակառակ անոր, որ աշկերտները զոց սորված էին պարկերը շարելու ձեւը, վարպետները կը նախընտրէին, որ իրենցմէ մէկը միշտ ներկայ ըլլայ հոն, եւ աջ ոտքը ամպլոնի մէկ եզերքին հանդէս լեցուցած՝ ընէ իր սովորական ցուցմունքները:

Կառքերը պարպուեցան:
Պարկերը սովորականին պէս շարուեցան ամպլոնին վրայ:

Վարորդները ծոյլ շարժումներով ելան իրենց տեղերէն եւ ուղղուեցան դէպի կառքերը: Գործարանին բակը ան-

գամ մը եւս լեցուեցաւ անոնց մաշած, խոպոտ ձայնով: Գունապանը, երկաթէ հակայ դուռը բացած՝ կը սպասէր: Կտրեքը մէկիկ-մէկիկ ելան դուռս, եւ դրոնապանը իր արտայայտութենէ զուրկ աչքերուն տակէն հաշուելէ ետք զանոնք՝ գոցեց դուռը:

Վահրամ պատուհանէն հետեւեցաւ կառքերուն, մինչեւ որ անոնց վերջինը անյայտացաւ ցանկապատին նտեւ երեւցող նեղ ու չոր արահետին մէջ:

Գործարանին մէջ աշխատանքը վերագրած էր իր սովորական ու միապաղաղ ընթացքը: Վարպետները, թիւով տասներկու հոգի, կրկին նստած էին իրենց սովորական տեղերը, տախտակէ ցածկեկ աթոռակներու վրայ: Իւրաքանչիւրին շուրջը կանգնած էին մօտ տասը-տասներկու աշկերտներ: Վարպետները գլխահակ՝ կը հզմբտէին իրենց զոգերուն վրայ, հին, կաշիէ գոշնոցի մը գունաւոր ծայրերուն մէջ զետեղուած կաւի գունաւոր:

Վահրամ, միւս աշկերտներուն կողքին կանգնած՝ լուռ կը դիտեր վարպետին ճկուն մատները: Կաւի գունաւոր անոնց շարժումներուն ենթարկուելով կը կակուղնար, կը ձեւաւորուէր, եւ արագաշարժ մատներու եւ կաւի գունաւոր խօսեւորչին մէջէն՝ կամաց-կամաց ամանի մը ուրուադիծը կը սկսէր պարզուիլ:

Վարպետին ճաղատ, վարդազոյն գլխուն վրայ երկու քրտնաթաթախ թել մազ կը փայլէին ետեւի պատուհանին փոշոտ յապակիներէն հասնող պղտոր լոյսին տակ: Նայեցաւ ժամացոյցին: Ժամը տասն էր: Դեռ երեք ժամ կար մինչեւ կէտորուան գաղաթը, եւ ինք պէտք էր, որ հող կայնած սպասէր:

Պատուհանը երկզոյ փտած եւ դոյնը նետած տախտակի կտորներուն եւ պատին միջեւ փլատակ սարդոտաւան մը կար, որուն մէջ շատոնց մեռած, չորացած, սեւ ճանճի մը թափանցիկ թեւերը շարունակ կը սարսուսին հովուն հոսանքին տակ:

Ամէն իր կարմրորակ, տխուր, մոխրագոյն էր դործարանէն ներս:

Նայեցաւ քովը կանգնած միւս աշակերտներուն: Երկու նորեկներ նշմարեց: Կոկիկ մարերով, դուստ կէ յարգայիւր շարժումներով, բարի տղաք էին: Վահրամ նշմարեց, թէ անոնք մեծապէս յափշտակուած են վարպետին մատներուն ճարպկութեամբ: Անոնց երկիւղած սեւեռուներուն մէջ տեսաւ ձգտում, իտակալ, կիրք: Մտածեց, թէ արդեօք ինք ալ անոնց հողեվիճակը ունեցած էր դործարան նոր մտած ատեն: Սակայն, շուտով վանեց այդ մտածումը: Վերջերս սովորութիւն ըրած էր յանկարծակիօրէն ծագած մտածումի մը «անիմաստ» վճիռը արձակել ու մահուան դատապարտել զայն:

Գործարանը տարօրինակօրէն լուռ էր: Բոլորին սկանջները վարժուած էին այն պղտոր ու միօրինակ շուկին, որ ա՛լ աննշմար կը հոսէր գործատան հին պատերուն վրայէն: Իուրի այրող արեւը հագիւ թէ կրնար քանի մը տօգոյն ճառագայթներ սպրդեցնել խոնաւ ու մութ գործարանէն ներս, որ ամբողջովին կուզէր բուրդէր:

Նկատեց, որ նորեկներուն երկար, մոխրագոյն զոգնոցները նոր էին: Անոնց զրպաններէն դուրս ցցուած տեսաւ գործարանին օրինագիրքը:

Յիշեց:

Իրեն ալ տուած էին այդ օրինագիրքը: Անիկա մէկ օրէնք կը պարունակէր միայն, զոր կրնար որեւէ ատեն զոց արտասանել. «Աշխրտնիքում արգիւում է ամառ շիմելու որեւէ փորձ կատարել: Անան պէտք է սորվին պարգապէս վարպետնիքում ձեռքերը դիտելով: Բուսկաճաշակ սորվել է Ետմ Կրնան կրնան վարպետ դառնալ»:

Անիկա գրաւոր միակ օրէնքն էր, որ աշխրտ մը պէտք էր լաւ դիտնար ու գործադրէր:

Վահրամի յիշողութեանը մէջ յանկարծ արթնացան գէճքեր, հին, խոփոտ գէճքեր, որոնք գործարանէն վտարուած էին անո՛ր համար, որ դեռ վարպետի

տիտղոսին շարժանացած՝ փորձած էին դաղտնօրէն ամաններ շինել: Մտածեց, թէ ինչպէ՞ս ինքն ալ մարագործ ադատած էր նոյն ճակատագրէն. ու վարկեանքի մը համար բախտաւոր զգաց ինքզինք: Իսկապէս որ բախտաւոր էր ինք: Ինչպէ՞ր պատահած էր տարինը առաջ ինք եւ ուրիշ երեք բնկերներ բռնուած էին աման շինելու արարքին մէջ: Վարպետը յանդիմանած էր զիրենք: Ընկերները լուռ մնացած էին, սակայն ինք, լքութեամբ պոտացած էր վարպետին երեսին:

— Բայց երբ հայրս տարիքս ունէր, վարպէ՛տ էր...

Եւ իր յիշողութեանը մէջ տակաւին անջնջելի կը մնայ ոչխարամիտ ուղկերտի մը գէճքին արտայայտութիւնը, երբ ան ձայնակցած էր վարպետին պատասխանին:

— Թերեւս հայրդ երբ քու տարիքդ ունէր, զեզմէ տեւիլն չէր դիտար: Սակայն, այն ատեն արջանը բաւարար կը համարուէր վարպետ դառնալու համար: Հիմա աւելին պէտք է, տի՛մա՛ր, շե՛ս տեսներ, թէ գործը որքան դարգացած ու բարդացած է, հիմա շա՛տ տեւիլն պէտք է, պատրաստ չես դեռ, պէտք է սորվի՛ս, սորվի՛ս, կը հասկնա՞ս...

Այն ատեն իր երեք ընկերները վճարուեցան գործարանէն: Ի՞նչն էր զինք փրկողը նոյն վճիռէն, շահակցաւ, ու չէր դիտար մինչեւ այսօր: Թերեւս իր վաղածեօրիկ հօրը ձգած վարկը որո՞ւ դէր մը ունեցած էր այս խնդրին մէջ: Ետքը լճանք, թէ վարպետը մտերիմ յարաբերութիւններու մէջ է մօրը հետ, եւ փորձեց այդ դժով բացատրել հարցը: Սակայն, այդ ալ ամբողջութեամբ չլուսարանեց զինք: Նախ՝ չէր համոզուած որ այդ լուրը ճիշդ է: Մտածած էր, որ եթէ նման բան մը իսկապէս գոյութիւն ունի, զինք մինչեւ հիմա վարպետ ըրած կ'ըլլային: Յետոյ, մօր եւ վարպետին միջեւ եղած կարծեցեալ յարաբերութիւնները ըստ լրտեսներուն սկսած էին իր օրէնքը ոտնակոխ ըրած ըլլալու գէճքէն ետք: Ամէն պարագայի, ինք մնացած էր գործարա-

նէն ներս եւ բախտաւոր էր ասոր Համար: Հիմա կը զարմանար իր երբեմնի շարածճիւղիւններուն վրայ: Այդպիսի Համարձակութիւններ երեւակայե՛լն անուամ վախերով կը լեցնէր սիրաբ Հիմա...

Կրկին նայեցաւ ժամացոյցին: Ժամը 12:00 էր: Ուրեմն, դեռ մէկ ժամ կար: Գործարանէն ներս միակ նորութիւնը նորեկ աշկերտներն էին: Մտածեց, թէ արդեօք վարպետը իր սովորական ճառը արտասանած է անոնց, թէ ոչ տակուիին:

Վարպետները սովորութիւն ունէին նորեկներուն դիմաց ճառ մը խօսելու: Ամէն սարի, բոլոր վարպետները նոյն ճառը կը խօսէին իրենց նոր աշկերտներուն:

Վահրամ մէկէ աւելի անգամներ լրտած էր այդ ճառը, որովհետեւ յաճախ կամաւոր կերպով ներկայ եղած էր ելուրթին: Վարպետները դադարի ընթացքին կը հաւաքէին իրենց աշկերտները եւ, հանդիսաւոր ու լուրջ ձեւերով՝ կը խօսէին.

— Գործարանը հին է, մութ է, աղտոտ է, ագեղ է, բայց անիկա ամէն ինչ է մեղի համար: Ուղիւնք կամ ոչ՝ կապուած ենք անոր: Անիկա է մեր ապրուստի միակ աղբիւրը, մեր յոյսը եւ նպատակը միաժամանակ: Ասկայն, բնաւ պէտք չէ մտածել զայն նորոգելու մտտին: Ձայն նորոգելը ժամանակ կ'ենթադրէ, եւ ժամանակը միակ բանն է, զոր չունիք առայժմ: Եղան մարդիկ, որոնք ջանացին անոր աղտոտ պատերը ներկելով պարապիլ: Բայց անոնց կեանքը չբաւեց նոյնիսկ փոքր մաս մը ներկելու, եւ խեղճները շկարենալով արհեստին տիրանալ, մնացին անօթի: Ու տակաւին, մաքրասէրներուն մահէն ետք, ժամանակը կը բերէին աղտոտեց անոնց ներկածը: Կը տեսնէք ուրեմն, որ կարելի չէ միաժամանակ թէ՛ գործը յառաջ տանիլ, եւ թէ՛ գործարանը նորոգել: Այս խօսքերը ձեզի սկիզբէն ըսելու կարիքը զգացի, որովհետեւ դիտեմ, թէ դուք ալ նման բաներ պիտի անցընէք ձեր մտքերէն Ահա՛ւասիկ կ'ըսեմ. ձեզի Համար արհեստին տիրանալն է կարեւորը: Ոմանք զմութ էն ըսին. ի՛նչ

վնաս, ես այսքան տարիներ այս մութին մէջ աշխատած եմ, ու կը շարունակեմ աշխատիլ: Ի՛նչ վնաս: Ահա նորէն կը կրկնեմ: Կարեւորը արհեստին տիրանալն է: Դժբախտաբար, այսօրուան երիտասարդները Համբերութիւն ըստածը չունին: Համբերելու էք: Մի՛ մտածէք առաստաղին բացուածքները գոցելու մասին: Թող ձմեռը անձրեւը ներս պայ: Ի՛նչ վնաս: ...Դուք արհեստին տիրացէք...:

Եթէ այս հնարարեան ճառը դեռ չէ խօսած, անպայմանօրէն կը խօսի այսօր կամ վաղը: Նորեկները հիացումով մտիկ կ'ընեն դինք, ինչպէս ի՛նք ըրած է ժամանակ մը, ու ամէն մէկը նոր յոյսերով հարստացած՝ կ'որոշէ հնարանդիլ վարպետին: Որքա՛ն միամտութիւն եւ բարութիւն կայ օտ նորեկներուն ապահար նայուածքներուն մէջ: Պատրաստափութիւնը չ'ունանար սակայն ու կը քամէ՛ անհատը իր անհատականութենէն, կը կաղապարէ անոր կեանքը, կը մերկացնէ զայն երազներէ եւ երեւակայութենէ...

Ահա ձեր վարպետը, որ կ'իրբով կը շարէ կաւը: Կ'ապրի՛ կաւը: Գլուխը դողն վեր չ'առնէր բնաւ:

Վահրամ յաճախ անոր գլուխը երեւակայած է կաւէ շինուած եւ տարօրէն նակօրէն խնդուքը եկած է միշտ:

Վարպետը կը շարունակէ շարել գօգին կաւը պիբիկ, զօրաւոր շարժումներով: Հինցած աթոռակը կը ճզզայ անոր շարժումներուն տակ: Դիմացի պատին հին սարդոստայնը պահած է չորցած ճանճը, որուն թափանցիկ թեւերը դեռ կը սաբստան հովուն հոսանքին տակ:

Վարը՝ սալայատակին ու պատին միջեւ ծակ մը փորուած է, ուրկէ դուրս կը հոսին աղտոտ ջուրերը: Հոն, ամառ են խոտի եւ փուշի մեծ թուփեր, որոնցմէ մէկուն կամ միւսին փշոտ գլուխը ատենը անգամ մը կը ցցուի պատուհանին ետեւէն, ու ապա, հովին ուժգնութեանը տակ կրկին կը խոնարհի ու կ'անյայտանայ:

Վահրամ կը դիտէ այս բոլորը. աւելի հետուն՝ քաղաքին հսկայական լէն-

քերք կը ցցուին արեւին շրջնող լոյսին մէջ, ու կը հալին կարծես: Անդամ մը եւս կը նայի ժամացոյցին: Քանի մը վայրկեան կայ միայն, ու բոլորը կ'ելլեն դուրս, բակին մէջ կը գրաւեն իրենց սովորական տեղերը ու կը բանան իրենց ճաշամանները:

Կէսօրները, Վահրամ կը քաշուի ցանկապատին մէկ շէտու անկիւնը, եւ լուռ կը գիտէ բակին մէջ վաղվաղ մտնուկները: Յաճախ մտածած է, թէ այդ բապիկ մանուկները ինչու ընտրած են գործարանին բակը իրրեւ խաղափայլ: Քարտը ունի հրապուրիչ հանրային պարտէ՞ք մը, աւազաններով, ցայտադրութեան, ծառ ու ծաղիկով, սակայն, այդ մանուկները, թիւով շուրջ 30 հոգի, բոլորն ալ աղտոտ, կոշտ, անխամ, առատու-իրիկուն կը խաղան գործարանին շուր ու փշոտ բակին մէջ:

Կէսօրները օդը անտանելի է քաղաքին մէջ: Ամէն կողմ կրակ դարձած կ'ըլլայ: Եւ այդ տաքութեան մէջ՝ նոյնքան տաք ու խենթ հով մը կը փչէ անկանոն ուղղութիւններով, կը զարնուի գրեթէ ամէն առարկայի: Գլխաւորաբար այս կացութեան համար է, որ կէսօրուան դաղարներուն, աշկերտները բնդհանրապէս կը շարուին ցանկապատին տակ, ուր հովը համեմատաբար տկար է եւ արեւը նուազ ազդեցութիւն ունի: Վարպետները կը նախընտրեն մնալ ներս. սակայն աշկերտները ստիպուած են դաղարներուն դուրս գալու:

Վահրամ հազիւ աւարտած էր ճաշը, ու լաթէ ծրարը տեղաւորած էր աշկերտական իր գոգնոցին խոշոր գրպանին մէջ, երբ կ'ըսէր, մանկունակ գէմքով տըղայ մը եկաւ ու նստեցաւ մօտը: Վահրամի աչքերը ուղղուած էին դէպի մանուկներուն խաղը: Տղան տեղաւորուեցաւ Վահրամի մօտ, եւ դէմքը դարձեւ լով անոր նայած կողմը, ըսաւ.
— Անունս ձորճ է:

Վահրամ գլուխով փոքր նշան մը ըրաւ, կարծես բաւ ուղեց. «լաւ. լսեցի»:
— Մտերիմ ընկերներէս սժանք զիս ձորճիկ կը կոչեն, — շարունակեց ձորճ ատանց Վահրամին նայելու: Վահրամ դարձաւ իր կողմը, քանի մը վայրկեան դիտեց ղինք, ու նորէն սկսաւ հետեւիլ մանուկներուն:

— Ի՞նչ է անունդ, — Հարցոյց ձորճ:

— Վահրամ:
— Մտերիմ ընկերներդ ի՞նչ կը կոչեն քեզ:

— Վահրամ:
— Ինչո՞ւ ոչ Վահրամիկ, — հարցոյց ձորճ, կարծես կէս վրդոված, կէս դարմացած շեշտով մը:

Վահրամ կրկին դարձաւ անոր կողմը, եւ առաջին անգամ ըլլալով՝ երկուքին աչքերը հանդիպեցան: Քիչ ետք, Վահրամ ըսաւ.

— Ձեմ գրտեք, շեմ հարցուցած: Քանի մը վայրկեան դիտելէ ետք մանուկները, ձորճ կրկին հարցոյց.

— Դեռ քանի՞ տարի ունիս:

— Չհասկցայ...

— Վարպտա դառնալու համար:

— Ինչ դիտեամ:

— Քանի՞ տարի եղաւ մտնելդ:

— Կարծեմ տասներեք: Այն առտու, տասներկու տարեկան էի:

— Ո՞ր առտու...

— Այն առտուն, որ մտայ կ'ըսեն, որ հիմա քանըճինդ տարեկան եմ, — աւելցուց անմիջապէս, կարծես ջանալով առաջը անելի հաւանական ուրիշ հարցումի մը: Պահ մը ետք, ձորճ կէս մը ինքնիրեն, ու կէս մը Վահրամի, ըսաւ.

— Քանըճինդ տարեկան... կեանք մը...

— Կարեւոր չէ...

— Աւելի տարիքոտ կ'երեւիս: Ես նոյնիսկ շեմ յիշեր, թէ ե՞րբ մտայ թեմա մէջը ծնայ:

— Մէջը ծնած չես կրնար ըլլալ. մոռցած ըլլալու ես:

— ... Մոռցած ըլլալու եմ...

նէն ներս եւ բախտաւոր էր տտոր համար: Հիմա կը զարմանար իր երբեմնի շարահանութիւններուն վրայ: Այդպիսի համարձակութիւններ երեւակայե՛լն անպամ վախերոյ կը լեցնէր սիրտը հիմա...

Կրկին նայեցաւ ժամացոյցին: Ժամը 12:00 էր: Ուրեմն, դեռ մէկ ժամ կար: Գործարանէն ներս միակ նորութիւնը նորեկ աշկերտներն էին: Մտածեց, թէ արդեօք վարպետը իր սովորական ճառը արտասանած է անոնց, թէ ոչ տակաւին:

Վարպետները սովորութիւն ունէին նորեկներուն զիմաց ճառ մը խօսելու: Ամէն տարի, բոլոր վարպետները նոյն ճառը կը խօսէին իրենց նոր աշկերտներուն:

Վահրամ մէկէ աւելի անգամներ լրսած էր այդ ճառը, որովհետեւ յաճախ կամաւոր կերպով ներկայ եղած էր ելոյթին: Վարպետները դադարի ընթացքին կը հուսալէին իրենց աշկերտները եւ, հանդիսաւոր ու լուրջ ձեւերով՝ կը խօսէին:

— Գործարանը հին է, մութ է, աղտոտ է, տղիչ է, բայց անիկա ամէն ինչ է մեզի համար: Ուզենք կամ ոչ՝ կապւած ենք անոր: Անիկա է մեր ապրուստի միակ աղբիւրը, մեր յոյսը եւ նպատակը միաժամանակ: Սակայն, բնաւ պէտք չէ մտածել զայն նորոգելու մասին: Չայն նորոգելը ժամանակ կ'ենթադրէ, եւ ժամանակը միակ բանն է, զոր չունիք առայժմ: Եղան մարդիկ, որոնք ջանացին անոր աղտոտ պատերը ներկելով՝ պարապիլ: Բայց անոնց կեանքը չբաւեց նոյնիսկ փոքր մաս մը ներկելու, եւ խնդճերը չկարենայով արհեստին տիրանալ, մնացին անօթի: Ու տակաւին, մաքրասէրներուն մահէն ետք, ժամանակը կրկին աղտոտեց անոնց ներկածը: Կը տեսնէք ուրեմն, որ կարելի չէ միաժամանակ թէ՛ դործը յառաջ առնել, եւ թէ՛ գործարանը նորոգել: Այս խօսքերը ձեզի սկիզբէն ըսելու կարիքը զգացի, որովհետեւ գիտեմ, թէ դուք ալ նման բաներ պիտի անցընէք ձեր մտքերէն Ահա՛ւասիկ կ'ըսեմ. ձեզի համար արհեստին տիրանայն է կարելորդ: Ոմանք զմութ է՝ ըսին. ի՞նչ

վնաս, ես այսքան տարիներ այս մութին մէջ աշխատած եմ, ու կը շարունակեմ աշխատիլ: Ի՞նչ վնաս: Ահա նորէն կը կրկնեմ: Կարելորդ արհեստին տիրանայն է: Դժբախտաբար, այսօրուան երիտասարդները համբերութիւն ըսուածը չունին: Համբերելու էք: Մի՛ մտածէք առաստաղին բացուածքները գոցելու մասին: Թող ձեռք անձրեւը ներս գայ: Ի՞նչ վնաս: ...Դուք արհեստին տիրացէք...:

Եթէ այս հնադարեան ճառը դեռ չէ խօսած, անպայմանօրէն կը խօսի այսօր կամ վաղը: Նորեկները հիացումով մտիկ կ'ընեն զինք, ինչպէս ի՞նք ըրած է ժամանակ մը, ու ամէն մէկը նոր յոյսերով հարստացած՝ կ'որոշէ հնազանդիլ վարպետին: Որքա՛ն միամտութիւն եւ բարութիւն կայ սա նորեկներուն ապշահար նայուածքներուն մէջ: Պատրանաթափութիւնը չ'ուշանոր սակայն ու կը քամէ՛ անհատը իր անհատականութենէն, կը կաղապարէ անոր կեանքը, կը մերկացնէ զայն երազներէ եւ երեւակայութենէ...

Ահա ձեր վարպետը, որ կերթով կը շաղէ կաւը: Կ'ապրի՛ կաւը: Գլուխը դռդէն վեր չ'առնէր բնաւ:

Վահրամ յաճախ անոր դուրսը երեւակայած է կաւէ շինուած եւ տարօրինակօրէն խնդուքը եկած է միշտ:

Վարպետը կը շարունակէ շաղիլ դռդին կաւը պիբիկ, զօրաւոր շարժումներով: Հինցած աթոռակը կը ճղզայ անոր շարժումներուն տակ: Դիմացի պատին հին սարգոստայնը պահած է չորցած ճանճը, որուն թափանցիկ թեւերը դեռ կը սարսուտն հովուն հոսանքին տակ:

Վարք՝ սալայատակին ու պատին միջեւ ծակ մը փորուած է, ուրկէ՛ գուրս կը հոսին աղտոտ ջուրերը: Հոն, աճած են խոտի եւ փուշի մեծ թուփեր, որոնցմէ մէկուն կամ միւսին փշոտ գլուխը ատենը անգամ մը կը ցցուի պատուհանին ետեւէն, ու ապա, հովին ուժգնութեանը տակ կրկին կը խոնարհի ու կ'անյայտանայ:

Վահրամ կը դիտէ այս բոլորը. աւելի հետուն՝ քաղաքին հակայական շէն-

քերք կը ցցուին արեւին շլացնող լոյսին մէջ, ու կը հալին կարծես: Անգամ մը եւս կը նայի ժամացոյցին: Քանի մը վայրկեան կայ միայն, ու բոլորը կ'ելեն դուրս, բակին մէջ կը դրաւեն իրենց սոփորական տեղերը ու կը բանան իրենց ճաշամանները:

Կէսօրները, Վահրամ կը քաշուի ցանկապատին մէկ հեռու անկիւնը, եւ լուռ կը դիտէ բակին մէջ վազվազ մանուկները: Յաճախ մտածած է, թէ այդ բոլորի մանուկները ինչո՞ւ բնորոշ են գործարանին բակը իբրև խաղափայր: Քաղաքը ունի հրապուրիչ հանրային պարտէզՊը, աւազաններով, ցայտադրելուներով, ծառ ու ծաղիկով, սակայն, այդ մանուկները, թիւով շուրջ 30 հոգի, բոլորն ալ ազատտ, կոշտ, անխամ, առտու-իբրիկուն կը խաղան գործարանին շրջ ու փշոտ բակին մէջ:

Կէսօրները օդը անտանելի է քաղաքին մէջ: Ամէն կողմ կրակ դարձած կ'ըլլայ: Եւ այդ տաքութեան մէջ՝ նոյնքան տաք ու խենթ հով մը կը փչէ անկանոն ուղղութիւններով, կը զարնուի գրեթէ ամէն առարկայի: Գլխաւորաբար այս կացութեան համար է, որ կէսօրուան դադարներուն, աշխատները ընդհանրապէս կը շարունակեն ցանկապատին տակ, ուր հովը համեմատաբար տկար է եւ արեւը նուազ ազդեցութիւն ունի: Վարպետները կը նախընտրեն մնալ ներս. սակայն աշխատները ստիպուած են դադարներուն դուրս դալու:

Վահրամ հագիւ աւարտած էր ճաշը, ու լաթէ ծրարը տեղաւորած էր աշխատական իր դոզնոցին խոշոր դրպանին մէջ, երբ կ'ըր, մանկունակ դէմքով տըղայ մը եկաւ ու նստեցաւ մօտը: Վահրամի աչքերը ուղղուած էին դէպի մանուկներուն խաղը: Տղան տեղաւորուեցաւ Վահրամի մօտ, եւ դէմքը դարձնելով անոր նայած կողմը, ըսաւ.

— Անունս Ճորճ է:

Վահրամ դառնալ փոքր նշան մը ըրաւ, կարծես ըսել ուզեց. «Եւ՛ր. լսեցի»:

— Մտերիմ ընկերներէս ոմանք դիս Ճորճիկ կը կոչեն, — շարունակեց Ճորճ առանց Վահրամին նայելու: Վահրամ դարձաւ իր կողմը, քանի մը վայրկեան դիտեց զինք, ու նորէն սկսաւ հետեւիլ մանուկներուն:

— Ի՞նչ է անունդ, — հարցուց Ճորճ:

— Վահրամ:

— Մտերիմ ընկերներդ ի՞նչ կը կոչեն քեզ:

— Վահրամ:

— Ինչո՞ւ ոչ Վահրամիկ, — հարցուց Ճորճ, կարծես կէս վրդոված, կէս զարմացած շեշտով մը:

Վահրամ կրկին դարձաւ անոր կողմը, եւ առաջին անգամ բլլալով՝ երկուքին աչքերը հանդիպեցան: Քիչ ետք, Վահրամ ըսաւ.

— Չեմ գիտեր, չեմ հարցուցած:

Քանի մը վայրկեան դիտելէ ետք մանուկները, Ճորճ կրկին հարցուց.

— Դեռ քանի՞ տարի ունիս:

— Ձեռնակցոյց...

— Վարպետ դառնալու համար:

— Ինչ դիտանմ:

— Քանի՞ տարի եղաւ մտնելդ:

— Կարծեմ տասներեք: Այն առտու, տասներկու տարեկան էի:

— Ո՞ր առտու...

— Այն առտուն, որ մտայ. կ'ըսեն, որ Հիմա քանրհինգ տարեկան եմ, — աւելցուց անմիջապէս, կարծես ջանալով առաջը առնել Հաւանական ուրիշ հարցումի մը: Պահ մը ետք, Ճորճ կէս մը ինքնիրեն, ու կէս մը Վահրամի, ըսաւ.

— Քանի՞ շաբաթ տարեկան... կեանք մը...

— Կարեւոր չէ...

— Աւելի տարիքոտ կ'երեւիս: Ես նոյնիսկ չեմ յիշեր, թէ ե՞րբ մտայ: Թերեւս մէջը ծնայ:

— Մէջը ծնած չես կրնար ըլլալ. մոռցած ըլլալու ես:

— ... Մոռցած ըլլալու եմ...:

Ճորճ դեռ պիտի ուզէր շարունակել խօսակցութիւնը, սակայն դադարի ժամանակը վերջացած էր եւ բոլորը մտան ներս: Ներսի խոնար գոգութիւնը սթափեցուց զինք եւ տրամադրութիւնները փոխուեցան: Կուշտ էր հիմա եւ օդը՝ զով: Մտածեց, թէ ոչ մէկ պատճառ ունէր ինքզինք գոնէ առժամապէս երջանիկ չզգալու: Պէտք էր ներս մնային մինչեւ արեւամուտ: Գործարանը արուեստական լուսաւորում չունէր, եւ մթննայէն ետք անկարելի էր շարունակել աշխատանքը: Հիմա ժամը երեք է: Հազիւ երկու-երկու-բուրակէս ժամ կայ... Հոգը դադարած կ'ըլլայ եւ օդը զովացած: Քալելը հաճելի է նման պարագաներու տակ:

Վահրամ նշմարեց, թէ Ճորճ իր խմբակին մէջ է: Չարժացաւ: Մինչեւ այդ բնաւ չէր նշմարած զինք: Անդրադարձաւ նաեւ, որ Ճորճի աչքերը յաճախ իր վրայ սեւեռած կ'ըլլային: Ատիկա չնկոյց զինք: Ոչ մէկ կարեւորութիւն ունէր իրեն համար այդ թուի, միջաւանակ, գեղադէմ տղան: Կէսօրէ ետք, հալառակ անոր, որ աւելի յոգնած կ'ըլլայ, գործարանին մթնոլորտը աւելի հաճելի կը դառնէ, աւելի զով, քիչ մը աւելի խորհրդաւոր: Աւելի զիւրին կրնայ տարուիլ իր մտածումներով եւ ժամանակը կ'անցնի աւելի արագ:

Երբ գործարանը բաւականաչափ մթնցաւ, վարպետները կամացուկ մը շտկեցին աթոռակներուն վրայ ծռած, կաղապարուած իրենց մէջքերը ու ելան ոտքի: Իրենց յոգնած, մանրացած աչքերը յոռեցին պատուհանէն դուրս, կարծես դժգոհելով, որ օրը հասած էր իր աւարտին: Յետոյ՝ դանդաղօրէն հանեցին իրենց կաշիէ զոգնոցները, ծալեցին, զնտեղեցին զանոնք աթոռակներուն վրայ ու պատրաստուեցան դուրս ելլելու: Աչկերտները մինչ այդ դուրսն էին արդէն եւ զոնապահը կանգնած էր բաց դըրանն զիմաց, ու կը հաշուէր դուրս ելլող աչկերտները:

Գործարանին դարպասէն դուրս դուրս, Վահրամ բռնեց աւազոտ արահատ, ձամբան ասֆալտապատ շէր մինչեւ գործատան դարպասը: Մօտ հարիւր մեթր առաջ, ասֆալթը կը կտրուէր ու կը սկսէր աւազէ արահետը: Հազիւ քանի մը քայլ առած էր, երբ ձորճ հասաւ ետեւէն: Նախ լուս քալեցին: Յետոյ ձորճ հարցուց վախկոտ, դրեթէ յանցաւորի շէտով մը.

— Չե՞ս խորհիր, որ մենք մեզ կը խարենք:

— Ինչպէ՞ս:

— Աման շինել սորվելով:

— Բայց ուրիշ ի՞նչ կայ ընելիք:

— ... Ուրիշ ինչ կայ ընելիք:

— Մխիթարանի ձեւ մըն է թերեւս,

— ըսաւ Վահրամ քանի մը վայրկեան ետք, կարծես դժկամելով:

— Ինքնախարէութեան ձեւ մը, —

արբազութիւն մը ընողի շէտով հաստատեց ձորճ:

— Ինքնախարէութեան ձեւ մը,

ձանձրոյթ փարատելու ձեւ մը, կեանքը

խմտտաւորելու ձեւ մը, եւ դեռ կրնաս

ուղածդ ըսել այս մասին: Կարեւորը այն է,

թէ ապրելու ձեւ մըն է. աւելին պէտք

չէ արդէն, — ըսաւ Վահրամ դայտոյթով ու արագացուց քայլերը:

Ասֆալտապատ ճամբուն եզերքը

բաժնուեցան իրարմէ:

Տարօրինակօրէն թեթեւ, ուրախ

տրամադրութիւն մը տարածուած էր

Վահրամի հոգիին, երբ առանձին կը քա-

լէք քաղաքին այդ գեղեցիկ փողոցէն:

Արեւը նոր մարը մտած էր եւ դիւթիչ

զովութիւն մը պարուրած էր կարծես

ամբողջ քաղաքը: Ծամբան, քանի մը ան-

ցորդ աղջիկներու ժպտեցաւ, օմանց ալ

անուշ խօսքեր փսփոսց. կանգ առաւ

հսկայ շինութեան մը առջեւ: Հաշուեց

յարկերը: 15 յարկ: Ապշեցաւ քիչ մը ու

շարունակեց ճամբան: Երբ իրենց տան

մօտեցաւ, սիրտը նեղցաւ կարծես: Գրան

դիմաց մտածեց ետ դառնալու ու քիչ մը

եւս քալելու մասին, բայց յետոյ վանեց

այդ դադափարը ու մտաւ ներս: Անմի-

ջապէս զնայ իր սենեակը: Մայրը չկար

մէջտեղ: Մտածեց, թէ կա՛մ դրացուհիին
ժօռ ըլլալու է եւ կամ գլու՛մի համար
վար իկած:

Սենեակը, ըստ սովորականին, թափ-
թըփած վիճակ մը ունէր: Երկնցաւ մահ-
ճակալին վրայ ու սրկարէթ մը վառեց:
Քործարանէն ներս ծխելը արգիլուած
էր, սակայն երբ տուն դար, կը սիրէր
մահճակալին վրայ երկնցած ժածերով
ծխել: Քանի մը վայրկեան հալք, մայրը
զրուիւր զուռնէն ներս ցցած՝ հարցուց.

— Եստո՞նց եկած ես:

— Ո՛չ. ո՛ւր էիր:

— Ներսը քնացած էի:

Մայրը մտաւ ներս, նստեցաւ մահ-
ճակալին եզօրքը:

— Այսօր Հուրիկին մօրը հետ խօ-
սեցայ, — ըսաւ կեղծ ժպտով մը:

— Ո՞ր Հուրիկին:

— Մոռցա՞ր... Համաձայն է: Միայն
ըսաւ, որ նախ պէտք է վարպետ դառ-
նաս: Հուրիկին ալ ըսաւ, թէ պէտք է
փաստես, թէ ինքնագլուխ կրնաս ապ-
րել...

— Ի՞նչ յիմար բաներ ըսիր իրենց նո-
րէն...

— Վահրամ՛, դուն չէի՞ր ըսողը, որ
հաւանած ես Հուրիկը: Յիմար բան չկայ:
Համաձայն են: Միայն պէտք է, որ նախ
վարպետ դառնաս:

Եւ ձայնը մեղմացնելով՝ իմաստուն
խօսք մը ըսողի՝ ձեւերով, աւելցուց.

— Փաստես, որ կրնաս ինքնագլուխ
ապրել: Քիչ մը ինքզինքդ նեղը գիր: Հի-
մա պէտք է գոհուիս, որ վերջը վայելես:
Օղէն բան չի գար...

— Լաւ, լաւ, կ'ըլլայ...

Իննթ են՝ ի՞նչ են: Վարպետ դառ-
նալը իր ձե՛ռքն է: Ո՞վ շուգեր վարպետ
դառնալ... Ատոր համար չէ՞ որ տաս-
ներեք տարիներ աշկերտութիւն ըրած
է... Փորձեց գտնել, թէ ինչ զարգացում
ունեցած է վերջին շրջանին: Իր լճա-
ցած, կարծես աւարտած կհանքը ի՞նչ
յոյս կրնար տալ իրեն: Փորձեց պաղա-
րիւնութեամբ մտածել այս հարցերուն
մասին: Սակայն, ի վերջոյ, եկաւ բնաւ
չմտածելու եղբակացութեան:

Յաջորդ առտու, սովորականին պէս
արթնցաւ ու պատրաստուեցաւ գործա-
րան երթալու: Մայրը սուրճը բերած ու
դրած էր մահճակալին քով, սեղանին
վրայ ու նորէն գացած էր քննալու:

Սոնց սուրճը եւ ծխեց երկու սիկա-
րէթ: Մտածեց, թէ պէտք է նուազեցնէ
սիկարէթը: Մտնաւորաբար վերջին եր-
կու ամիսներուն շատ ծխած էր: Ամէն
դիշեր մէկ-երկու տուփ:

Այս մտածումներուն մէջ էր, երբ
յանկարծ անդրադարձաւ, թէ ձեռքը ինք-
նաբերաբար կրկին դացած էր սեղանին
անկիւնը դրուած սիկարէթի տուփին:
Մտածեց, թէ սիկարէթը նուազեցնելու
մտածումին չափ անիմաստ մտածում
կարելի չէ ունենալ: Ելաւ մահճակալէն
ու սկսաւ հարուիլ: Ատոնները երեսը
լուալու սովորութիւն չունէր. մանկու-
թենէն չէր սիրած այդ զործողութիւնը:

Երբ փողոց իջաւ, առտուան թարմ
օդը զարնուեցաւ ղէմքին, թափանցեց
հոգիին եւ ունեցաւ սլքատու անդիմադ-
րելի փափաք մը: Քայլերը դանդաղեցուց
և թեթեւցած, խաղաղ արամադրութեամբ
մը ջանաց կարելի եղած շափով ուչ հաս-
նիլ գործարան: Շէնքի մը վրայ, պարան-
ներէ կախուած երկու մարդիկ նշմարեց,
որոնք, ըստ երեւոյթին, գրազած էին
լայն ու անհամար ապակիէ փեղկերը
մաքրելով: Յիշեց այն հին, փտած պա-
տուհանը, որուն դիմաց պիտի կայնի քէչ
ետք, եւ որուն փոշոտ ապակիներէն ա-
րեւի ճղճիմ ճառագայթներ պիտի իջնան
ներս, ու խլրտին դանազան իրերու վը-
րայ: Աւելի հաք՝ յիշեց Հուրիկին խօս-
քը. «Յէտք է փաստէ, թէ կրնայ ինքնա-
գլուխ ապրել»: Հուրիկը ուզած էր, որ
կարելի արագութեամբ բուռ հասնի»,
լմնաց աշկերտի, սորվողի իր մակարա-
կին վրայ: Եթէ Հուրիկ նման երազներ
ունեցած է, ինչ է ուրեմն անոր տարբե-
րութիւնը վարպետներէն եւ կամ նորեկ
աշկերտներէն... Այո՛, Հուրիկը երազած
է, որ ինք բազազայ լինէ՞, ինչպէս կը
սիրեն ըսել այս քաղաքին մարդիկը: Ձի
գիտեր, թէ ինք փորձած էր «չինել» այդ
բազազայ՝ կոշուածը, փորձած էր լինել

դա՛յն վարպետներուն հասկցած եւ Հուրիկին ուզած ձեւով: Սակայն, երբ յանկարծ անդրադարձած էր, որ տարիքը առած է, թէ՛ կեանքին կէտը վատնած է արդէն «չիսկելու» ու «սորվելու» վրայ, գիտակցած էր, թէ ի՛նչ որ փորձած էր չիսկել իբրեւ «պապայ» փաստօրէն անցեալ էր արդէն...:

Կար ժամանակ մը, երբ յոյսն էր դինք գործարանէն ներս պահողը: Որ մը վարպետ դառնալու յոյսը: Մտածեց, թէ հիմա, որ այլեւս շունի այդ յոյսն ալ, ի՛նչ բան է, որ զինք այդքան ամուր կապած է այդ հին, փոշոտ գործարանին: Վերջապէս, կարելի չէ ուրանալ, թէ իսկապէ՛ս կապուած է գործարանին: Մտածեց, թէ ապրելու համար մէկ բան պէտք է միայն: «Ապրելու ձեւ»ը: Աշկերտութիւնը այդ ձեւերէն մէկն է անտարակոյս: Ա՛նա՛ թէ ինչ: Որքա՛ն ազահովութիւն կը ներշնչէր իրեն իր այդ համեստ գիրքը: Որքա՛ն հարուստ կը զգար ինքզինք անով: Ի՛նչ կ'արժէր ինք տասնց

անոր, ինչո՞վ կրնար սահմանել ինքզինք, Գայլերը ինքնաբերաբար արագացած էին արդէն:

Վարպետութիւնը կեղծիք մըն է պարզապէս: Ինք, տարիներու ընթացքին, ա՛լ վարժուած է աշկերտական կեանքին, որ միակ հարազատ կեանքն է իրեն համար: Ապրելու ի՛ր ձեւը: Որքա՛ն զգուանք տեսաւ քաղաքին արդի, հսկայ շէնքերուն մէջ, որքա՛ն ատելութիւն ու, մանաւանդ՝ որքա՛ն սարսափ...:

Գործարանը պէտք չէ փոխուի բնաւ: Ձայն նորուէլ ուղղակիքը պէտք է ոչընչանան, կործանին...:

Երբ գործարան մտաւ, երկար խոնարհութեամբ մը բարեկեց վարպետը ու կանգնեցաւ իր տեղը, յուսալով, որ միշտ մնայ հոն, յուսալով, որ բնաւ չի գար այն օրը, երբ ստիպուած պիտի ըլլայ նստելու վարպետին ցածկեկ, բայց ուրիշներու աչքին բարձր երեւցող այդ ահարկու տթոռակին վրայ...:

ՎԱՀԱՆ ԶԱՆՈՅԵԱՆ

ՁՄԵՌՆԱՅԻՆ ՀԵՔԻՍԹ

Ձմեռ՝ ազգիկ հիւքերիք
 Որ կը պահէ իր աշխարհը բուրբէն:
 Ձիւնի անբիծ խաղաղութիւնը
 Կը շարունակէ արեւի սարդաստայններ կազմել,
 Եւ խաղկամէր կը յորդի...
 Հողի ընդերկրեայ խրտումներ:
 Պահէ՛, պահէ՛
 Մածկնցին տակ պայթող իրձերը կարմիր:
 Եւ օդի ջինջ ուլարտին մէջ,
 Ոչինչ լսելով. մտածումի ջնջուած ծաղիկներով,
 Շողաթաթախ
 Կ'արքեմայ մարմինն իր մերմակ:

Մէկը ըսաւ, թէ
 Վիհեր կային հոս:
 Մէկը ըսաւ, թէ
 Չորցած բոյսեր կային այս կողմերը:
 Մէկը ըսաւ...

— Թռչուններ յոգնած
 Թառերը կորսնցուցած՝ սաւառակներու մման
 Մեռադեայ միջեր տրձակեցին
 Եւ խեղճութեան վիհերում մէջ:
 — Ո՛չ, ո՛չ,
 Երբեք անմեռութիւնէ չեմ տառապիր, —
 Բողոքեց ազգիկը:

Հոս՝ աչքերը
 Լինելը չեն, ուր հոգին կ'անի:
 Ոչ ալ արեւը վնիտ
 Կը թակարդուի խորը անոնց:
 Սպասումը՝ շողերում հետ կ'ընկղմի,
 Հարիզունի գանձերում մէջ սպիտակ
 Լոռութիւն կը կաղկանձէ...
 Այստեղ մարդիկ կը մեռնին լուս
 Ամէն բոպէ,
 Աչքերն իրենց կը մնան բաց...

Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՔՆԱՐ ՀԻՆՊԱՇԵԱՆ

ԱԻԵՐԱԿՆԵՐԸ

Մարմնիս իւրաքանչիւր անդամին կապուած ծանրութիւն մը աւերակ-
ներուն ուղղութեամբ կը ձգուէր. ջիղերս հոսանքէ մը տարուած դէպի հոն
կ'երկարէին, ջիղերս կը զաւաճանէին ինծի, կը հեռանային ինձմէ:

Սկսայ վազել...

Հեւքիս մէջ համազուտօ՛ւմ էի, որ այդ աւերակները դոյրութիւն չունին
ընկերներուս համար, գիտէի, որ անոնք միայն ինծի պատկանող քարեր են:
Քարերու կարօտը սրտիս՝ շարունակեցի անհունները փոքրացնել:

Հասայ:

Կը հեւայի, կու լայի, ուրախ էի:

Աւերակները ձեւ առին, անջատուեցան, դունաւորուեցան: Աւերակ
չէին անոնք: Աւերակները վլատակ կ'ըլլան, ըստած էր ինծի, բայց իմ ա-
ւերակներս անդամ քանդուած պատ մը չունէին: Սիւն ու դերան ունեցող
սուններ կային, շէնքեր, խանութներ: Քանի մը փողոցներու մէջ նոյնիսկ
կանաչ պատերով տուներու հանդիպեցայ...

Հետաքրքրութիւնը սկսաւ տանջել զիս: Քաղաք մը կար դիմացս, հաս-
տատուն ու կանդուն քաղաք մը, զոր աւերակներու հետ շփոթած էի: Ու-
ղեցի հեռանալ, հեռուէն գիտել, ստուգել տեսածս, բայց դետնի թանձր
կուպրը անշարժացուցած էր ոտքերս:

Ծանր վախ մը նստաւ հոգիիս:

Մինչև կ'ըր պիտի մնայի այդպէս, որմէ՞ փրկութիւն պիտի յուսայի:

Ահաւոր եւ սուր ճիչ մը պատուեց սիրտս եւ արցունքներս յորդեցան:

Մարդկային ստուեր մը արագ անցաւ մօտէս, վաղեց կանաչ տուներէն
մէկուն ուղղութեամբ, անդադարձաւ, որ տեսած էր զիս: Կանգ առաւ:

Աղտոտութենէն դիտուն փակած մազերով, սովորական դիմազծերով
աղջիկ մըն էր, երիտասարդ չէր, ծեր ալ չէր, հազած հապուտը զոյն չու-
նէր: Երկար պարան մը բոնած էր ձեռքին, զոր արագ-արագ կը փաթթէր
մարմնին շուրջ, ոպա ջղային փութիտութեամբ կը քահէր կազմած հան-
գոյցները: Աչքերը աչքերուս դամած՝ արտայայտութենէն դուրկ նայուած-
քով մը կը յառայանար իմ կողմս:

Մարտափս կրկնապատկուեցաւ եւ խտացաւ աչքերուս մէջ: Աղջիկը մօ-
տեցաւ ինծի, բռնեց ձեռքս:

— Մի՛ վախնար, — ըսաւ, — աչքեր կարդալու արուեստը դիտեմ ես:
Մենք տարեկից ենք, թէեւ ես ճանչցած եմ մեծ հայրդ եւ անոր հայրն ու
մայրը: Մարդէրը չեն փոխուած: Ծնողներդ ալ կը վախնային իրենցմէ տար-

բեր, իրենցմէ դուրս եղող բաներէն: Ինչպէ՞ս եկար այս քաղաքը. ե՞րբ աւերակներու գոյութիւնը նշմարեցիր...: Հետեւէ՛ ինծի եւ ես քեզի ցոյց տամ կերտած շէնքերս. ա՛յնպէս մը շինած եմ զանոնք, որ հեռուէն աւերակի աըպաւորութիւն ձգեն. անոնցմէ ներս դուն բան պիտի չտեսնես, բայց եկո՛ւր:

Աւերակներու աղջիկը ամուր քաշեց ձեռքէս:

— Չեմ կրնար, — ճշացի, — կուար կայ. դետինը կը քաշէ զիս:

— Հոգ չէ, — ըսաւ, — կ'ազատեմ քեզ. սկիզբը ես ալ ունէի այդ գժուարութիւնը, հիմա վարժուած եմ:

Խենթ աղջիկն ու ես ձեռք-ձեռքի տուած՝ մասնք առաջին փողոցը: Անոր ձեռքին փերձութիւնը սառն բան մը կը պահէր իր մէջ. տեղ մը զգացած էի այդ հոսանքը, տեղ մը տեսած էի անգոյն այդ դէմքը: Մտերմութեան մը հաճելի մօտիկութիւնը ծաւալեցաւ մէջս: Աղջիկը նայեցաւ ինծի: Փայտեցանք:

Դուռ մը բացաւ, հրեց զիս ներս:

Խաւաքարտէ պատերու ետին ամայութիւն էր, բայց ինքը գէմքը անկիւն մը դարձուցած՝ թօսիլ սկսաւ, զիս ծանօթացուց: Դուրս ելանք. յաջորդ շէնքը կանաչ էր:

— Լա՛ւ նայէ, — ըսաւ, — այդ պատերը ազնիւ քարէ շինուած են. հոն մանուկներ կը քնակին. ձեր աշխարհին նման այստեղ ալ մանուկներ կան. ես ալ մանուկ մըն եմ. այդտեղ զիս շահակցան, անիծեցին խաղերս: Միբեւ փորձեցի, կեղծաւոր անուանեցին զիս, կեղծել փորձեցի, անխիղճ բռին ինծի. ես ալ փախայ, եկայ հոս. տուն չիկեցի, գաւազներ ունեցայ եւ առանմին ապրեցայ. կեանքը ազուրդ է այստեղ, ամէն ինչ խաւաքարտէ շինուած է. վայրկեանի մը մէջ կը քանդուաւ բոլորը, յետոյ կը վերակառուցես. ես այդպէս կ'ընեմ, ձեռքիս պարտնը կը պտտցնեմ շոքս կողմ, կը փլին բոլորը, յետոյ ատենը կը տեղաւորեմ ուզած շարքովս, մարդերը կը փոխադրեմ թաղէ թաղ. ինծի համար տուն չեմ շիներ, թափառել շատ կը սիրեմ:

Մենք երկար քաշեցինք:

Ամէն կողմէ մանուկներու ճիշեր կը զարնուէին սկանջիտ, բայց մանուկներ չէի տեսներ. ոտնաձայներ կը լսէի, բայց մարդ չկար:

Աղջիկը փորձեց ծանօթացնել զիս իր բարեկամներուն, թախանձագին խնդրեց, որ բառ մը ըսեմ անոնց: Անկարողութիւնս արտօնեցուց զինք: Յուսահատեցաւ: Յետոյ շրջին խնդուք մը սկսաւ ցնցել մարմինը, խնդաց ժամերով, խնդաց՝ իր կապոյտ լինտերը ցուցադրելով: Լռեց:

— Գնա՛, — ըսաւ, — առօջին վայրկեանէն պիտի, որ ինծի ընկեր չես կրնար ըլլալ դուն. քիչ ետք պիտի քանդեմ տուները, ահաւոր տեսարան մը կը պարզուի այն ատեն. քնա՛, դուն չես կրնար դիտել աստիկա, չես կրնար դիմանալ այդ բոլորին. ես գտած եմ գիժանալու ձեռք. կը պարեմ, խելացնոր շարժումներ կ'ընեմ: Ոչ ոք գիտէ այդ ողբը, դուն ալ չես կրնար սորվիլ, ձեր աշխարհին մէջ, երբ փորձեցի դայն սորվեցնել, խենթ կարծեցին զիս եւ հարածեցին. քնա՛:

Չկրցայ հեռանալ. մոռցած էի քայելը. փորձեցի բսել աղջկան, որ հետը մնալ կ'ուզեմ, տուն քանդել կ'ուզեմ, այդ պարը սորվիլ կ'ուզեմ, պարել կ'ուզեմ, բայց ան հրեց զիս, քաշընջով հեռացուց տուներու սահմանէն:

Աչքերս ուղղած էի աւերակներուն: Քիչ ետք մարակ մը շաշեց օդին մէջ. աւերակները չբացան: Անգոյն յրջադէսս մը, հեռո՛ւն, հովուն հետ կը տատանէր:

ՔՆԱՐ ԺՆԳԱՅԵԱՆ

ԶՈՒԳԱՀԵՌԻ ԱՌԱՆՅԻՆ

Հանձնարարի փոսին մէջ,
Ուր կռիւնքը մետաղներուն
առողութեան բջիջներով կը ճգնի
ինձեզինք կեանքին կամրջել
Աչք մը հաքած՝
Արեւազալ կ'աղերսէ...

Ու քիթերուն
Զուգահեռին առանցքէն՝
Փախչող հմայքը հողին
կը մամռանայ՝ շէնքերու
Շուփին ներքեւ լուծուելով:

Ու սուպրի
Ուղեղին պէս սնուելով,
Ինձեզինք երկնի կը տենչայ
փլեմիփ կողերուն մէջ ապակի,
Ուր դիակներ
Քափսիւյներով ներարկուած՝
Թաղման կարգի կը սպասեն:

Ապա՝ կ'երթայ
Երբուղարձի տումերուն
Տրցակները երկններանգ
մագաղաթի կապտակալած աչքերով
Մեֆանիզմի արշաղոյսին կտակելու...

Անգիտակից վայրկեաններու շղթայէն
Մագնիսացում մը յանկարծ
Նոր ջերմութեամբ բռնաւար՝
Քայլաքիւնն իր՝ ներկայի
Մարտափին դէմ ցցելով՝
Իր էութեան անդունդին մէջ
Ձիմք կը ձուլէ վերստին:

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՑԵԱՆ

ՆԱԶ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՅԵՌԱԶԱՅՆԸ ԼՌԵՑ...

Երուանդ այսօր եւս թուղթերու ծը-
րարը ձեռքին, իր ուստայնէն սպրդած
սարգի մը դանդաղութեամբ՝ դուրս կ'ել-
լի տունէն: Սպանած էր գիշեր մը եւս
ու առաւօտեան արեւուն տակ կը գինով-
նար:

Լու կը ճանչնար փողոցի մնայուն
յաճատորդները, դրան առջեւ պտըտող
թզուկ պահակը, մեծ խանութի առջեւ-
ի փոքր մանչը, որ մատները կը լիզէր,
ճամբուն կզերգէն շտապող ճափոնցիի
զիմազմով զոյգերը եւ իր հեզ դասըն-
կերներէն մէկը:

Այդ ամէնը լու կը ճանչնար, առա-
ւօտեան մեղմ արեւու շողերուն նման:

Մրարը ամուր դրկած էր: Երկինքը
մշուշապատ էր ու հեղձուցիչ մթնոլորտ
մը կը ստեղծէր:

Հանեց դրոպանի օրացոյցը: Ի՞նչ դըժ-
բաստութիւններ կային այդ թուղթէ
կտորին վրայ...

Հասաւ: Մտաւ հակայ չէնքէն ներս,
որուն իւրաքանչիւր յարկաբաժնի մէկ
անկիւնը փոքր ու ցած քանի մը աթոս,
սեղան մը ու թուղթերու կոյտեր կային:
Գրասենեակի պաշտօնեաներուն թիւը մեծ
էր: Կոնկրետ մարդիկ, որոնք առտուընէ
մինչեւ իրիկուն իրենց պաշտօններուն
լաւագոյն սարուկները դարձած՝ յանձ-
նաբարուած արամադրութիւններով կը
դառնան մեքենական ճշգրիտ արագու-
թեամբ մը:

Իւրաքանչիւրը իր գործը կը սկսի ո-

րոշ պայծառութեամբ ու իրիկունը նուա-
զած կը վերադառնայ տուն, անհամբեր
սպասելով յաջորդ օրուան: Սակայն, օ-
րերը խարուսիկ են. առաւօտն անպայ-
մանօրէն պիտի յաջորդէ իրիկունը, պազ
ու մութ, սպառող ու վերջացող իրիկու-
նը:

Մարդիկ՝ ցորենի հատիկներու ցան-
քին պէս՝ նետուած են հողէ թանձր կոյ-
տի մը մէջ: Անխաբնթաց պոչքաբ մը
ստեղծուած է իւրաքանչիւր անկիւնի մէջ
հաստատուած մարդուն ու ժամանակին
միջեւ: Մարդ իր մեծամտութեամբ կը
մրցի ժամանակին հետ, սակայն նոյն
այդ ժամանակը իր յոռաշխաղացքով
կ'ալլանդակէ, կը թունաւորէ իր մրցա-
կիցը:

Երուանդ, գրասենեակներու մէջ
նետուած այս երիտասարդը, կը դիտէր
գրասենեակ մտնող, գրասենեակէն ելլող
կամ դրան առջեւն անցնող պաշտօնեա-
ները: Փողոցի աղմուկը կը խլացնէր
զինք: Սակաւաթոս էր, կը սիրէր մտիկ
ընել: Մտիկ կ'ընէր ու կը ժպտէր. մտիկ
կ'ընէր ու կը մրափէր, մտիկ կ'ընէր ու
կ'անիծէր:

Այսօր, ահա ինչ տակնուվրայու-
թեամբ մը սենեակը ձգած ու դուրս ելած
էր: Հոն, սենեակին մէջ, առանձին էր:
Սենեակ մը ու ինք. մահաճակ մը ու
ինք. սեղան մը ու ինք: Այս էր իր սան
ամբողջական կահաւորումը:

Քանի մը տարի է հաստատուած էր
հոս: Մայր մը անէր, միակ կապը իր ու

ԶՈՒԳԱՀՆՈՒ ԱՌԱՆՑՔԷՆ

Հանձնուրի փոսին մէջ,
 Ուր կռիւնք մետաղներուն
 ուսուրբեան բշիջներով կը ճգնի
 իմֆիմֆ կեանքին կամրջել
 Աչք մը հաթած՝
 Արեւագայ կ'աղերսէ...

Ու բիրերուն
 Զուգանքին առանցքէն՝
 Փախչող հւնայքը հողին
 կը մամռանայ՝ շէնքերու
 Շուֆին ներքեւ լսեծուելով:

Ու ռուպրի
 Ուղեղին պէս անուղեղ,
 Ինքզինք երկնել կը տենչայ
 հիմնիքի կողերուն մէջ սպակի,
 Ուր դիակներ
 Քափսիւյներով ներարկուած՝
 Թաղման կարգի կը սպասեն:

Ապա՝ կ'երթայ
 Երթուղարձի տումերուն
 Տրցակները երփներանգ
 մագաղաթի կապտակալած աչքերով
 Մե՛հանիզմի արշաղայսին կտակելու...

Անգիտակից վայրկեաններու շղթայէն
 Մագնիսացում մը յանկարծ
 Նոր շերտաբեամբ բռնհատը՝
 Գոյութիւնն իր՝ ներկայի
 Սարսափին դէմ ցցելով՝
 Իր էութեան անդունդին մէջ
 Զինք կը սուլէ վերստին:

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ

ՆԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՀԵՌԱԶԱՅՆԸ ԼՈՒԵՑ...

Երուանդ այսօր եւս թուղթերու ծը-
րարը ձեռքին, իր ոտայնէն սպրդած
նարդի մը դանդաղութեամբ՝ դուրս կ'ել-
լէր տունէն: Սպանած էր գիշեր մը եւս
ու առաւօտեան արեւուն տակ կը զինով-
նար:

Հաւ կը ճանչնար փողոցի մնայուն
յանախորդները, դրան առջեւ պտտող
թզուկ պահակը, մեծ խանութի առջեւի
փոքր մանչը, որ մատները կը լէզէր,
ճամբուն եզերքէն շտապող ճափոնցի
գիմարծով գոյգերը եւ իր հեզ դասըն-
կերներէն մէկը:

Այդ ամէնը լաւ կը ճանչնար, առա-
ւօտեան մեզմ արեւու շողերուն նման:

Երարը ամուր գրկած էր: Երկինքը
մշուշապատ էր ու հեղձուցիչ մթնոլորտ
մը կը ստեղծէր:

Հանկոց զրպանի օրացոյցը: Ի՞նչ դըժ-
բախտութիւններ կային այդ թուղթէ
կտորին վրայ...

Հատաւ: Մտաւ հսկայ շէնքէն ներս,
որուն իւրաքանչիւր յարկարածնի մէկ
անկիւնը փոքր ու ցած քանի մը աթոռ,
սեղան մը ու թուղթերու կոյտեր կային:
Գրասենեակի պաշտօնեաներուն թիւը մեծ
էր: Կոնկուած մարդիկ, որոնք առաւելնէ
մինչեւ իրիկուն իրենց պաշտօններուն
լաւազոյն սարուկները դարձած՝ յանձ-
նարարուած արտադրութիւններով կը
դառնան մեքենայան ճշգրիտ արագու-
թեամբ մը:

Իւրաքանչիւրը իր դորձը կը սկսէ ու-

րոշ պայծառութեամբ ու իրիկունը նուա-
զած կը վերադառնայ տուն, անհամբեր
սպասելով յաջորդ օրուան: Սակայն, օ-
րերը խարուսիկ են. առաւօտն անպայ-
մանօրէն պիտի յաջորդէ իրիկունը, պայ
ու մութ, սպառող ու վերջացող իրիկու-
նը:

Մարդիկ՝ ցորենի հատիկներու ցան-
քին պէս՝ նետուած են հողէ թանձր կոյ-
տի մը մէջ: Աննախընթաց պայքար մը
ստեղծուած է իւրաքանչիւր անկիւնի մէջ
հաստատուած մարդուն ու ժամանակին
միջեւ: Մարդ իր մեծամտութեամբ կը
մրցի ժամանակին հետ, սակայն նոյն
արջ ժամանակը իր յառաջնադաշտով
կ'այլանդակէ, կը թունուորէ իր մրցա-
կիցը:

Երուանդ, գրասենեակներու մէջ
նետուած այս երիտասարդը, կը դիտէր
գրասենեակ մտնող, գրասենեակէն ելլող
կամ դրան առջեւէն անցնող պաշտօնեա-
ները: Փողոցի աղմուկը կը խլացնէր
զինք: Սակաւախօս էր, կը սիրէր մտիկ
ընել: Մտիկ կ'ընէր ու կը ծպտէր. մտիկ
կ'ընէր ու կը մրափէր, մտիկ կ'ընէր ու
կ'անիծէր:

Այսօր, ահուելի տակնուվրայու-
թեամբ մը սինեակը ձգած ու դուրս ելած
էր: Հոն, սենեակին մէջ, առանձին էր:
Սինեակ մը ու ինք. մահաճակալ մը ու
ինք. սեղան մը ու ինք: Այս էր իր սան
ամբողջական կահաւորումը:

Քանի մը տարի է հաստատուած էր
հոս: Մայր մը ունէր, միակ կապը իր ու-

այդ քառանկիւն վերելակին նմանող աշխարհին:

Մեր ու ղեղնած կին մըն էր մայրը: Ան հետու էր իրմէ, գիւղն էր, մինակ: Առաջ ինք ալ հոն եղած էր: Մայրը դժուար կամ էր զինք քաղաք: Քաղաքը մեծ էր. հոն ծառերու ու բոստաններու փոխարէն շէնքեր կային, հողէ փոշոտ ճամբաներուն տեղ՝ սալալուտակուած պողոտաներ: Թիֆլիզայ գարոց չկար, կտր հասարակութիւն: Քաղաքը մեծ էր, քաղաքի մարդը գիւղի մէջ մատով ցոյց կը արժուէր:

Երուանդ ձիւց դիւզը: Մտաւ մեծ քաղաքի փոքր խցիկներուն մէջ, քառանկիւն վերելակով տան մը խցիկը: Կորոնցուց արեւը, աստուածային այդ հարակէզ արեւը: Կանաչ զաւտերը, տաք հողը, պայծառ երկինքը ու այն ամէնը, որոնց մէջ մարդու մերկութիւնը այնքան զեղեցիկ է ու հմայի:

Մտաւ քաղաք: Գրասենեակ: Գործը երևոյթ էր. երեւոյթը՝ ինքնախարհութիւն:

Արեւը կորոնցուցած երիտասարդը իր սենեակի մենութենէն սարսափած՝ զիւրերը սահեցաւ վերելակէն վար, սիրեց լոյսերով սողողած փողոցները ու մնաց հոն մինչեւ ուղի գիւղեր: Հետզհետէ ճանչցաւ փողոցի մէջ գոնուող ամէն անկիւն, կապուեցաւ, սիրեց, ապրեցաւ, քաղաքի շունը դարձաւ:

Երբեմն ընկերներ ու ընկերուհիներ կը հրաւիրէր, կը զիւրերէն միասին: Թարեհամոթիւն հաստատած էր փողոցէն անցնող երէկուան ու այսօրուան աղջիկներուն հետ. մտերմացած էր շատերուն հետ: Հաճոյքի պահերով վերանորոգած էր ինքզինքն ու մեծ շնչառութեամբ վերադարձած գրասենեակ:

Գրասենեակին մէջ շարժում կար, բայց քանի մը օրերէ ի վեր խլուրիւն մը պատած էր զինք: Վերապահութեամբ մը հեռացած էր փողոցէն, օրերը ծանրացած էին ու այսօր պիտի սպասուէր մը կը նեղէր հագին:

Սկսաւ շրջիլ գրասենեակին մէջ: Քանի մը օր առաջ, զիմացը գտնուող

պատշգամէն դէմք մը երեւցաւ: Ինք սկսաւ պատուհանէն շրտօնուիլ: Երկար կը դիտէր այդ փոքր դէմքը, որ երբեմն հոն էր, երբեմն ներսը:

Գործելու ու շարժելու դժուարութիւն մը ծնած էր մէջը: Միշտ աղջիկներու հետ եղած էր, սակայն երբեք մտածած չէր անոնց մասին: Գրասենեակին գիմացը կեցող աղջիկը կը ժպտէր, յաճախ կը ժպտէր, միայն կը ժպտէր ու ժպտար սկսած էր յուզել Երուանդը: Կան օրեր, երբ մարդ վերապանցօրէն զայսու կը դառնայ ու տեղ մը կապուելու պարտադրանք մը կը ծնի մէջը:

Օր մը, Երուանդ սիրած էր այդ ժպտիւրը: Դեռ փոքր էր այն ատեն, երբ նստարաններու վրայ նստած՝ կը դիտէր ուսուցչին գիմաց հաստատուած մեծ սեղանը: Այդ պահուն գրեթէ մեծ կոյտ մը թափեցաւ: Աշակերտները ազակօրէն խիչցին գրեթէ: Լաւագոյնը խիչց ամէնէն ճարպիկը՝ Երուանդ:

Դասարանին մէջ փոքր ու նոր դէմք մը կար, որ ձեռնուան նստած՝ սարսափահար կը դիտէր թարմ միտի վրայ յարձակող վաղբերը: Երուանդ շուտով կը դիտէր այդ փոքր դէմքին սարսափը: Դասապահի վերջաւորութեան, մտտեցաւ ու դժուարութեամբ ստացած այդ զրբը յանձնեց աղջկան սպիտակ ձեռքերուն: Հրեշտակային ժպիտ մը զծուեցաւ աղջիկան ոսկրուտ դէմքին վրայ: Երուանդ այդ օր սիրեց այդ ժպտալը: Սիրեց՝ որովհետեւ գոհունակութեան արտայայտութիւն մըն էր անիկա, սիրեց՝ որովհետեւ դէմքը զեղեցիկ էր ու հմայիչ ու այդ զգացումը անճնշելի մնաց իր յիշողութեան մէջ:

Երուանդ չընկաւ գրասենեակին մէջ:

Նոր դէմքերու ծանօթանալ կը սիրէր, սակայն յուզումը, ժպիտին ստեղծած յուզումը կը դանդաղեցնէր զինք: Այդ աղջիկը պէտք էր հեռանար զիմացէն, որպէսզի ինք կարենար վերապանել իր հանդարտութիւնը:

Օրերը սկսան արուիլ օրացոյցի շուրջ թուղթի վրայէն:

Երուանդ սիկարէթ ժը վառեց : Աղջիկը դեռ կը ժպտէր : Տղան կ'ուզէր ձեռքերուն մէջ առնել ու բոլոր աղջիկներուն պէս խեղդել զայն , սակայն ժպտալ , ժըպիտը պիտի խեղդուէր հետը : Ժպիտը պէտք չէ խեղդուէր :

Պալտօնեաները մեկնած էին : Ուշ էր , երբ դրասենեակը ձգելով հեռացաւ : Կոխեց վերելակին կոճակը , մտաւ ներս : Վերելակը կը սուրար , կարծես բան մը կը սպասէր իրեն վերը կամ թերեւս վարը : Վերելակը կը բարձրանար ու Երուանդ իր երեւակալութեամբ կ'իջնէր վար , յատակը , խորը աչրերուն ու իրազանութիւններուն սիրտը , սպառումներու ու անձկութիւններու , յուսախաբութեան ու դատարկութեան մէջ , մեղմ ժպիտներու մերկութեան մէջ :

Հասաւ դրան առջեւ . ձեռքը միքճեց դրպանը , դրան բանային չկար . անդրադարձաւ , որ ճամբան բանայի ձայն մը լսած էր ետեւէն . . . :

Վերագառնալը դժուար էր . կը տըւալտէր , երբ յանկարծ ներսէն հեռաձայնի զանգը բարձրաձայն հնչեց : Սթափեցաւ : Միեւնոյն ժամանակ հեռաձայնին պատասխանելու ու բանային ունեւնալու բուն փափաք մը ծնաւ մէջը : Ո՞վ էր հեռաձայնողը : Ո՞վ ունեցած էր հետը խօսելու տրամադրութիւն : Կեցաւ դրան առջեւ : Բարեկամուհիներէն մէկը ըլլալու էր . ուլացած ժամադրութեան մը պարտքը ամբողջացնելու համար նոր ժամադրութիւն մը կը կնքէր : Անմիջապէս պիտի պատրաստուէր ու երթար . ամէն ինչ պիտի սկսէր լաւ ու վերջանար , եւ այնքան ատեն , որ վերջաւորութիւն մը կար՝ ամէն ինչ զժրխտութեան առջեւ կը գտնուէր :

Հեռաձայնը կը հնչէր :

Մա՞յրն էր արդեօք : Մայրը հիւանդ էր , ծանր . հեռաձայնը երկար կը զարնէր , մօրը մահը կը գուժէին անկասկած . ինչ տխուր պիտի ըլլար . սպաւորի

տեօք ստանար . մեռելին դազաղ պատրաստէր . դազաղին հետեւէր . . . : Կեանքը վերջացաւ . «լաւ կին էր . մեռաւ , ապառնեցաւ» ըսողներն ու լացողները մտիկ պիտի ընէր :

Հեռաձայնը կը հնչէր . . .

Ժամադրուող չկար , մեռնող չկար . աստուածային ձայն մը հետը խօսելի կ'ուղէր : Աստուածները իրեն հետ խօսելու տրամադրութիւն ունէին : Ինչ պատրաստ էր . հպարտութիւնը կոկորդին մէջ զըրկած՝ պիտի խօսէր , պիտի մեծնար , աստուածներու չափ բարձրանար ու աստուածանար . . .

Հեռաձայնը կը հնչէր . . .

Գրասենեակի տնօրէնը կը դանդաւոր . լոյսերը վտառած ժողցած էր . զործ չէր ըրած . օրերէ ի վեր կ'երազէր , պատուհանէն դուրս կը նայէր . ժողբամանները լեցուցած ու սենեակը ապակեանած էր . . .

Որոշեց հեռաձայնը դռնէլ : Թող երկար մշուէր . . .

Հեռաձայնը հնչեց : Բանայի՞ն : Բանայի չկար . . .

Հեռաձայնին դիմաց կեցողը , անցեւորին իրեն ժպտացող փոքր դէմքն էր . ինչ պէտք էր խօսէր . ինչ ըսէր , անունն ալ չէր դիտեր . ինչ ա՛լ պիտի ժպտէր . . . : Բայց ժպիտը չէր բացատրուեր բռնութիւն , ժպիտը պէտք էր ապրուէր , տեսներէր , անոր հետ պէտք էր մտերմանալ , հաղորդուիլ . . . : Բառերը կորսուած էին :

Հեռաձայնը կը հնչէր . . .

Բանային չկա՞ր . . .

Երուանդ դուրսը չըջեց եւ ուզեց դատին նստիլ , երբ անմիջապէս հեռաձայնին հունչը դադարեցաւ ու իր դէմ կեցած տեսաւ դրասենեակին դիմաց կեցող աղջիկը : Ան՝ ժպիտը դէմքին՝ երկարեց բանային , իր սպիտակ ձեռքերը տարաւ Երուանդի իրա մազերուն , շրթները մօտեցուց անոր շրթներուն ու հեռաձայնը վերջնականօրէն լռեց . . .

ՆԱԶ ՏՆՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՍՄԼՆՈՐԵՍՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Առաւօտուն երբ կ'արթնայ Մեծ Քաղաքի մանչուկը փոքր,
Իր այտերուն վրայ դալուկ՝

Համբոյր, ժպիտ ու ծիածան կը վառէ.

Եւ երբ զոյներն ու միզամած առասպելներն արեւուն
Յանկարծ խոհուն աչքերուն մէջ

Կը մաղուին,

Կը տարածուին,

Կը ծառային անյագօրէն,

Ան կը դառնայ ովկիան մ'անհուն

Ու կը սուսի, կը խորտակուի իր հոգիին եւ արեան

Ովկիանին մէջ անյատակ, ովկիանին մէջ աներակ՝

Լոյսէ խաչեր եւ անցեալի յիշատակէն քաղուած խաչեր,

Կապար խաչեր,

Փոշի խաչեր,

Փուշէ՛ խաչեր...:

Ովկիանին մէջ բազմերանգ՝

Հին հեքիաթներ, նոր պարերգներ, եղերերգներ կը փսփսան...

Ճիշդ նոյն պահուն, ունկնդիր եւ յուշարար այդ մանչուկը միամիտ,

Որ հեռաձայն մ'է խանգարուած,

Որուն ջիղերը սառած՝ թարախակալ բառեր թոթով կը կմկման,

Կը մտածէ միտք մը միայն՝

– Սարսափելի՛ իրողութիւն,

Սարսափելի՛ գիտակցութիւն –

Մանչուկը որբ, մանչուկը խեղճ արգահատանց կը դառնայ՝

Ու բիբերու կեղտ ու ծեփուած ճեղքերուն դէմ,

Ան՝ մանչուկի իր պարզունակ հաւատքով՝ ծովեզերեայ աւազներուն շուրթին
վրայ,

Աւազներէն բերդ կառուցել կը փորձէ.

Եւ իր վտիտ երակներուն ձէթով պղտոր

Ու արիւնին ջրվէժներուն մարտերգով՝

Զայն մկրտել,

Այլակերպել կը ճգնի...

Այսպէս կ'ապրի Մեծ Քաղաքի մանչուկը, եւ տակաւին
Տառապանքով պէխտով՝
Իր անկումէն, ձանձրոյթէն ծով, ձանձրոյթէն խո՛ր կը սոսկայ
Եւ կը սպասէ ցրեղեղին
Միշտ ատելով իր կարկտան դէմքը անգոյն
Եւ տակաւին օրն ի քուն,
Ծիծերէն մօր կը ծծէ արցունք, թարախ, մահաթոյն,
Եւ ամէն օր, երբ հեղուկներն այս պղտոր
Շերտ-շերտ ծեփուած իր հին քիմքին,
Դեռ նոր ծած մաշկին վրայ կ'երկարին,
Կը տարածուին մածուցիկ իբրեւ խաւ մը կերպընկալ,
Կը լերդանան առաւել, կը ճահճանան,
Կը դառնան մորթ անակնկալ,
Օ՛, մանչուկը՝
Պողոտային սալարկուած մայթին վրայ՝
Իր ջիղերուն վախկոտութեան վրայ կու լայ...

Եւ մանչուկը այսպէս կ'ապրի՝ արցունքներու շոգիով, օդով նեխած, փոշիով
Ու նէոնէ լոյսերու կեղծ ջերմութեամբ:
Երկրէ երկիր կը ճամբորդէ, կ'իջնէ պահ մը կոյս աշխարհներ՝
Մարքս ու Էնկէլս, Մաօ, Ֆանոն կը գումարէ եւ արդիւնքը Սոկրատ-Ռուսօ--
Մաքիավելլի խառն գումարէն կը հանէ,
Եւ մնացորդը խառնակ վարանդեանին, Սարաֆեանին հետ մա՛նաւանդ,
Օ՛ ամէն օր բազմապարկել կը փորձէ
Եւ երբեմն իբրեւ գովապղ, թղթակցութիւն — օրաթերթի մէջ տպուած —
անդիմագիծ անձնաթուղթին
Համր հատիկները երկչոտ՝ հատիկներուն պէս համրիչին՝ ասուպիսի կը կանչէ,
դեռ կը փորձէ
Կոտորակել տառերն արդէն երկփեղկուած, կը վերուծէ անգիր էջեր եւ անծանօթ
Քայց շատ հաղորդ ներաձայնին պրոյցները խելագար, փոթորիկները խաւար
Եւ գեղատիպ բազմալեզու մատենաներ: Կը տառապի, կը խորտակուի,
կը վայրանայ,
Քայց թարմ ճիչ մը, բողբոջ երգ մը կամ արցունք մը որսալուն պէս՝
Անմիջապէս,
Անմիջական գինովութեամբ կ'երջանկանայ, կ'ամուսնանայ քառօնի հետ...
կը մանկանայ:

Այսպէս կ'ապրի Մեծ Քաղաքի մանչուկը նոր, եւ ամէն օր
Դեղարանի դրան առջեւ երբոր կ'աննէ պահ մը շունչ,
Իր քնաբեռն բիբերով ան կը տեսնէ երջանկութեան — քնաբեր -- դեղահատի
նոյն տուփերը:
Իբրեւ հաշիջ էջանթիոն կը ստանայ ապա ան
Դեղահատերը այդ հին, դեղահատերը մորֆին,
Աւանդական տօնի մ'առթիւ նոր լոյս տեսած, բայց ծոյլ, թթուած յօդուածներու
Ընթերցումէն ետք միայն՝
Ստամոքսին, աղիքներուն ու մա՛նաւանդ ուղեղին խիթերը բիր
Մեծ հայրիկին, ա՛խ, իբր թէ նորոգուած, ոչիլ հոտող ֆուլթրիկ
Հարսանեկան հանդերձին թելակարին տակ կը թաղէ,

Որովհետեւ եթէ ճշայ իրապէս խելագարի չափ հարապատ,
Որովհետեւ իր վիշտերուն հաշուետուն ու քննիչը ըլլալէ եթէ պահ մը չղաղրի,
Պիտի ըսեն դիմակ հագած ակնոցաբիր մարդերն ամէն.

— Կը կառանցնես, խենթ ես, ի՞նչ ես, հէ՛յ, ուղեղի ի՞նչ փսխուքներ կու տաս
դուրս,

Լո՛ւ՛, նայս որ քեզ աթոռի վերածենք, թող որ հասցէդ մե՛նք չճշդենք,
Ի՛նչ է, արդեօք խենթանոցի սենեակներուն սպիտակ պոռոցներո՛վ կ'ալեկոծիս,
Յիմա՛ր, անփո՛րձ, խեղճո՛ւկ մանչուկ...»:



Գիտեմ յոգնած ես, մանչո՞ւկ.

Գիտեմ որքան տխուր ես դուն, հէք մանչուկ,

Էւ դեռ գիտեմ, թէ այգը, կոր կ'երապես, տիւ ու գիշեր՝

Հեռու, հեռու՛ հեռուներէն ժպտացող երապ մ'է ցարդ տխրադէմ:

Սակայն երբեք, երբեւիցէ՛ չփորձուիս լռել դուն,

Գիշերային բազմալեզու ելեկտրական կանթեղներուն վստահիլ ու քնանալ,

Որովհետեւ այս մայթերուն ծաղրածու կանթեղներն իսկ անտարբեր

Իրենց արեան մէջ թաքնուած սարսափելի տառապանքով, անկումներով
կը հիւծին՝

Նման հանքին մէջ փշրուող, կոտորակուող վայրի երգին:

Երգէ՛, երգերըդ մանչուկ. նեարդներուդ հիւլէները թող որ ճշան եւ աղմկեն
անհաշիւ,

Ըսէ՛ վանոնք: Ինչո՞ւ լռել: Ինչո՞ւ, ինչո՞ւ: -- Թող լռութեան ոսկին այլեւս
ժանգ չկապէ, ըսէ՛, ըսէ՛.

— Եկէ՛ք երթանք պարահանդէս մ'ըստ բախտի, եւ ուխտքի բարկ հեղուկով

Վիճի՛նք մենք հոն, ու մտածենք Հայ Դատի հանելուկին այ մասին,

Կամ միասին մենք մտնենք սա հանրային պարտկիւն միպարանը եւ

բանագրենք,

Ծերունապարզ գրողի մը առընչութեամբ քանի մը ծակ դրուչներ գոյացնելու

կերպը ճշդենք,

Որոշումներ եկրակացնենք, վաւերագրենք, թէ կիրակի առաւօտեան քարոզէ՛ն

ետք պատուական,

Արդեօք որո՞նք թաղականցու պիտի ընտրենք՝ բնակիչներն անցեալի, թէ

ճարպ կապած քսակները քաղքենի...

Կ'ուզէք նստինք ամպիւլանսը սուրացող եւ փոխանակ հիւանդանոց ուղղուելու

Շրջինք ուրախ եւ անհոգ անտառներու մէջ գինով, Մեծ Քաղաքի

քաղաքներուն մէջ խաւար

Ու մտածենք կօշկակարի խանութին պատին ձուլուած՝

Յանկայարոյց ծիծերով արթնթին պէս հոմանուտի մ'ունենալու ձեւին մասին,

Կամ շտապենք հանրատուն ու մզոտած օձիքով վարժապետին ամսականը,

Ճակատագիրը ճշդենք՝ իր հնամեայ փուճ գիտութիւնը ջերմաչափ գործածելով:

(Գրաքննութեամբ)

Եկէ՛ք, եկէք անպայման, գէթ լռութեամբ հաղորդակցինք, դառնանք ընկեր,
Սեղանակից, պաշտօնակից եւ դեռ... Նոյնի՛սկ թշնամի:

Գիտեմ, յոզնած ես, մանչո՛ւկ,
 Գիտեմ, որքան տխուր ես դուն, խեղճ մանչուկ,
 Գիտեմ, մանչուկ, չարածճի մտածումներդ բոլոր, որ ուղեղիդ մէջ կ'ոտոտտեն,
 Բայց երեսի, դեռ առաջուան մանչուկն ես խենթ, դեռ երեւի
 Չես ըմբռնած, որ շա՛տ, շատ մե՛ծ յանցանք է, արգիլուած է այցելել
 Թանգարանը Երեւանի
 Ու գաղտնօրէն, գողնալ-բերել Հայկ Նահապետն բամպակահիւս ջիզերով
 Ու վայն տնկել Միջերկրական այս փերտոն աղէ-աւազ դաշտերուն մէջ,
 Զուարճանալ մանկական չա՛ր խաղերով եւ սպասել, որ ան ծաղկի՛...
 Ու լաւ գիտեմ, որ դուն, մանչո՛ւկ, նոյնիսկ գիտես, թէ միամիտ գառներուն
 Իողուց համար՝
 Եպիսկոպոս, հայրապետ ու վարդապետ երգչախումբը բաղաձայն պատարագներ
 չի մատուցեր
 Ու գերեզմանն այս՝ լուցկիի տուփին չափ, որուն մէջ դո՛ւն ալ կ'ապրիս.
 Զայն լայնցնել երբեք, երբեք չմտածեն,
 Կամ անվճար թաղուելու երազներդ պիտի ցնդին մօտ օրէն,
 Եւ դեռ գիտեմ ահռելին, թէ լա՛ւ գիտես, շա՛տ լաւ գիտես,
 Որ դուն յաճախ Աստուծմէ իսկ տարիքոտ անկամ ծերուկ կը դառնաս,
 Ու տակաւին... նոր ծնած մանկան իսկ չափ բարի, բարի՛ կը ծիծաղիս
 անտարբեր...

Գիտեմ, յոզնած, յոզնեցուցիչ ըլլալու չափ յոզնած ես դուն, ա՛յ տղայ,
 Գիտեմ, որքա՛ն սգամայրեր տխրեցնելու չափ տխուր ես՝ խեղճ ու բարի,
 մե՛ր տղայ,
 Եւ դեռ գիտեմ, թէ արշալոյսն, զոր կ'երազես տիւ ու զիշեր անդադար
 Հեռու, հեռո՛ւ հեռուններուն մէջ նօսրացող առասպելի այրին է մոմ արտաստող
 Եւ երազ մը սգաւոր,
 Դեռ աւելի սարսափելին, անտանելի՛ն ես գիտեմ, թէ երազն այդ կրնայ չգալ,
 Եւ կամ նոյնիսկ վայն սպաննեն բարեկամներդ մտերիմ,
 Ասկայն երբեք, երբեւիցէ չփորձուիս ա՛լ լռել,
 Գիշերային բազմալեզու կանթեղներու զինովութեան հաւատալ ու քնանալ,
 Որովհետեւ այս մայթերուն հարսնետը կանթեղներուն քերթուածներն իսկ՝
 Մեծ Քաղաքին քաղաքացի, խաբեբայ մանչուկներն են քաղքենի:

ՄԵԾ ՔԱՂԱՔԻՆ ՓՈՂՈՑԱՅԻՆ, ՓՈՔՐԻԿ, ՓՈՔՐԻԿ... ՀԱՍՈՒՆ
 ՄԱՆՉՈՒԿՆ ԵՄ ՔԱՂՔԵՆԻ:

ՍԱՐԳՍ ԿՐԻՍԿՈՍԵԱՆ

ՄԵՌՆԵԼԱԹԱՂԻ

ՕՐԱԳԻՐ

Կապը կտրուած կը թուի այսօր
Ընդմէջ իմ «ես» իս ու անձիս հըլու,
Պարզ է որ փափաք մը ունիմ լալու:

Կոպերս արդէն սաստիկ կը ցաւին,
Իսկ աչքերէս ներս
Աչքերդ ուղիղ ինձի կը նային:

Երեք դաւադիր մարդակապիկներ
Կ'ապրին «ես» էս ներս:

– Խաբեբայ մը, որ աչքերդ՝ թակարդեց
ու խարսխեց խոր բիբերուս փոսին:
– Մեռելաբաղ մը, որ փութով թաղեց
Արցունքներն իմ ջերմ՝ անձանօթ տեղեր:
– Ու բանտապահ մը, որ ամուր կղպեց
Դուռն իմ աչքերուն՝ ժպտով մ'անտարբեր:

Կոպերս հիմա սաստիկ կը ցաւին,
Իսկ անոնց ետին,
Բիբերուս չափ վառ, բիբերէս ալ խոր
Տեսիլքդ ամբողջ կը վերականգնի,
Յարդարելով ինձ տիեզերք մը նոր,
Ու տիեզերք մը խըլելով ինձմէ...

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ



Իմացական Հարժույթ

Շ Ի Տ Ա Կ Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ը

(«ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» ԳՐԳԻՆ ԱՌԻԹՈՎ)

Գրականութեան անդաստանը նոր մտած շարք մը երիտասարդ-երիտասարդուհիներու նախաձեռնութեամբ հրատարակ ելած է «Անմիջական գրականութիւն» հատորը, ուր տեղ գտած են Սփիւռքի գրականութեան միջին սերունդի հեղինակներէն ընտրուած քեր:

Երեւոյթը ուշագրաւ է:

Իրօք, Սփիւռքի մեր պայմաններուն մէջ, գրագէտը, անձնապէս, սահմանափակուած կը մնայ իր շրջանակին մէջ: Միջին սերունդի հեղինակները նեղ շրջանակէն դուրս հանելու եւ անոնց գրական գիտագիծը համահայկական չափանիշով ծանօթացնելու ճիգ մըն է «Անմիջական գրականութիւն»ը, որ գլուխ հանուած է, ինչպէս բոլի, գրականութեան անդաստանը նոր մտած երիտասարդներու կողմէ՝ Խոսրով Ասոյեանի, Սարգիս Կիրակոսեանի, Քնար Ճինապաշեանի, Յարութիւն Պէրպէրեանի, Հնազանդ Տէր Սարգիսեանի, Վահան Զանոյեանի, Սօսի Յակոբեանի, Նազարէթ Պէրպէրեանի եւ Էլո Սարաճեանի խմբագրութեամբ:

«Անմիջական գրականութիւն» հատորին մէջ տեղ գտած են գրողներ բոլոր հատուածներէն՝ դաշնակցական, հնչակեան, ռամկավար, համայնավար եւ անկուսակցական դէմքեր, թիւով տասներեօթ հոգի:

Համահայկական քայլ մը կը նկատեմ այս հրատարակութիւնը:

Գրականութիւնը եւ արուեստը վեր են մեր առօրեայ վէճերէն եւ քաղաքական մտածելակերպերէն:

Ընտրուած ուղղութիւնը գրականութեան շիտակ ճամբան է, շողկապելու համար հայ գրական ու մտաւարական ընտրանին:

Ու այդ շիտակ ճամբան ո՛չ միայն հայ գրականութեան զարգացման կը նպաստէ, այլեւ, աստիճանաբար, կը համադրէ մտածողութիւնները՝ համահայկական կենսական խնդիրներու շուրջ:

Այս ճանապարհով գրականութիւնն ու արուեստներն են, որ կ'ազդեն առօրեայ մեր ընթացքին վրայ եւ ուղղութիւն կու տան հայ կեանքի վերելքին:

«Անմիջական գրականութիւն» հատորին մէջ Համախմբուած ղէմքերէն ոմանք ժամանակին գնահատած եմ մամուլով: Այժմ աւելի փտտահոյժեամբ կրնամ ըսել, թէ անոնք իրենց ստեղծագործութիւններով արդէն տաղանդաւոր գրողներու հմայքն ունին:

Ես կը յուսամ, որ «Անմիջական գրականութիւն» խմբագրող երիտասարդները ուրիշ հատորներ ալ հրատարակ պիտի հանեն եւ ուրիշ հեղինակներու գործերը եւս պիտի մատուցանեն ընթերցող հասարակութեան:

Այս է ուղիղ ճանապարհը՝ համահայկական գրականութիւնը բեմադրելու:

*

«Անմիջական գրականութիւն» հատորին մասին իմ այս կարճ գնահատանքին քով չեմ կրնար մոռնալ նորածիլ սերունդի խոռովքն ու աշխատանքի թափը:

Այդ խոռովքին մէջ տաղանդի կայծկրտուքներ կը տեսնեմ, ու յոյս ունիմ, որ օր մը պիտի ճառագայթեն անոնք:

Անոնք եռանդով փարած են գրականութեան եւ ունին արձակի եւ բանաստեղծութեան ուշադրաւ փորձեր: Ոմանք հրատարակած են նաեւ իրենց երախայրիքները:

Առանձնապէս ուշադրութիւնս գրուած են հատորով հրատարակ եկած նորերէն երեքը՝ — Յակոբ Մանուկեան, Վեհանոյշ Թեքեան եւ Խոսրով Ասոյեան: Այս երիտասարդներուն զրքերը օժտուած բանաստեղծներու տուեալներ կը մատուցանեն վերլուծող ընթերցողին: Անոնք ապագայ ունին, եթէ կեդրոնանան իրենց ներաշխարհին մէջ:

Կ'ուզեմ յատուկ մատնանշում մը արձանագրել այս վերջարանին մէջ:

Ոտքս Խոսրով Ասոյեանի մասին է: Ամէնէն երիտասարդը, որ «Կէտեր»ը գրքոյկով խտացած բանաստեղծութիւններ մատուցած է մեզի: «Կէտեր»ը կը բովանդակէ խորունկ եւ այլազան ապրումներ եւ այդ ապրումները արձանացած են կարճ տողերու մէջ, կէտերու հաւասար տողեր, որոնք, սակայն, տաննակ էջերու բովանդակութիւնն ունին: Խոսրով Ասոյեան բարեբախտաբար լեզուի ճկունութիւն ունի, որով՝ իր բանաստեղծութիւններուն խորքն ու արտայայտութիւնը իրարու ձուլուած՝ անթերի արտայայտած են հոգիին խոռովքը մէկ-երկու տողով:

Վաղուան ուշադրաւ բանաստեղծը կը նշմարեմ այս երիտասարդին «Կէտեր»ուն մէջ: Կէտեր, որոնք վաղը կրնան ջահեր դառնալ, եթէ այս նորը հաւատարիմ մնայ գրականութեան:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՄԱՐԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

«Ա Ն Մ Ի Զ Ա Կ Ա Ն

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն»

Հրատարակութիւն՝

«ԳՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԵՄԲԱԿ»Ի

Նախ մեր համակրանքը, որ կ'երթայ Գրական Խմբակին մաս կազմող իննը հորատասարդներուն նախաձեռնարկ ոգիին՝ սառած ու այլեւս ժամանակավրէպ մըտայնութեան ջերմութիւն ներարկելու առաջին փորձին համար. ապա՝ մեր անկեղծ ուրախութիւնը գրական առողջ զգայարանքին, կորովի եւ անկեղծ գրական համոզումին, բանով մը փրկելու ուղեուն մեր տարազնուած արժէքները: Յետոյ՝ մեր միջիջարութիւնը սփռուած հայ գրականութեան վրայ ծանրացող յուսահատութեան դեմ անոնց յուսադրիչ փայտակումին ի տես: Գրական Երիտասարդ Խմբակին անդամները կը պատկանին մեր նոր սերունդին. արձակագիր կամ բանաստեղծ՝ անոնք կը ձեւացնեն ուժ մը, որ բունցք է միանգամայն, որովհետեւ անկեղծ են իրենց հաւատքին մէջ: Ու նաեւ դատումներուն տուած փաստովը՝ անսլառ:

Այս Գրական Խմբակին փորձը եղաւ հրատարակումը հատորի մը, զոր անուանած են «Անմիջական Գրականութիւն»: Գրեցիք փորձ եւ չըսինք իրազործում, որովհետեւ լոյսին ընծայուած հատորը, իր ներկայ ծաւառով՝ անբաւարար պիտի ըլլար ընդգրկելու քսանըփնդ տարուան ժամանակաշրջանի մը մէջ իրազործուած սփռուած հայ բազմատեղ ու բազմաթիւ գրական սեռերը: Արդէն յայտարարուած է հատորին կցուած ծանօթութեան մէջ, թէ հոն տեղ դասած են միայն 17 ընտրուածներ՝ զեղարուեստական դիմագիծ ունենալուն համար: Սակայն, գրականութիւն մը կը յատկանշուի իր թերութիւններով եւ տաւելութիւններով, տալու համար անոր ճշգրիտ դիմագիծը կամ պատկերը:

Յ. Օշական մինչեւ իսկ ինքզինքին չէ թոյլատրած զիջիլ անուն մը իր «Հայ Գրականութիւն» անուն դասագիրքին մէջ:

երբ կու տայ արեւմտահայ գրականութեան ժամանակագրական երթին պատկերը:

Նոյնը կարելի է ըսել Հայ Գրագէտներու Բարեկամներուն համար, անոնց ամփիջակամ գրականութիւն զոյգ հատորներու առիթով, երբ ներկայացուցած են 1922-1940ի ժամանակաշրջանին 53 անուններ: Գրական իմօրակի հաւաքածոն, այս ըմբռնումով անխոցելի չէ: Հատորին կցուած ծանօթութեանց համաձայն՝ կան 17 մոռցուածներ, որոնց մեղքը եղած է հաւանաբար դիրք չունենալը մինչեւ 1940 թուականը եւ սակայն, անոնցմէ ոմանք քայլ պահած են նորերու հետ մինչեւ այսօր: Կան նոյնպէս 51 անուններ, որոնց յիշատակութիւնը արդէն պիտապտոյտ կրնայ պատճառել: Համատեղելով այս անունները, մենք կ'ունենանք մոտաւորապէս 85 պատկանելի թիւ մը, որուն 20 առ հարիւրը ներկայացուած է ներկայ «Ամփիջակամ Գրականութիւն» հատորին մէջ: Գրական իմօրակը ունի իր երիտասարդութիւնը իրեն վկայութիւն եւ մենք կրնանք ներողամիտ դանուիլ ու փորձառական անոր ճիշդին հանդէպ: Ու ժամանակէ միայն, որ լոյս տեսած հաւաքածոն կըրնար անուանուիլ Մաղկախաղ կամ Հատրմտիր Սփիւռքահայ Գրականութեան 1940-1965 ժամանակաշրջանէն: Եւ այսպէս ալ ճիշդ պիտի ըլլար նման անուանում մը: Իսկ խոշոր բաց մը գոցելու անոր արուած պատիւը մեզի կը թուի չափազանցութիւն:

Որքան ալ ուզենք տրամադրուած ըլլալ Գրական Երիտասարդ իմօրակին նախածեռնութեան լաւին հանդէպ, դարձեալ չենք կրնար լայն բանալ բարեացակամութեան կարկիւրը, հակադրութիւն չտեսողներու համար մարդոց միտքին մէջ՝ կատարուած իրողութեանց լոյսին տակ: Որովհետեւ, «Ամփիջակամ Գրականութիւն» եզրը ծաւալին հետ խոտոր համեմատական է ու խոշոր բացը կը մնայ լեցնելիք տակաւին: Եւ ահա ափսոսանքին կը միջամտէ ենթագրութիւնը, թէ արդեօք մեղքը չ'երթա՞ր կողանդչէքի համարժէքու-

թիւն տալու անպարանքին, կամ՝ Երիտասարդութեան մը անհամբերութեան ու պատուով խոստումի մը առջեւ ամօթով շմնալու մտահոգ միճակին, անպայմանօրէն հատարը հրատարակուած տեսնել 1971ի վերջաւորութեան... Մեղի համար անպահանջելի եւ կոթողային արժէք պիտի ստանար հատորը, եթէ ան մեր սեղանին ներկայանար ոչ թէ 300 էջնոց դիրք մը, այլ՝ 600 էջնոց մեծածաւալ մատեան մը, ուր ցոլացում դռնէր սփիւռքահայ քսանրհինգ տարուան դրականութիւնը իր ալլաղան երեմներով ու մտահոգութիւններով մէկտեղ: Անշուշտ, այդ աշխատանքը կը կարօտէր ժամանակի եւ համբերատար ոգիի՝ կը կարօտէր նոյնպէս ծանրախոհ եւ փորձառու մըտքի: Միշտ պիտի գտնուէին անտարբերներ, զորոքին անուաշառուիղներուն մէջ դաւազան նետողներ, կամքի թուլացում գուցէ յաւաջ գար. բայց երբ գլուխ հանուէր ծրագրերը, այդ պարագային, ընթերցող հասարակութիւնը պիտի կարենար լայն բունը համակրանքի կարկիւրը, գոչելով՝

«Եւ եղիցի լոյս ի վերայ մերոց գրականութիւն ի սփիւռս՝ 1940էն մինչեւ 1965 թիւս»:

Իր ներկայ փոքրածաւալ միճակով «Ամփիջակամ Գրականութիւն»ը բաց մը գոցած ըլլալու առաքելութիւնը չունի անիկա կանչուած է դառնալու ուղուոր Երեւոյթ մը, հատուածական նեղմտութիւններէ վեր մնալու հոգեմիճակի մը մտազայթումը: Հատորին մէջ տեղ դրած տասնըեօթ անունները՝ արձակագիր կամ բանաստեղծ, իբրեւ զտուժ եւ բիւրեղացում՝ նիւթերու ընտրութիւնով մէկտեղուած, գրական անխառն պատիւ մը կրնան տալ միայն հրատարակիչներուն, որոնց մտահոգութիւնը եղած է հրատարակիչ հրամցնել գրական ճաշակին լաւագոյն նմուշները, անկեղծ փրձարտուցով՝ լեզուի, ոմի, հոգեկամ խոռոպի, մարդկային տագնապի, կիրքի, տարբեր աշխարհաեսայեացքի, ուղղութեամբ, մարտիքեամ զգտումի ու Յիզի առաքինութիւններուն, հաստատուելու հա-

մար Հատորին սկիզբը դրուած ծանօթութեան մէջ նշուած մտասեւեռումը դրական զգայարանքին:

Միեթարական է Հաստատել Գրական Խմբակին մօտ ճաշակի Հասունութիւն մը ու ետսիրական ցուցամտութեան ստույգ զանցառումը. կարծէք թէ անոնք սկիզբէն իսկ Վեթօ դրած ըլլան երիտասարդական փառասիրութիւններու վրայ եւ իրենք մեան ստուերին մէջ: Անա թէ ինչու Խմբակ ընդհանուր յայտարարով Հատորը լոյսի բնծայած են:

Բայց մենք Հետաքրքրուած ենք իմանալ Գրական Խմբակի աղոց ինքնութիւնը:

«Բազմիմ» ամսագրին մէջ անոնք մընայուն բնակիչներն են չոր սերունդին եւ կը կոչուին Ասոյեան Խորով, Չանոյեան Վահան, Կիրակոսեան Մարդոս, Յակոբեան Սօսի, Ճինպաշեան Գնար, Պէրպէրեան Նազարթ, Պէրպէրեան Յարութիւն, Սարաճեան Էլո, Տէր Սարգիսեան Չնազանդ:

Յատկանշական երեւոյթ մըն է տեսնել երկուսն երիտասարդութիւն մը, որ իր տարերային բնական հաճոյքները չէ փնտրած հասարակաց վայրերու փնտրութեան վրայ՝ պարի ու խաչի մէջ, այլ ընտրած է Հոգեկան ու գրական խորքը ապերախտ արուեստին, որ մեր մօտ կը կրչուի սփռուած հայ գրականութիւն: Բարեբախտաբար՝ թէ դժբախտաբար, այս իննը ծնունդ են մէկ հոտանքի եւ ելած նոյն հոտանքին պատկանող վարժարաններէն: Ալլաջին ըմբռնումով եւ Հայեցի դաստիարակութեամբ՝ մեկի Համար դժբախտութիւն է Հաստատել նման խմբակներու բացակայութիւնը այլ Հոտանքներէն ներս: Յաւ է չզննատել այսպիսի խմբակներու միաձուլումը մէկ անուսի տակ, որ կրէր, օրինակի Համար՝

«Միջին Արեւիջի Սփիւռահայ Գրողներու Համախմբում»,

որուն վստահուէր սփռուած հայ գրականութեան Համապատկերին պատրաստութիւնը, որուն արուէր իրաւասութիւնը կազմակերպելու Հրատարակչական մը

եւ ճօխ, գրական ամսագրի մը Հրատարակութիւնը: Եւ այս բաները ընելու Համար ունենար խօսքի, կշիռքի եւ ձեռնարկային ոգի՝ իր արդար պահանջները ներկայացնելու առ որ անկ է... Գրական Խմբակին գոյութիւնը կը մղէ մեզ ահա այսպիսի խորհրդածութիւններու, իր Հրատարակած հաւաքածոն ազգանըւան մը կարելի է բնորոշել:

«Անմիջական Գրականութիւն» Հատորը ըլլալով նախափորձ մը, դրականութեան մէջ Համբարշտական ոգիի ստեղծումին, կը դառնայ առաջին վկայութիւնը: Ոչ ոք կրնայ պատրուակել իր դժգոհութիւնը. ամէն նախաքայլ կ'ունենայ իր վրեպանքներն ու թերթները. ինչպէս ամէն յեղափոխութիւն, որ հին մտայնութեանց մէջ բարեփոխութիւններ մտցնելու առաջադրանքներով ոտքի կ'այտնուի, որ Գրական Խմբակը չէ ունեցած առիւծի իր բաժինը Հատորին մէջ տեղ գտած Հեղինակներու թիւէն: Այնուհետեւն ճիշդ միայն կարելի է իրը Համարել. մնացեալը՝ դրանցի են, գանձահան հոտանքներէ իրենց ջուրը առած: Հայրենիքն ալ ունի իր ներկայացուցիչները, որոնք թիւով ետ չեն մնար առաջին վեցէն: Բարեգործականն ու Կիւրպէնկեանը չեն կրնար ուրանալ իրենց թեկնածուներուն ներկայութիւնը Հատորէն ներս: Եւ ասիկա խորհիլ պիտի տայ իրենց յըջօրէն, թէ սփռուած հայ գրականութիւնը երեսի վրայ թողած են, ահա Սփիւռքի ծնունդէն սողին:

Գրական Խմբակին փորձը կը խորհրդանշուի յատկապէս Սփիւռք-Հայրենիք նկատուած կամբջակին Հիմնարկէքը կատարելու ցանկութեամբ ու անոր ամրապնդումին ստատումը՝ գրական հասկացողութեամբ: Ժամանակը եկած է, կը կարծենք, որ վերացուն այլեւս Հայրենիքէն երկարած մատնացոյցին թողած դառնութիւնները, հարազատ եւ խորք կոչուած աստիճանները: Սփիւռք-Հայրենիք մշակուած գրականութիւնը մէկ է ու անոր վրայ դրուած կնիքը՝ Հայ մակնիշը կրող:

«Անմիջական Գրականութիւնը» աղ-
ւոր երեւոյթ մըն է այս իմաստով. իսկ
Գրական իմաստի ցուցարեւած անկեղ-
ծութիւնը՝ այլ ազդուութիւն: Մաղթե-
լի է, որ պղտոր ջուրեր այլեւս չհոսին
կամբջակին տակէն ու չդոնուին ջուր
պղտորողներ այս ու այն կողմը արե-
րուն...:

Այսօրան բան գրելէ ետք «Անմիջա-
կան Գրականութիւն» հատորի մասին,
չմոռնանք ակնյնել, թէ անոր ընդգր-
կած միջոցը Սփիւռքէն՝ սահմանափակ է,
մէկ շրջանի վրայ կեդրոնացած է այդ
շրջանը, որ կը կուշուի Միլիոն Արեւելք ու
հատորն ալ՝ Մաղկաբաղ, Միջին Արեւել-
քի Հայ Գրականութեան:

Ասով մէկտեղ՝ կարելի չէ թերագնա-
հատել Գրական իմաստի գրական իո-
րունկ զգայնութիւնը գեղարուեստակա-
նին հանդէպ. իր լոյսին բերած երեւոյ-
թը կը հանդիսանայ առաջին հանգրուա-
նը համերաշխական ոգիին. ուրիշներուն
կը մնայ արձագանգել կողին: Այս օք պի-
տի ուղէք, որ այս համակրելի երեսա-

սարդ գրողներուն առաջին ճիգերը ձա-
խողութեան մատնուէին: Համախմբու-
մի եւ բարեկամութեան համար երկարած
ձեռք մը չեն մերժեր սեղմել. սեղմել
չուող ձեռքին տիրոջ մօտ, կ'ըսեն ծը-
ւարած կ'ըլլայ նենդամտութիւնը, այս
պարագային՝ հին բարքերուն կառչած,
այլեւս մամանակայրէպ՝ նեղմտութեան
որդը...:

Մեր նպատակը չէր գրախօսական
գրել «Անմիջական Գրականութիւն» հա-
ւաքածոյի մասին, այլ՝ տալ անոր բե-
րած թարմ շունչին ու ոգիին լուսաբա-
նութիւնը, բաջալերական երեւոյթին գը-
րական ու դրական պատկերացումը: Աւ-
հաեւ Գրական իմաստի մաղթել յարա-
տեւող կամք եւ տոկունութիւն իր նոր
բացած ճամբուն վրայ միշտ կանգուն՝
յառաջընթացին: Այն համոզումով, թէ
աչք ու ականջ ունեցողը կոյր եւ համբ
չի կրնար ըլլալ՝ մենք կը փակենք այս
էջը, թողնելով յաջորդ էջերուն շարու-
նակը՝ ուրիշներուն:

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ



L. ՄԿՐՏՁԵԱՆ

ԲԷՂՈՒԹՈՒՄ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ
 “ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ”
 Ժողովածուի Մասին



Այս տարեկարին Բէյրութում լոյս տեսաւ զրեթէ 300 էջանոց եւ «Անմիջական գրականութիւն» վերնագրով մի զբաղան ժողովածու, որը աչքի է ընկնում մէկից աւելի դրական առանձնայատկութիւններով: Այդ ժողովածուն նախածեռնել, կազմել ու հրատարակել է իննը նորահաս զբողաներից կազմուած «Գրական խմբակ»ը, որը գտնուում է նոյն Բէյրութում: Ժողովածուն ընդգրկում է արեւաշահայ այն արձակագիրներին ու քանաստեղծներին ընտիր երկերը, որոնք ծնուել են 1920 թուից յետոյ եւ, որպէս սկզբունք, 1940 թուից մինչեւ 1965 թուականը հասարակութեանը ներկայացել սեփական գրքերով: Ի հարկէ, ժողովածույում տեղ ունենալու միակ պայմանը այդ չէ, այլ նաեւ յատկապէս ա՛յն, որ ներկայացուող զբողները իրենց արուեստի որակով գտնուեն որոշակի մակարդակից վեր, ինքնուրոյն եւ շեշտուած գրական գիմաղիծ ունենան: Գրողներին ու երկերին ընտրութիւնը կատարել է «Գրական խմբակ»ը, հաշուի առնելով նաեւ ընտրուած հեղինակների կարծիքն ու նախասիրութիւնը իրենց այս կամ այն երկի հանդէպ:

Ժողովածուն իր տեսակի մէջ միակն է վերջին 30 տարում: Դեռեւս 1939 եւ 41 թուականներին Փարիզում լոյս են տեսել «Արպի հայ գրականութիւն» վերնագրով երկու հատորներ, որոնց մէջ ներկայացուել են այն քամանակի 53 զբողներ: Այնուհետեւ հրատարակ է եկել զբողների մի այլ սերունդ, որը ներկայացնելու համար հարկ կը լինէր կազմել նախորդներին սկզբունքով մի երրորդ ժողովածու, ինչ որ մինչեւ հիմա չի արուել: Եթէ իւրաքանչիւր գրական սերնդի համար կազմուելու լինէր մի յատուկ ժողովածու, ապա այժմեան «Անմիջական գրականութիւն»ը կը համարուէր չորրորդը: Ի հարկէ, կան եւ 1965 թուից ի վեր հրատարակ մտած եւ ստեղծա-

զործող նորահաս հեղինակները, որոնք նոյնպէս սպասում են Համապատասխան մերաբերմունքի՝ հաւաքական ներկայացման :

Մինչեւ Հիմա Պոլսում ու Թեհրանում եւս լոյս են տեսել նմանօրինակ ժողովածուներ, սակայն, բնականաբար, զուտ տեղական շափանիչով : «Ան-միջական գրականութիւն»-ը յատկօրէն Համասփիւռքային շեշտուած բնոյթ է կրում, պարունակելով 17 ամէնից աչքի բնկած գրողների ստեղծագործու-թիւնների լաւագոյն նմուշները, որոնք ներկայումս ապրում են Բէյրութում, Պոլսում, Ամերիկայում կամ Եւրոպայում եւ այլուր : Ժողովածույում տեղ է տրուել նաեւ երեք գրողների, որոնք Երկրորդ Համաշխարհային Պատե-րազմից յետոյ, հայրենադարձութեան ժամանակ, տեղափոխուել են Հայաս-տան, բայց իրենց սկզբնական ու բուն կազմութումով Սփիւռքին են պատ-կանում : Այդ բանաստեղծներն են Արամ Արմանը, Աբրահամ Ալիբեանը եւ 1952 թուին վաղաժամ ու ողբերգականօրէն վախճանուած Անդրանիկ Թե-րզեանը : Ժողովածուի վերջում, յաւելուածի կարգով, գետեղուած է 7 էջ բըռ-նող մի ընդհանուր ցանկ, որի մէջ նշուած են այն գրողների անուններն ու լոյս բնծայած գրքերը, որոնք նոյնպէս ծնուել են 1920 թուից յետոյ, բայց տեղ չեն գտել այժմեան ժողովածույում : Այդ ցանկն էլ, իր հերթին, ի հարկէ, լրիւ ու ամբողջական չէ :

Ժողովածույում տեսնում ենք ներկայացուող 17 գրողներից իւրաքան-չիւրի լուսանկարը, Համառօտ կենսագրական տուեալներ, ինչպէս եւ «Գրա-կան խմբակ»ի կազմած ու ներկայացրած հարցաթերթիկի պատասխանները : Հարցերը տասն են եւ վերաբերում են գրական ստեղծագործութեան այլեւայլ կողմերի : Ժամանակին Հայաստան ներգաղթած գրողներից բացի, միւս բո-լոր գրողները առաւել կամ պակաս մանրամասնութեամբ պատասխանել են տրուած հարցերին : Այդ պատասխանները կրկնապատկուած են ժողովածուի այժմէքը, քանի որ հարադատօրէն բացայայտում են գրողների անմիջական վերաբերմունքը դրական հիմնական հարցերի նկատմամբ, աւելի հեշտացուած նրանց ստեղծագործութեան ըմբռնումը եւ միաժամանակ հաճելի բաղադրա-նութիւն մտցնում տասնց այն էլ խնամքով տպուած ժողովածուի մէջ :

Ժողովածուն ուշագրաւ է մի շատ էական կողմով :

Գրողներն այնտեղ ընտրուած են ըստ իրենց գրական վաստակի եւ որակի : Նկատի չի առնուել նրանց աշխարհահայեացքը, կուսակցական պատ-կանելիութիւնը, եւ այլն : Դրա հետեւանքով էլ միեւնոյն պէտքով կողք-կողքի ներկայացուած են գոյութիւն ունեցող բոլոր հայ քաղաքական կուսակցու-թիւնների պատկանող, ինչպէս եւ անկուսակցական գրողներ, ներառեալ եւ կամուկոտը :

Սա սկզբունքի հարց է, այլ ոչ թէ պատահականութիւն :

Գրողները չեն բնորուել անպայման ներկայացուցչական կարգով : Բայց միաժամանակ մերժուել է խտրականութեան սրել միտում : Դրանից ժողովածուն, բնականաբար, շահել է եւ ոչ թէ կորցրել :

Գրողները ժողովածուի մէջ միմեանց յաջորդում են տարիքային կար-գով : Առաջինը Նուպար Չարխուտեանն է, որը ծնուել է 1920 թուին, իսկ վերջինը՝ Գէորգ Անէմեանը, ծնուած 1932 թուին : Նրանց միջեւ ներկայաց-ւած են՝ Ալտոս Նուրեանը, Արմէն Դարեանը, Վահէ Օշականը, Արամ Արմա-նը, Զարեհ Մելքոնեանը, Զահրատը, Յակոբ Կարապետեանը, Գառնիկ Աղաբա-եանը, Աբրահամ Ալիբեանը, Վահրամ Մալեանը, Զարեհ Քրախունի, Ռոբեր Հատտէճեանը, Պօզոս Սնայեանը, Անդրանիկ Թերզեանը, Յ. Գեղարզը : Գեոեւս ժողովածուն լոյս տեսնելուց առաջ, «Գրական խմբակ»ի կողմից ի-

րենց յղուած հարցաթերթիկին պատասխանելիս, այդ գրողները միարեւան ողջունեցին նորահաս երիտասարդների նախաձեռնութիւնը, իսկ այժմ էլ ընթերցող հասարակութիւնն է ողջունում պատրաստի դիրքը:

Դժուար է անտեսել կամ գերազնահատել ներկայացուող ժողովածուի նշանակութիւնը թէ՛ բուն գրողներին եւ թէ՛ յայն հասարակութեան համար: Սփիւռքի հանրայայտ պայմաններում, երբ հայութիւնը ցրուած է տարբեր կրկրներում, գրողները նոյնպէս, երբ զրքերը լոյս են տեսնում անհատ հեղինակների սուղ միջոցներով ու գոհութիւնների զնով եւ յանախ գժուարութեամբ են սպառում, — նման ընդհանուր ժողովածուների գոյութիւնը ուղղակի կենսական ու բարոյական անհրաժեշտութիւն է, ինչպէս մշակուած գրականութիւնը ընդհանուր յայտարարի բերելու եւ ամփոփելու, այնպէս էլ հայկական առանձին համայնքների միջեւ գոնէ հողիւր ու բարոյական կապ պահելու իմաստով: Առանձին հեղինակների զրքերը, որքան էլ բազմաթիւ լինեն ու լայնօրէն տարածուեն, երբեք չեն կարող այդ գերը կատարել: Միայն հաւաքական ձեռնարկները կարող են իսկապէս հաւաքական ազգակ հանդիսանալ եւ համապատասխան արդիւնք տալ:

«Անմիջական գրականութիւն» հատորը, որքան էլ ուր հանելի երեւոյթ համարենք, ինքն իրեն չի ծնուել: Նրա վրայ մարդկային դուրսուրալից աշխատանք է թափուել: Իսկ այդ աշխատանքն ստանձնել են իննը երիտասարդ տղաներ ու աղջիկներ, որոնք եւ իրենց «Գրական խմբակ»ի անունով հրատարակ են հանել ներկայացուող ժողովածուն: Ժողովածուն անպայման լուսաւոր երեւոյթ է՝ որպէս մարդկային նախաձեռնութիւն, ճաշակաւոր հրատարակութիւն եւ գրական բովանդակութիւն: Մի խօսքով՝ դա մի գնահատելի գործ է, երիտասարդական խանդավառութեան արդատիք, ամբողջովին ի սպաս հայ մշակոյթին ու գրականութեանը:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ



Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Տասնամեակ «ԲԱԳԻՆ» Ամսագրի

«Երրորդ սերունդը, որ հրապարակ իջած է տարիներու ընթացքին, խմբագրութեան քաջադերանքով, ու գրական եռանդով տեղ գրաւած է «Բագին»ի էջերուն մէջ:

Հիմա կարգը եկած է չորրորդ սերունդին, նորածինին՝ որ կէս դար ունի իր առջեւ, հաշուետու ներկայանալու համար»:

1971 Դեկտեմբերի թիւով լրացաւ տասնամեակը «Բագին»ի, ամսագիր գրականութեան եւ արուեստի, որ կը հրատարակուի Պէտրոսի մէջ:

Առաջին թիւը լոյս կը տեսնէր 1962 Յունուարին:

Այդ օրերուն յանդգնութիւն էր ձեռնարկել նման հանդէսի մը հրատարակութեան:

Տարագիր հայութիւնը կ'ապրէր յոռետեսութեան եւ յուսահատութեան դառն օրեր:

Մինչ առաջինները զրկուած հայկական ամէնօրեայ դպրոցներէ՝ Հնարուորութիւն շունչին նոր սերունդին սորվեցնելու մայրենի լեզուն, վերջինները — մանուսնդ Եզրկատու եւ Սուրիա — հեղուհեղ կը պարպուէին հայութենէ: Պայմանները կրկին զաղթական կը դարձնէին տասնեակ հազարաւոր հայորդիներ, որոնք տուն-տեղ լքելով կ'երթային նոր բախտ որոնելու օտար, հեռաւոր հորիզոններու տակ:

«Բագին» լոյս աշխարհ կու գար այն օրերուն, երբ ճիշդ քառասուն տարի է, 1922էն ի վեր Պոսթընի մէջ կանոնաւորաբար հրատարակուող «Հայրենիք» ամսագիրը մահամերձ էր: Ծրագիր կար Պէտրոսի փոխադրելու դայն՝ նոր աւել ներարկելու, նոր շունչ տալու համար ա՛յնքան բեղուն անդեալով հզարտ ամսագրին:

«Հայրենիք»ին սնունդ հայթայթող սերունդն ալ նօսրացած էր: Կեանքի բնական օրէնքով իրարու ետեւէ մեղմէ առ յաւէտ կը բաժնուէին մեր եւրէջ ընկերները, որոնք իրենց յուշերով թանկագին նպաստ կը բերէին մեր ազատագրական շարժումներու պատմութեան:

1959ի աշնան Հ. Յ. Գաշնակցութեան Բիւրոն որոշեց պահել «Հայրենիք»ը, քանի կենդանի էր անոր վաստակաւոր խմբագիրը Ռուբէն Գարբինեան: (Իր մահէն ետք երկար շապրեցաւ ամսագիրը, որ այժմ ո՛չ եւս է):

Որոշուեցաւ Պէտրոսի մէջ լոյս ընծայել գրական-գեղարուեստական

ամսագիր մը, որ ամպինն պիտի դառնար մեր միջին եւ նորահաս սերունդներու գրական ստեղծագործութեանց :

Մրտդիրը դործի վերածուեցաւ նախապատրաստական աշխատանքներէ ետք, որոնց նպատակն էր հաստատ հիմերու վրայ դնել այդ մեծածախս ձեռնարկը :

Աչքի առջև չունինք «Բազմն»ի Ա. թիւը : Երկրորդ թիւին մէջ (1962 Փետրուար) խմբագրութիւնը ուրախութեամբ կ'արձանագրէր, որ անոր հրատարակութիւնը խանդավառ ընդունելութիւն էր գտած ընթերցող հասարակութեան եւ մատուցական ընտրանիին կողմէ : Թէ՛ «Բազմն» կոչուած է հանդիսանալու Սփիւռքի գրական շարժման կեդրոնական բեմը :

Լիբանանի նեղ սահմաններէն դուրս ելլելով, «Բազմն» կը ստանար համազարութային բնոյթ : Պոսթընէն, Պուէնոս Այրէսէն, Փարիզէն, Գահիրէն, Թեհրանէն ու Պաղատէն գրադէտներ ու մատուցականներ յատուցապահ դեր կը ստանձնէին՝ իրենց մասնակցութիւնը բերելով գրական նուազահասն ունին, ճատեղծելով հայ ոգիին համանուագը :

Մեծ քաջութիւն կը պահանջէր ամբողջ տասը տարի անխափան դրական-սրբագրութեան թերթ հրատարակել, հակառակ բոլոր աննպաստ պայմաններուն :

Մեծապէս կը գնահատենք ճիշդ, զոր տարին «Բազմն»ի վարիչ-խմբագիր Կ. Սասունի, խմբագիր Պ. Սնայեան եւ խմբագրութեան անդամները — Ե. Գեղարդ, Տ. Ոսկունի, Բ. Փափաղեան, Ն. Պարթևեան եւ Ժ. Աթթարեան : Մեծ կորուստ մը եղաւ ամառը ին համար վաղահաս մտէր հիմնադիր անդամներէն տաղանդաւոր գրադէտ Եղուարդ Պոյաճեանի :

Տասնամեակին նուիրուած թիւին մէջ (Դեկտեմբեր 1971) Կ. Սասունի գոհունակութեամբ կ'արձանագրէ ձեռք բերուած արդիւնքը :

«Բազմն»ին իրենց մասնակցութիւնն են բերած՝ ա) Հիմ սերունդի մնացորդացը, որուն վերջին կայանը կը դառնար ամսագիրը : բ) Միջին սերունդը, որ ստանձնած էր թերթին խմբագրութիւնը, ժամանակի պահանջին ընդատաղելով, տուած է իր լաւագոյնը՝ ուշագրաւ դարձնելով գրական ամսագիրը : գ) Երրորդ սերունդը, որ հրապարակ իջած է տարիներու ընթացքին, խմբագրութեան քաջալերանքով, ու գրական եռանդով տեղ գրուած է «Բազմն»ի էջերուն մէջ :

Հիմա կարգը եկած է չորրորդ սերունդին, նորածինին՝ որ կէս դար ունի իր առջև, հաշուետու ներկայանալու համար :

Չորս սերունդներ այսօր տակաւին կողք կողքի կը գործեն :

«Բազմն»ի մէջ գրիչ շարժած են աւելի քան 150 անձեր :

Արտագին ողջունելով «Բազմն»ի տասնամեակը, նորանոր յաջողութիւններ եւ յարատեւութիւն կը մաղթենք անոր :

ՀՐԱՆՏ - ՍԱՄԱՐԷԼ

(«Յառաջ»)

“Բ Ա Գ Ի Ն” Ամսագիր

«ԲԱԳԻՆ» ԻՐ ՏԱՍԸ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ
ԸՆԹԱՑՔԻՆ ԼՈՒՍՏՈՒ ՓԱՐՈՍ ՄԸ ԵՂԱԾ Է ՈՒ
ՅԱԶՈՂԱԾ Է ԵՐԵՒԱՆ ՀԱՆԵԼ ՄՏԱԿՈՐ ՓԹԹՈՒՄԻ
ԱՏԱԿ ՀՈՅԼ ՄԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ:

Տասնըմէկ տարի առաջ, վաստակաւոր գրող Կարօ Սասունիի եւ գրականութեան հարկէն բռնուած Յոյ. Պօյանեանի, Պօղոս Սնայեանի եւ ուրիշներու ջանքերով՝ կեանքի կոչուեցաւ «Բագին»ը, որ առանց ընդհատումի, տասը տարիներէ ի վեր կը շարունակէ լոյս տեսնել Պէյրութի մէջ, եւ իր օրինակի, մաքուր տպագրութեամբ ու նոյն բովանդակութեամբ՝ դարձած է «գրականութեան եւ արուեստի» լաւագոյն հրատարակութիւնը, որ խմբագրական իր ընտիր կազմով՝ ընթերցողներուն կը բաշխէ հայ մշակութիւնահասմում պաշարը:

Ամսագրի Սեպտեմբեր-Հոկտեմբեր միացեալ թիւը կը բացուի Աշոտ Նաւրեանի «Կանչը» խորագրուած գեղեցիկ բանաստեղծութեամբ, ուղղուած երեսներէն:

Անոր կը յայտնուի Ա. Արփիւնէ, իր մէկ պատմուածքով: Գրագիտունիքն արդէն սիրելի անուն մըն է դարձած ու տեղ բռնած՝ հայ գրականութեան աստիճաններէն մէկուն վրայ:

Ամսագրի այս միացեալ թիւը ուշագրաւ է իր մէկ նորութեամբ, գրական հանդէս մը սարքած է իր էջերուն մէջ, ուր կողք-կողքի բազմած են Հայաստանի նոր սերունդէն կարգ մը գրողներ, եւ սփիւռքեան ասիւրու վրայ սպրոզ նոր գրողներու ուրիշ խումբ մը:

Հարկ է շեշտել, որ այս երկու խումբերն ալ ստացած են բարձր կրթութիւն եւ իրենց գրական կաշուիւն գուզրնթաց՝ կը շարունակեն ուսուցանել եւ ուսանել կրթական բարձր հաստատութիւններու մէջ:

Աւելորդ չէ յիշել, որ գրողներու երկու խումբերն ալ՝ մասամբ՝ կրած են հեռաւոր ազդեցութիւնը երիտասարդ ուսանողներու ա՛յն շարժումիւն, որ ծայր տաւա առաջաւոր երկիրներու համալսարաններուն մէջ, ու կը շարունակէ խարխափել անորոշութեան բաւիլներուն մէջ:

Դատելով հայ երիտասարդ գրողներու ներկայացուցած գրական նմոշներէն, ի պատիւ իրենց հարկ է բնագրել, որ անոնք գերծ են կոպիտ կերպով արտայայտուած արհամարհանքէն, ամէն տեսակի հասարակակարգ քանդելու մոլեգնութենէն, որով վարակուած է երոպական երկիրներու ուսանողութիւնը:

Հայը. եթէ չկրնայ շինել՝ չի՛ քանդեր:

«Բազին»ի մէջ ներկայացուած Հայաստանի գրողները աւելի ինքնագիտակ ըլլալ կը թուին: Իրենց սպրած միջավայրի պայմանները՝ իրենց դրոշմը դրած են անոնց մտածողութեան վրայ եւ զանոնք դարձուցած են տւելի իրապաշտօրէն տեսնել «մերկ ճշմարտութիւնը»:

Անքերցողը չի կասկածիր անոնց անկեղծութեան վրայ, բայց եւ այնպէս՝ կը տարակուսի եւ անմիջապէս տրամադիր չէ անոնց քայլերուն հետեւելու: Անոնց ուղեցոյցը տարտամ է, բայց իրենք որոշած են բան մը բնել, բան մը փոխել իրենց բնագրկած գրական ուղիով, ասանց ընկրկելու միտումի:

«Ճշմարտութիւնը՝ իր մերկութեամբ» դաւանող հայրենի գրողներու գործերուն մէջ կը պակսի պատկերացումի այն յստակութիւնն ու լեզուական արտայայտութեան ճշտութիւնը, որ յատուկ է Զարեհի ու Տէրեանի ստեղծագործութիւններուն:

Ամէն «մերկութիւն» գեղեցիկ չէ, երբ անտեսուած է գեղարուեստին օրինաչափութիւնը:

Ժամանակէն ու կերպական դուրսենէն ձերբազատուելու մտմունքը կը յայտնաբերեն նաեւ Արտահայաստանի երիտասարդ գրողները, որոնց մշակած գրականութեան մէջ բացակայ է հասարակագիտական ըմբռնումի քիչ մը ժամանակավրէպ խաւը:

Անոնք կը ձգտին անջատ ուղի մը բանալ մեր մշակութիւն տարածքին եւ հան սերմանել իրենց մտածումի հումը:

Անոնց իմացական հորիզոնը անաւիճան է. հարկադրանքի, արգելքի մնչումը չեն գգար, ու հոգեկան խաղաղութեան մէջ՝ թուղթին կը յանձնեն այն բռնը, զորս իրենց արթուն բանականութիւնը կը թելադրէ:

Ասանց միգրի՝ սիրացած են մեր լեզուական ճոխութեան եւ գայն կը գործածեն գրական խոր ըմբռնումով:

Այս չէ էականը մտայնութեան ենթակայ սերունդին, որ իր ստեղծագործութեան շնորհով կը ձգտի ներկայութիւն դառնալ հայ գրականութեան հանդիսասյուսիին մէջ:

Միութարական է նշել, որ ներկայացուած հայ երիտասարդ գրողներու խումբերն ալ մտադիր չեն ինն կուսէն քանդելու՝ անոնց պատուանդանին վրայ նոր այլանդակութիւն մը կառուցանելու համար: Անոնք պիտի քաշեն այն երկարածիգ ուղիէն, ուրկէ անցած են անհամար հայ սերունդներ, մեր Փոքր Ածուէն ծաղկաստանին վրայ ցօղելով իրենց մտքի աւիշքը:

«Բազին» իր տասը տարիներու գոյութեան ընթացքին լուսատու փառս մը եղած է ու յաջողած է երեսն հանել մտաւոր փթթումի ատակ հոյլ մը երիտասարդներ:

Յ. Խ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

(«Հայրենիք»)

Բ Է Յ Ր Ո Ի Թ Ի

“ԲԱԳԻՆ” ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

Տ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Կ Ը

«Այսօր արդէն գոյութիւն ունի ամազրի ջանքերով գրական հրատարակ մտած երիտասարդ ու պատանի արձակագիրների եւ բանաստեղծների մի ներկայաճաշի ջոկատ: Եւ հենց այդ ջոկատն է, որ պատրաստում է ստանձնել վաղուայ գրական կեանքի տնօրինումն ու պատասխանատւութիւնը»:

Վերջերս լրացաւ Բէյրութում լոյս տեսնող «Բուզին» գրական ամսագրի գոյութեան տասնամեակը: Գրականութեանը եւ արուեստին նուիրուած այդ հանդէսի հրատարակութիւնը սկսուել է 1962 թուի սկզբին եւ անփոփոխ կանոնադրութեամբ շարունակուել մինչեւ հիմա, ընդամին ոչ թէ որեւէ ձեւով թուլանալով կամ տեղաջլ սնելով, այլ, ընդհակառակն, անընդհատ ամրանալով ու բարելաւուելով: Բաւական է վերստին աչքի անցկացնել մինչայժմեան աւելի քան 120 ամիսների ընթացքում յաջորդաբար լոյս տեսած հերթական կամ յորեկանական համարները եւ պարզ կը դառնայ, որ իմ կողմից այժմ գործածուող «ամբանալ» եւ «բարեկարգել» բառերը բնաւ ձեւի համար չեն աւուում, այլ լիովին համապատասխանում են իրականութեանը:

Սփիւռքում մինչեւ հիմա, անցած մօտ հինգ տասնամեակների ընթացքում, թուով քիչ չեն եղել գրական հանդէսներն ու պարբերաթերթերը, որոնք մեծ մասամբ անհատական նախաձեռնութեան արդիւնք էին եւ են, ուստի շատ յաճախ երկար կեանք չեն ունենում ու սովորաբար վաղանցուկ գոյութիւնից յետոյ դադարում են այլեւայլ պատճառներով: Բացառիկ երեւոյթ հանդիսացաւ Բոստոնի նշանաւոր գրական-հասարակագիտական «Նալըննի» ամսագիրը, որը 1922 թուի Նոյեմբերից մինչեւ այս վերջին տարիները լոյս տեսաւ կանոնադրապէս եւ ընդամին յատուկ դէր խաղաց սփիւռքահայ ընդհանուր մշակութային կեանքում:

Բայց «Նալըննի» ամսագիրը կանգուն պահող երբեմնի հայրենաշունչ սերունդը անողոք բնութեան օրէնքով աստիճանաբար սպառուեց եւ, քացի այդ, մերձաւոր-արեւելեան հայ հիմնական դաշխօջախների ոտքի կանգնելուց յետոյ՝ սփիւռքահայ մշակութային կեանքի ծանրութեան կենտրոնը ընդհուպ ժօռեցաւ Հայաստանին, այսինքն՝ հերոսական ու ամերիկեան եր-

րեմնի ժամանակուր աշխուժութեան վայրերից փոխադրուեց Մերձաւոր Արեւելք, մասնաւորապէս Լիբանան: Այդ պայմաններում «Բազին»ի նման հիմնաւոր հանդէսի երեւան դարձ ուղղակի բխում էր օրուայ ազգային պահանջից եւ ինքնին անհրաժեշտ ու անխուսափելի էր:

Նախ պէտք է նկատի առնել, որ «Բազին»ը անհատական գործ չէ, այլ բոտ ամենայնի հաւաքական: Հանդէսի ղեկավարութիւնը, սկզբից ի վեր մնալուն վարիչ խմբադիր Կարօ Սասունուց եւ քուն խմբադիր Փողոս Մնապեանից բացի, իրավորժեւում է եւ խմբադրութեան միւս անդամների ջանքերով: Այդ համասեղ աշխատանքի շնորհիւ՝ ամսագիրն այսօր ունի աշխատակիցների եւ ընթերցողների լայն շրջան: Ըստ խմբադրութեան տուած տեղեկութեան, մինչեւ հիմա ամսագրում տեղ են գտել մօտ 150 տարբեր հեղինակների ստորագրութիւններ: Ամսագիրը տարածւում է Սփիւռքի բոլոր գօտիներում եւ նմանապէս աշխատակիցներ ունի աշխարհի տարբեր վայրերում: Ուրեմն, ամսագիրը իր տարածումով, ընդգրկումներով եւ հետապնդած նպատակներով փաստօրէն համափիւռքային հրատարակութիւն է, որչափի համար է վայելում եւ անփիճելիօրէն կզակի դեր կատարում իր յստակ ասպարէզում՝ գրականութեան եւ պոետների բնագաւառում:

Ամսագրի ամրապնդման մասին կարող է հուսատի վկայութիւն ծառայել հետեւեալ ուղադրաւ պարագան: Տասը տարի առաջ, երբ նոր էր սկըսում հանդէսի հրատարակութիւնը, խմբադրութիւնը յաճախակի կոչեր էր յղում Հայ գրողներին ու մասւորականներին, որպէսզի աշխատակցեն: Ըստ երեւոյթին արձագանդները ուղածի չափ բաւարար չէին, քանի որ տարիքի եւ այլ պատճառներով այլեւս ստեղծագործական լարուած գործունէութեան անկարող շատ գրողներ մի տեսակ «խաթեր համար» ուղարկում էին մէկ-երկու շարդերանք եւ ապա լռում: Մինչդեռ այժմ ակնյայտօրէն պատկերն այլ է եւ ամսագիրը կարծես թէ ուղղակի չի հասցնում բաւականաչափ կ'ըր տրամադրել իր հետ կապուած բոլոր հեղինակներին: Խմբադրութեան հրապարակային խոստովանութեամբ, ժամանակին ստացուած շատ նիւթերի հրատարակումն երբեմն ուշանում է եւ շատ աշխատակիցներից անընդհատ նամակներ են ստացւում այն իմաստով, թէ՛ այդ թ'նչ է պատահել, ե'րբ պիտի սպուփ իմ այսինչ կամ այնինչ գրուածքը: Եւ նիւթերի այժմեան այդ գերառատութիւնը պէտք է համարել հանդէսի ամենակարեւոր վաստակը, նուաճումը, նրա թափած ջանքերի արդար արդիւնքը, կարճ ասած՝ ուրախալի երեւոյթ թէ՛ ամսագրի եւ թէ՛ ընթերցողների համար: Ինչօ՛ւ:

«Բազին» ամսագիրը տասը տարուան ընթացքում անկցրել է իր սեփական այսպէս ասած «գրական կողերը», առնուազն երկու միւսեանց յաջորդած սերնդի ընդգրկումով: Այսօր արդէն դոյութիւն ունի ամսագրի ջանքերով գրական հրատարակ մտած երիտասարդ ու պատանի արձակագիրների եւ բանաստեղծների մի ներկայանալի ջոկատ: Եւ հենց այդ ջոկատն է, որ պատրաստուում է ստանձնել վաղուայ գրական կեանքի տնօրինումն ու պատասխանատուութիւնը: Առանց ամսագրի դոյութեան, այդ նորահաս ուժերը հազիւ թէ կարողանային այսօրուայ նման ստուար թուով ներկայութիւն լինել: Նրանց մեծ մասը թերեւս բաւարարուէր սոսկ աշակերտական շարադրանքներով, ստորեայ մամուլին յանձնած հատուկներ ու վարանոտ ասեղծագործութիւններով՝ եւայլն: Մինչդեռ ամսագրի ստալ քաւած երիտասարդ ուժերը մասամբ արդէն հանդէս են եկել սեփական գրքով:


Որպէսզի միանդամից հասկանալի լինի ամսագրի ունեցած դերը այսօրուայ գրական ուժերի պատշաճ ուսուցման ու դաստիարակութեան գոր-

ծում, պէտք է նկատի առնել նաև, որ Հանդէսի խմբագրութիւնը տարիներ շարունակ զբաղանքն արտաբերական հաւաքութիւններ է կողմակերպել եւ յատուկ աշխատանք կատարել երեսն եկող իւրաքանչիւր առանձին խոստումնալից պատանի հեղինակի հետ: Այսպիսով, հեղինակները բնատուր շնորհքը կըրկնապէս արգիւնաւորուել է ուղղակի ամսագրի անմիջական մասնակցութեամբ:

Բայց սա վերաբերում է բացառապէս վերջին տասը տարում ամսագրի ջանքերով ձեւաւորուած նորահաս ուժերին: Իսկ չէ՞ որ մինչեւ նորերի հասունանալը ամսագիրը պէտք է դոյութիւն ունենար եւ այսպէս թէ այնպէս լինուէր արդէն տրամադրելի ուժերի վրայ: Եւ ահա ոչստեղ է, որ երեւան է գալիս ամսագրի ղեկավարութեան այսպէս ասած աշխատանքի ոճի մի այլ արգիւնաւէտ կողմը: «Բագիւն»ը եւս, ինչպէս իւրաքանչիւր դրական կամ ոչդրական պարբերական հրատարակութիւն, հաւաքականօրէն ունի իր դիմագիծը, երակէտային ըմբռնումները, սկզբունքները եւ ուղղութիւնը: Բաւական չէ ասելը, թէ պէտք է ծառայել հայ գրականութեանն ու արուեստին: Փորձնականում էտկան է նաև այն պարագան, թէ ինչ ոգով ու ճանապարհով է արտայայտուած այդ կամաւոր ծառայութիւնը: Այդ առումով «Բագիւն»ի խմբագրական դիմագիծը յստակ է եւ անշեղ: Այդուհանդերձ, ամսագրի շուրջը իրականում համախմբուած են միանգամայն տարբեր հրանդի հեղինակներ, որոնց սահղծագործական այսպան ջանքերի դումարը ո՛չ միայն չի վնասում ամսագրի սկզբունքային ինքնութեանը, այլև, ընդհակառակն, առաւել հմայք է տալիս եւ աւելի ընդգծում այն: Ահա եւ այդ առողջ ու խթանիչ լայնարտութեան պատճառով՝ ամսագիրը բուրյայպէս պատուանում է աշխատակիցներին միաժամանակ, բայց ոչ մէկի՝ առանձին վերջործ: Կան սկզբունքներ, բայց ոչ քարայած կաղապարներ: Ամսագիրը մի լայն բեմ է, որտեղից հնչում են ըստ հնարաւորին բաղմարնոյթ ձայներ, առանց կաշկանդուելու, աններդաշնակութեան զղացում յարուցելու եւ այլնի:

Այժմ Բէյրութի «Բագիւն» գրական ամսագիրը տասը տարեկան է: Ոչ ոք չի կարող հաւատացած լինել, թէ ամսագիրը դժուարութիւններ չի ունեցել կամ չունի: Բայց, դրանով հանդերձ, այն մերկ իրողութիւնը, որ սփիւռքահայ անկայուն ու կենտրոնախոյս պայմաններում այսքան երկար ժամանակ անխափան հրատարակուել է մի զուտ դրական ամսագիր՝ ինքնին կազմակերպական յաղթանակ պէտք է համարել: Եւ եթէ սրան աւելացնենք, որ տասը տարում ու ամսագրի թափած օւղղակի ջանքերի շնորհիւ Լիբանանում երեսն է եկել գրական մի նորահաս սերունդ, որը իր եռանդով ու զոհերբութեանն ոգով ոչնչով չի զիջում նախորդ որեւէ այլ երիտասարդ գրական սերնդի եւ դրանով իսկ յոսալի երաշխիք է հանդիսանում ամսագրի հետագայ տեսականութեան ու նոյնիսկ բարգաւաճման համար, — ապա յաղթանակը անմիջապէս կրկնակի նշանակութիւն է ձեռք բերում:

«Բագիւն» ամսագրի գործունէութիւնը սկսուել է տասը տարի առաջ եւ այսօր նա գտնուած է իր՝ մի շարք առումներով արդէն հարթուած ճանապարհի վրայ ու դէպի առաջ է նայում, ընթանում առաւել ինքնավստահ, նոր ծրագրերով ու ակնկալութիւններով: Եւ այդ ճանապարհը անպայման իմաստ ունի, ի սչր հայ գրականութեան մշտադաւանութեան:



Լ. Մ.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԵՍ ԻՆՏԻ ՀԵՏ (բանաստեղծութիւններ եւ արձակ էջեր), Արաբի Պապիկեան, Փարիզ, 1969:

ՎԵՐՋԱԼՈՅՍԻ ՏԱԳԵՐ (պոեմներ եւ բանաստեղծութիւններ) Արմէն Սեւան, Պուէնոս Այրէս, 1972:

ԱՄԵՐԻԿԱ (արձակ էջեր) Շահպան, Պէյրութ, 1972:



باكين
مجلة شهرية ، أدبية وفنية علمية
مدير المسؤول
السيد اوتين كارنيك قزنجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ

ԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՁԱՅՍԻ

- ՎԱՐԻՔ ԽՄԱԳԻՐ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- ԽՄԱԳԻՐ
- Պ. ՍՆԱԳԵԱՆ

- ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ
- ԱՆԴԱՄԵՐ
- Յ. ԳԻՂԱՐՅ
- Տ. ՈՍԿՈՒՆԻ
- Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
- Ն. ՊԱՐԹԵԱՆԵԱՆ
- Ժ. ԱԹԱՐԻԱՆ

ՀԻՍՆԱԳԻՐ ԱՆԴԱՄԵՐԵՆ
† ԵՒ ՊՅՅԱՋԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI
Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

ՏՊ. ՀԱՄԱՐԳԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱՃՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ	25 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆ	10 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	2-50 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ:-
G. SASSOUNI
Rue Sélim Boustani,
Beyrouth - Liban